1) Որքա՞ն է մեքենայի ՕԳԳ-ն՝ տոկոսներով:
2) Որքա՞ն է ջեռուցչի ջերմաստիճանը (Կելվինի սանդղակով):

1114. Միմյանց են խառնել միևնույն ջերմաստիճանի օդի երկու բաժիններ: Նրանցից մեկի հարաբերական խոնավությունը 20 % էր, ծավալը՝ 1 մ^3, իսկ մյուսինը՝ համապատասխանաբար՝ 30 % և 4 մ^3: Խառնուրդի ծավալը 5 մ^3 է:

1) Մեծ ծավալի ջրի գոլորշու զանգվածը քանի՞ անգամ էր մեծ փոքր ծավալի գոլորշու զանգվածից:
2) Որքա՞ն է խառնուրդի հարաբերական խոնավությունը:

1115. 12 ^{0}C ջերմաստիճանի օդի հարաբերական խոնավությունը 75 % է: Օդում գոլորշու քանակությունը մնում է անփոփոխ, իսկ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 15 ^{0}C: Ջրի հագեցած գոլորշու ճնշումը 12 ^{0}C ջերմաստիճանում 1,4 կՊա է, իսկ 15 ^{0}C ջերմաստիճանում՝ 1,75 կՊա:

1) Որքա՞ն է օդում ջրի գոլորշու մասնական ճնշումը 12 ^{0}C-ում:
2) Որքանո՞վ է նվազում օդի հարաբերական խոնավությունը ջերմաստիճանը բարձրանալիս:

1116. Մաղով, որի ցանցը պատրաստված է 1 մմ տրամագծով կլոր անցքերով և ջուրը թրջող թաղանթից, ջուր են տեղափոխում: Մաղի անցքերի միջև հեռավորությունը շատ մեծ է անցքի տրամագծից: Ջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,07 Ն/մ է, խտությունը՝ 1000 կգ/մ^3:

1) Որքա՞ն է մաղից թափվող ջրի կաթիլներից յուրաքանչյուրի զանգվածը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:
2) Ի՞նչ առավելագույն հաստությամբ ջրի շերտ կմնա մաղում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1117. 3 մ երկարությամբ և 1 մմ^2 հատույթի մակերեսով պողպատե լարի ծայրերին կիրառված են ձգող ուժեր՝ յուրաքանչյուրը 200 Ն: Պողպատի առաձգականության գործակիցն ընդունել $2\cdot10^{11}$ Պա:

1) Որքա՞ն է մեխանիկական լարումը պողպատե լարում: Պատասխանը բազմապատկել 10^{-8}-ով:
2) Որքա՞ն է պողպատե լարի բացարձակ երկարացումը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

www.atcam

8.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1118. Որոշակի պրոցեսում միատոմ իդեալական գազի ճնշումը փոխվում է բացարձակ ջերմաստիճանի քառակուսուն համեմատական: Երբ գազի ծավալն աճում է 20 լ-ից մինչև 60 լ, նրա ներքին էներգիան փոքրանում է 30 Ջ-ով:

1) Քանի՞ անգամ է նվազում գազի բացարձակ ջերմաստիճանն այդ դեպքում:
2) Քանի՞ անգամ է նվազում գազի ճնշումն այդ դեպքում:
3) Որքա՞ն է գազի ճնշումը, երբ նրա ծավալը 20 լ է:

1119. 10 կգ զանգված ունեցող մարմինն առանց սկզբնական արագության ընկավ 25 մ բարձրությունից: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան գետին հասնելիս:
2) Որքանո՞վ կմեծանա մարմնի ներքին էներգիան գետնին հարվածելիս, եթե մարմնի տաքացման համար ծախսվել է նրա կինետիկ էներգիայի 30 %-ը:
3) Որքանո՞վ կբարձրանա մարմնի ջերմաստիճանը, եթե նրա լրիվ մեխանիկական էներգիան փոխարկվի ներքին էներգիայի: Մարմնի տեսակարար ջերմունակությունը 125 Ջ/կգ·Կ է:

1120. Երկու միանման անոթներից մեկի մեջ կա 0,1 կգ 45 ^{0}C ջերմաստիճանի ջուր, մյուսում՝ 0,5 կգ 24 ^{0}C ջերմաստիճանի ջուր: Անոթների մեջ լցնում են միևնույն քանակի -23 ^{0}C ջերմաստիճանի սնդիկ: Ջերմային հավասարակշռություն հաստատվելուց հետո երկու անոթներում էլ ջերմաստիճանը դառնում է 17 ^{0}C: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է, սնդիկինը՝ 140 Ջ/կգ·Կ:

1) Որքա՞ն է անոթներից յուրաքանչյուրի ջերմունակությունը:
2) Որքանո՞վ է փոխվել ջրի մեջ լցված սնդիկի ներքին էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{-1}- ով:
3) Որքա՞ն սնդիկ է լցվել անոթներից յուրաքանչյուրի մեջ: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1121. 150 գ ընդհանուր զանգված և 100 ^{0}C ջերմաստիճան ունեցող կապարի և ալյումինի խարտուքը լցրել են 15 ^{0}C ջերմաստիճան և 230 գ զանգվածով ջուր պարունակող կալորաչափի մեջ: Հաստատվել է 20 ^{0}C վերջնական ջերմաստիճան: Կալորաչափի ջերմունակությունը 42 Ջ/Կ է, կապարի տեսակարար ջերմունակությունը՝130 Ջ/կգ·Կ, ալյումինինը՝ 880 Ջ/կգ·Կ, իսկ ջրինը՝ 4200 Ջ/կգ·Կ:

www.ato.am

1) Որքանո՞վ է փոխվել ջրի ներքին էներգիան խարտուքը լցնելուց հետո:
2) Որքանո՞վ է փոխվել կալորաչափի ներքին էներգիան խարտուքը լցնելուց հետո:
3) Որքա՞ն է եղել ալյումինի զանգվածը խարտուքում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1122. Սպիրտի 5 կգ զանգվածով ջրային լուծույթը 10 ^{0}C ջերմաստիճանից մինչև 20 ^{0}C ջերմաստիճանը տաքացնելու համար հաղորդել են 174 կՋ ջերմաքանակ: Սպիրտի տեսակարար ջերմունակությունը 2400 Ջ/կգ·Կ է, շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝ $0{,}85\cdot10^6$ Ջ/կգ, իսկ եռման ջերմաստիճանը՝ 80 ^{0}C, ջրինը՝ համապատասխանաբար՝ 4200 Ջ/կգ·Կ, $2{,}3\cdot10^6$ Ջ/կգ, 100 ^{0}C:

1) Որքա՞ն է լուծույթի տեսակարար ջերմունակությունը:
2) Քանի՞ կիլոգրամ սպիրտ կա խառնուրդում:
3) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ 10 ^{0}C ջերմաստիճանի լուծույթն ամբողջությամբ գոլորշու փոխարկելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:

1123. Վառարանի վրա տաքացնում են -20 ^{0}C ջերմաստիճանի 5 կգ սառույց: Սառցի հալման ջերմաստիճանը 0 ^{0}C է, տեսակարար ջերմունակությունը՝ 2100 Ջ/կգ·Կ, հալման տեսակարար ջերմությունը՝ 330 կՋ/կգ, իսկ ջրի տեսակարար ջերմունակությունը ՝ 4200 Ջ/կգ·Կ:

1) Ի՞նչ ջերմաքանակ պետք է ստանա սառույցը, որպեսզի տաքանա մինչև հալման ջերմաստիճանը: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
2) Ի՞նչ նվազագույն ջերմաքանակ պետք է ստանա –20 ^{0}C ջերմաստիճանի սառույցը, որպեսզի այն ամբողջությամբ հալվի: Պատասխանը բազմապատկել 10^{-4} – ով:
3) Ի՞նչ ջերմաքանակ պետք է ստանա –20 ^{0}C ջերմաստիճանի սառույցը, որպեսզի այն ամբողջությամբ հալվի և ստացված ջուրը տաքանա մինչև 15 ^{0}C: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:

1124. Անհրաժեշտ է -15 ^{0}C ջերմաստիճանի 0,02 կգ զանգվածով սառույցը վերածել 100 ^{0}C ջերմաստիճանի գոլորշու: Սառցի հալման ջերմաստիճանը 0 ^{0}C է, տեսակարար ջերմունակությունը՝ 2100 Ջ/կգ·Կ, հալման տեսակարար ջերմությունը՝ 330 կՋ/կգ, ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Ջ/կգ·Կ, եռման ջերմաստիճանը 100 ^{0}C, իսկ շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝ $2{,}3\cdot10^6$ Ջ/կգ:

www.atc.am

1) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է սառույցը մինչև հալման ջերմաստիճան տաքացնելու համար:
2) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է եռման ջերմաստիճանում ջուրը գոլորշու փոխարկելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-1}-ով:
3) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է ամբողջ պրոցեսն իրականացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-1}- ով:

1125. 29-րդ նկարում պատկերված է միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխության պրոցեսը նկարագրող դիագրամը, որտեղ $P_0 = 0{,}2$ ՄՊա, $V_0 = 1$ լ:



Նկ. 29

1) Ի՞նչ աշխատանք է կատարել գազն այդ պրոցեսի ընթացքում:
2) Որքա՞ն է գազի ներքին էներգիայի փոփոխությունը:
3) Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:

1126. 2 մոլ իդեալական գազը կատարում է աշխատանք երկու իզոխորից և երկու իզոբարից բաղկացած փակ ցիկլով (նկ. 30): 1 վիճակում գազի ջերմաստիճանը $T_1 = 300$ Կ է, 2 և 4 վիճակներում՝ $T_2 = T_4 = 600$ Կ:



Նկ. 30

1) Որքա՞ն է գազի ջերմաստիճանը 3 վիճակում:
2) Որքա՞ն աշխատանք է կատարում գազն իզոբար ընդարձակման ընթացքում:
3) Որքա՞ն աշխատանք է կատարում գազը մեկ ցիկլի ընթացքում:

1127. 83 մ^3 ծավալով սենյակում ջերմաստիճանը 17 ^{0}C-ից բարձրացել է մինչև 21 ^{0}C, որի հետևանքով սենյակի հարաբերական խոնավությունը փոխվել է 43,5 %-ից մինչև 58,8 %: Ջրի հագեցած գոլորշու ճնշումը 17 ^{0}C ջերմաստիճանում 1,94 կՊա է, իսկ 21 ^{0}C ջերմաստիճանում՝ 2,49 կՊա: Ջրի մոլային զանգվածը $18\cdot10^{-3}$ կգ/մոլ է:

1) Որքա՞ն էր ջրի գոլորշու մասնական ճնշումը 17 ^{0}C-ում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

www.atc.am

2) Որքա՞նով է փոխվել գոլորշու քանակը սենյակում (արտահայտված մոլերով): Պատասխանը բազմապատկել 10-ով:

3) Որքանո՞վ է աճել ջրի գոլորշու զանգվածը սենյակում: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1128. 31-րդ նկարում պատկերված է միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխությունը նկարագրող դիագրամը: Իզոխոր սառեցման ժամանակ գազի ճնշումը փոքրանում է երեք անգամ, այնուհետև 2 վիճակից գազն իզոբար սեղմվում է մինչև 3 վիճակը, որից հետո վերադարձն սկզբնական վիճակին կատարվում է այնպիսի պրոցեսով, որ գազի ճնշումը ծավալից կախված աճում է գծային օրենքով:



Նկ. 31

1) Քանի՞ անգամ է 1 վիճակում գազի ջերմաստիճանը մեծ 3 վիճակում գազի ջերմաստիճանից:

2) Որքա՞ն է 3 վիճակից 1 վիճակին անցման ժամանակ գազի կատարած աշխատանքի և իզոբար սեղմման ժամանակ գազի կատարած աշխատանքի հարաբերության մոդուլը:

3) Մեկ ցիկլի ընթացքում գազին հաղորդած ջերմաքանակը քանի՞ անգամ է մեծ գազի կատարած աշխատանքից:

1129. Ջերմամեկուսիչ պատերով երկու ծայրերից փակ հորիզոնական գլանաձև անոթում առանց շփման սահող բարակ մխոցը $2 \cdot 10^4$ Ն/մ կոշտությամբ զսպանակով ամրացված է անոթի աջ հիմքին: Չդեֆորմացված զսպանակի երկարությունը հավասար է անոթի երկարությանը: Մխոցից ձախ մասում գտնվում է միատոմ գազ, իսկ աջում՝ վակուում է: Սկզբում մխոցի հեռավորությունը անոթի ձախ հիմքից 3 սմ էր: Գազին, շատ դանդաղ, որոշ ջերմաքանակ հաղորդելուց հետո մխոցը տեղաշարժվեց դեպի աջ ևս 3 սմ-ով: Մխոցի հնարավոր տատանումներն անտեսել:

1) Քանի՞ անգամ մեծացավ գազի ջերմաստիճանը նրան ջերմաքանակ հաղորդելուց հետո:

2) Որքանո՞վ մեծացավ գազի ներքին էներգիան ջերմաքանակ հաղորդելուց հետո:

3) Որքա՞ն ջերմաքանակ հաղորդվեց գազին:

www.atc.am

8.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1130. Ջերմամեկուսացված անոթում կա 10 ^{0}C ջերմաստիճանի 0,93 կգ զանգվածով ջուր: Նրա մեջ ավելացնում են –20 ^{0}C-ի 0,6 կգ զանգվածով սառույց: Սառցի հալման ջերմաստիճանը 0 ^{0}C է, տեսակարար ջերմունակությունը՝ 2100 Ջ/կգ.Կ, հալման տեսակարար ջերմությունը՝ 330 կՋ/կգ, իսկ ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Ջ/կգ.Կ:

1) Որքա՞ն ջերմաքանակ է կորցնում ջուրը մինչև 0 ^{0}C հովանալը: Պատասխանը բազմապատկել 10^{-1}-ով:
2) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ ամբողջ սառույցը հալելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
3) Որքա՞ն է անոթում հաստատված ջերմաստիճանը:
4) Որքա՞ն է անոթում ջրի զանգվածը ջերմային հավասարակշռությունից հետո: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1131. 2 մոլ իդեալական գազը կատարում է աշխատանք փակ ցիկլով, որը բաղկացած է իզոբարից և երկու տեղամասերից, որտեղ ճնշումը ծավալից կախված փոխվում է գծային օրենքով (նկ. 32): Իզոբար ընդարձակման ժամանակ գազը կատարում է 9960 Ջ աշխատանք, իսկ նրա ջերմաստիճանը բարձրանում է 4 անգամ: 1 և 3 վիճակներում գազի ջերմաստիճանը նույնն է, իսկ 2 և 3 վիճակները միացնող ուղիղն անցնում է PV դիագրամի սկզբնակետով:



Նկ. 32

1) Որքա՞ն է գազի ջերմաստիճանը 1 վիճակում:
2) Քանի՞ անգամ է գազի ծավալը 3 վիճակում մեծ 1 վիճակի գազի ծավալից:
3) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքի մոդուլը 2 վիճակից 3-ին անցնելիս:
4) Որքա՞ն աշխատանք է կատարում գազը մեկ ցիկլի ընթացքում:

1132. 33-րդ նկարում պատկերված է 1 մոլ միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխությունը նկարագրող դիագրամը: Հայտնի է, որ 1 վիճակում ջերմաստիճանը 200 Կ է, 2-ում՝ 400 Կ, իսկ 3-4 պրոցեսում գազին հա-



Նկ. 33

www.etc.am

ղորդվել է 2000 Ջ ջերմաքանակ:

1) Քանի՞ անգամ է գազի ճնշումը 2 վիճակում մեծ 1 վիճակի գազի ճնշումից:
2) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 1-2 պրոցեսում:
3) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 3-4 պրոցեսում:
4) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը մեկ ցիկլի ընթացքում:

www.atc.am

III. ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ

9. ԷԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿԱ

9.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1133. Ինչպե՞ս են փոխազդում էլեկտրաչեզոք մետաղե ձողը և նրա մոտ տեղադրված լիցքավորված գունդը:



1) Իրար ձգում են:
2) Իրար վանում են:
3) Չեն փոխազդում:
4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

1134. Բացասական լիցքավորված հորիզոնական անվերջ հարթությունից մետաքսե թելով կախված է բացասական լիցքավորված գնդիկը: Նշեք գնդիկի հավասարակշռության պայմանը, եթե mg-ն գնդիկի ծանրության ուժի մոդուլն է, F-ը՝ էլեկտրական փոխազդեցության ուժի մոդուլը, T-ն՝ թելի լարման ուժի մոդուլը:



1) $mg + T - F = 0$:
2) $mg - T + F = 0$:
3) $mg + T + F = 0$:
4) $mg - T - F = 0$:

1135. Բացասական լիցքավորված A ձողը մոտեցնում են չլիցքավորված էլեկտրացույցի B գնդիկին՝ առանց հպելու նրան: Ի՞նչ լիցք կունենան էլեկտրացույցի թերթիկները:



1) Դրական:
2) Բացասական:
3) Չեն լիցքավորվի:
4) Աջ թերթիկը՝ դրական, ձախը՝ բացասական:

1136. Ի՞նչ միավորով է չափվում լիցքը միավորների ՄՀ-ում:

1) 1 Օմ:
2) 1 Վ:
3) 1 Կլ:
4) 1 Ա:

1137. Ո՞րն է ճիշտ պնդումը:

1) Մարմնի լիցքը կընդունի միայն դրական արժեքներ:
2) Էլեկտրական լիցքը կընդունի միայն բացասական արժեքներ:

www.atc.am

3) Մարմնի լիցքը կընդունի միայն ընդհատ դրական կամ բացասական արժեքներ:
4) Մարմնի լիցքը կընդունի ցանկացած դրական կամ բացասական արժեք:

1138. Մարմնում էլեկտրոնների թիվը N_e է, պրոտոններինը՝ N_p, իսկ նեյտրոններինը՝ N_n: Ո՞րն է ճիշտ պնդումը, եթե մարմինը լիցքավորված է դրականապես:

1) $N_e > N_p$:
2) $N_e < N_p$:
3) $N_e = N_p$:
4) $N_e > N_n$:

1139. Ե՞րբ է չեզոք ատոմը դառնում դրական իոն:

1) Երբ կորցնում է էլեկտրոն:
2) Երբ կորցնում է պրոտոն:
3) Երբ կորցնում է նեյտրոն:
4) Երբ նրան միանում է էլեկտրոն:

1140. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Եթե չեզոք ատոմից պոկվի էլեկտրոն, ապա այն …

1) կդառնա բացասական իոն:
2) կդառնա դրական իոն:
3) կմնա էլեկտրաչեզոք:
4) կլիցքավորվի բացասական լիցքով:

1141. Թվարկված ո՞ր մասնիկներն ունեն դրական լիցք:

1) Էլեկտրոնը:
2) Նեյտրոնը:
3) Պրոտոնը:
4) Էլեկտրոնը և պրոտոնը:

1142. Բրդով շփելիս պլաստմասսայե քանոնը լիցքավորվում է բացասական լիցքով: Ինչո՞վ է դա պայմանավորված:

1) Էլեկտրոնները բրդից անցնում են քանոնին:
2) Պրոտոնները քանոնից անցնում են բրդին:
3) Էլեկտրոնները քանոնից անցնում են բրդին:
4) Պրոտոնները բրդից անցնում են քանոնին:

1143. Ապակե ձողը շփեցին մետաքսով: Որքա՞ն է ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը, եթե սկզբում դրանք էլեկտրաչեզոք էին:

1) -1:
3) 0:

www.atc.am

2) 1: 4) 2:

1144. Ո՞րն է էլեկտրական լիցքի պահպանման օրենքի ճիշտ ձևակերպումը:

1) Մարմնի էլեկտրական լիցքը պահպանվում է:
2) Մարմինների փակ համակարգում դրական և բացասական լիցքավորված մասնիկների թիվը մնում է հաստատուն:
3) Փակ համակարգում տեղի ունեցող բոլոր պրոցեսներում համակարգի գումարային լիցքը պահպանվում է:
4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

1145. Եթե +5e լիցք կրող կաթիլը տրոհենք երկու մասի այնպես, որ նրանցից մեկի լիցքը լինի –2e, ապա որքա՞ն կլինի մյուսի լիցքը:

1) +3e: 3) – 4e:
2) – 2e: 4) +7e:

1146. Ո՞րն է Կուլոնի օրենքի ճիշտ ձևակերպումը:

1) Երկու շարժվող լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին և հակադարձ համեմատական նրանց հեռավորության քառակուսուն:
2) Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին, հակադարձ համեմատական նրանց հեռավորության քառակուսուն և ուղղված է լիցքերը միացնող ուղղի երկայնքով:
3) Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին, հակադարձ համեմետական նրանց հեռավորությանը և ուղղված է լիցքերը միացնող ուղղի երկայնքով:
4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

1147. Ո՞ր բանաձևով է արտահայտվում Կուլոնի օրենքը:

1) $F = k\frac{|q|}{r}$: 3) $F = k\frac{|q_1|\cdot|q_2|}{r^2}$:
2) $F = k\frac{|q|}{r^2}$: 4) $F = k\frac{|q_1|\cdot|q_2|}{r}$:

1148. Ի՞նչ թվային արժեք և չափայնություն ունի Կուլոնի օրենքում համեմատականության k գործակիցը:

1) $9\cdot10^{9}$ Նմ ^{2}/Կլ ^{2}: 3) $8{,}85\cdot10^{-12}$ Կլ ^{2}/Նմ ^{2}:
2) $9\cdot10^{9}$ Կլ ^{2}/Նմ ^{2}: 4) $8{,}85\cdot10^{12}$ Նմ ^{2}/Կլ ^{2}:

www.etc.am

1149. **Փորձով չափում են որոշակի հեռավորությամբ մողուլով հավասար երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլը: Առաջին դեպքում այդ լիցքերը նույնանուն են, իսկ երկրորդ դեպքում՝ տարանուն: Ո՞ր դեպքում ուժն ավելի մեծ կլինի:**

1) Առաջին դեպքում:
2) Երկրորդ դեպքում:
3) Երկու դեպքում էլ նույնն է:
4) Ավելի մեծ կլինի, եթե երկու լիցքերն էլ դրական են:

1150. **Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված $+q$ և $+2q$ դրական լիցքերի փոխազդեցության ուժերը:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1151. **Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն F է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից մեկի մոդուլը մեծացնենք 2 անգամ, իսկ մյուսինը փոքրացնենք 4 անգամ:**

1) 0:
2) $\frac{F}{2}$:
3) $2F$:
4) $8F$:

1152. **Երկու միատեսակ անշարժ գնդեր լիցքավորված են նույնանուն լիցքերով, և դրանցից մեկի լիցքի մոդուլը n անգամ մեծ է մյուսինից: Գնդերը հպեցին իրար և հեռացրին նույն հեռավորությամբ: Քանի՞ անգամ մեծացավ լիցքերի փոխազդեցության ուժը:**

1) n անգամ:
2) $n+1$ անգամ:
3) $\frac{(n+1)^2}{4n}$ անգամ:
4) $\frac{(n-1)^2}{4n}$ անգամ:

1153. **Քանի՞ անգամ կփոքրանա երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլը, եթե լիցքերից մեկի մոդուլը նվազի իր արժեքի 1/5-ի չափով:**

1) 5:
3) 1,5:

www.atc.am

2) 2: 4) 1,25:

1154. **Ինչպե՞ս պետք է փոխել երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը, որպեսզի նրանցից յուրաքանչյուրի լիցքը 4 անգամ մեծացնելիս փոխազդեցության ուժը չփոխվի:**

1) Պետք է մեծացնել 2 անգամ:
2) Պետք է մեծացնել 4 անգամ:
3) Պետք է փոքրացնել 2 անգամ:
4) Պետք է փոքրացնել 4 անգամ:

1155. **q կետային դրական լիցքը տեղադրված է տարանուն լիցքավորված գնդերի կենտրոնները միացնող ուղղի վրա: Ի՞նչ ուղղություն ունի այդ լիցքի վրա ազդող կուլոնյան ուժերի համազորը:**

1) $\uparrow$ 3) $\downarrow$
2) $\leftarrow$ 4) $\rightarrow$



1156. **Որքա՞ն է նկարում պատկերված q և $-q$ կետային լիցքերի՝ q_0 կետային լիցքի վրա ազդող ուժերի համազորի մոդուլը:**

1) $F = k\dfrac{q^2}{r^2}$: 3) $F = k\dfrac{2|q||q_0|}{r^2}$:
2) $F = k\dfrac{|q||q_0|}{r^2}$: 4) $F = 0$:



1157. **Վակուումում երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը փոքրացնում են $\sqrt{2}$ անգամ: Ի՞նչ դիէլեկտրական թափանցելիությամբ հեղուկի մեջ պետք է տեղադրել այդ լիցքերը, որպեսզի դրանց փոխազդեցության ուժի մոդուլը մնա անփոփոխ:**

1) 1: 3) 2:
2) $\sqrt{2}/2$: 4) $\sqrt{2}$:

1158. **Ինչպե՞ս է ուղղված հավասարակողմ եռանկյան գագաթին տեղադրված $+q_0$ դրական լիցքի վրա մյուս գագաթներին տեղադրված $+q$ և $-q$ լիցքերի ազդող ուժերի համազորը:**



1) $\rightarrow$ 3) $\downarrow$
2) $\leftarrow$ 4) $\uparrow$

www.atcam

1159. **Նկարում պատկերված $q_1 = |q|$ և $q_2 = -|q|$ լիցքերն ամրացված են A և B կետերում: Լիցքերը միացնող ուղղի ո՞ր տիրույթում $q_3 < 0$ լիցքը կարող է գտնվել հավասարակշռության մեջ:**

1) a տիրույթում:
2) b տիրույթում:
3) c տիրույթում:
4) Ոչ մի տիրույթում:



1160. **Նկարում պատկերված $q_1 = |q|$ և $q_2 = -2|q|$ լիցքերն ամրացված են A և B կետերում: Ո՞ր տիրույթում $q_3 < 0$ լիցքը կարող է լինել հավասարակշռության վիճակում:**

1) a տիրույթում:
2) b տիրույթում:
3) c տիրույթում:
4) Բոլոր տիրույթներում:



1161. **Մի կետից ամրացված նույն երկարության երկու մեկուսիչ թելերից կախված են նույն զանգվածով $q_1 = |q|$ և $q_2 = 2|q|$ լիցքերով երկու գնդիկներ: Համեմատել ուղղաձիգի նկատմամբ թելերի շեղման α և β անկյունները:**



1) $\alpha > \beta$:
2) $\alpha < \beta$:
3) $\alpha = \beta$:
4) $\alpha = \beta = 0$:

1162. **Ո՞րն է նախադասություն ճիշտ շարունակությունը:**
Էլեկտրական դաշտն ազդում է ...

1) միայն անշարժ դրական լիցքի վրա:
2) միայն անշարժ բացասական լիցքի վրա:
3) միայն անշարժ լիցքի վրա:
4) կամայական լիցքի վրա:

1163. **Ո՞րն պնդումն է *սխալ*:**

1) Էլեկտրական դաշտի լարվածության վեկտորի ուղղությունը հակադիր է դաշտի տվյալ կետում տեղադրված կետային բացասական լիցքի վրա ազդող ուժի ուղղությանը:
2) Միավորների ՄՀ-ում լարվածության միավորը 1 Ն/Կլ-ն է:
3) Կետային լիցքի դաշտը անհամասեռ է:

www.atc.am

4) Կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը հակադարձ համեմատական է լիցքից ունեցած հեռավորությանը:

1164. Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը որոշում են փորձնական q լիցքով: Այն տեղադրում են որևէ կետում, չափում նրա վրա ազդող $\vec{F}$ ուժը և լարվածությունը որոշում $\vec{E} = \vec{F}/q$ բանաձևով: Ինչպե՞ս կփոխվի ստացված արդյունքը, եթե նույն պայմաններում փորձնական լիցքը մեծացնենք n անգամ:

1) Չի փոխվի:
2) Կմեծանա n անգամ:
3) Կփոքրանա n անգամ:
4) Կմեծանա n^2 անգամ:

1165. Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական դաշտի լարվածությունը միավորների ՄՀ-ում:

1) 1 Կլ:
2) 1 Վ:
3) 1 Վ/մ:
4) 1 Կլ/մ:

1166. Նկարում պատկերված է ժամանակի ինչ-որ պահին պրոտոնի արագության ուղղությունը համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ինչպե՞ս է ուղղված պրոտոնի արագացումը: Ծանրության ուժն անտեսել:



1) $\vec{E}$ -ի ուղղությամբ:
2) $\vec{E}$ -ին հակառակ ուղղությամբ:
3) $\vec{v}$ -ի ուղղությամբ:
4) $\vec{v}$ -ին հակառակ ուղղությամբ:

1167. Էլեկտրոնը մտնում է համասեռ էլեկտրաստատիկ դաշտ նրա ուժագծերի ուղղությամբ, ինչպես պատկերված է նկարում: Ինչպիսի՞ շարժում կկատարի այն:



1) Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում:
2) Ուղղագիծ հավասարաչափ դանդաղող շարժում:
3) Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական շարժում:
4) Շրջանագծային շարժում:

1168. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերը՝

1) փակ գծեր են:
2) միշտ իրար զուգահեռ գծեր են:
3) սկսվում են դրական լիցքերից, ավարտվում բացասական լիցքերում:
4) սկսում են բացասական լիցքերից, ավարտվում դրական լիցքերում:

www.atc.am

1169. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրաստատիկ դաշտում տեղաղրված լիցքի վրա դաշտի ազդող ուժի մոդուլը, եթե այդ լիցքի մոդուլը մեծացնենք 2 անգամ:

1) Չի փոխվի:
2) Կմեծանա 2 անգամ:
3) Կփոքրանա 2 անգամ:
4) Կմեծանա 4 անգամ:

1170. Որքա՞ն է $\vec{E}$ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում էլեկտրոնի արագացման մոդուլը: Էլեկտրոնի լիցքի մոդուլը e է, զանգվածը՝ m: Ծանրության ուժն անտեսել:

1) $\frac{eE}{m}$:
2) $\frac{E}{em}$:
3) $\frac{eE}{2m}$:
4) $\frac{m}{eE}$:

1171. Լիցքավորված հորիզոնական թիթեղների միջև փոշու լիցքավորված մասնիկը հավասարակշռության վիճակում է: Կխախտվի՞ արդյոք մասնիկի հավասարակշռությունը, եթե թիթեղները մոտեցնենք իրար:



1) Մասնիկը կբարձրանա վերև:
2) Մասնիկը կիջնի ներքև:
3) Մասնիկը կմնա հավասարակշռության վիճակում:
4) Մասնիկը դուրս կգա թիթեղների արանքից:

1172. Պրոտոնը և էլեկտրոնը նույն համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ազդեցությամբ միաժամանակ սկսում են շարժվել դադարի վիճակից: Նրանցից ո՞րը միևնույն ժամանակում ավելի մեծ հեռավորություն կանցնի:

1) Էլեկտրոնը:
2) Պրոտոնը:
3) Երկուսն էլ կանցնեն միևնույն հեռավորությունը:
4) Պատասխանը կախված է դաշտի լարվածության վեկտորի ուղղությունից:

1173. Ո՞րն է վակուումում q_0 մոդուլով անշարժ կետային լիցքի էլեկտրական դաշտի լարվածության E մոդուլի բանաձևը:

1) $E = k\frac{q_0}{r}$:
3) $E = k\frac{q_0^2}{r}$:

www.atc.am

2) $E = k\frac{q_0}{r^2}$: 4) $E = \frac{q_0^2}{r^2}$:

1174. Ո՞ր էլեկտրական դաշտն է կոչվում համասեռ:

1) Հավասար մեծությամբ դրական և բացասական կետային լիցքերի ստեղծած դաշտը:
2) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածությունը ունի նույն ուղղությունը:
3) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածության մոդուլն ունի նույն արժեքը:
4) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածությունն ունի նույն մոդուլը և ուղղությունը:

1175. Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված բացասական կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերը:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1176. Համեմատել նկարում պատկերված էլեկտրաստատիկ դաշտերում A և B, C և D կետերի լարվածությունները:



1) $E_A = E_B$, $E_C = E_D$:
2) $E_A > E_B$, $E_C < E_D$:
3) $E_A < E_B$, $E_C > E_D$:
4) $E_A > E_B$, $E_C > E_D$:

1177. Ինչպե՞ս կփոխվի կետային լիցքի ստեղծած դաշտի լարվածության մոդուլը տարածության որևէ կետում, եթե լիցքի մեծությունը փոքրացվի n անգամ:

1) Կմեծանա n անգամ: 3) Կմեծանա n^2 անգամ:
2) Կփոքրանա n անգամ: 4) Կփոքրանա n^2 անգամ:

www.atc.am

1178. **Նկարում պատկերված է երկու կետային անշարժ լիցքերի արդյունարար դաշտի ուժագծերի մոտավոր տեսքը:**
Ի՞նչ նշանի են այդ լիցքերը:



1) A-ն՝ դրական, B-ն՝ բացասական:
2) A-ն՝ բացասական, B-ն՝ դրական:
3) Երկուսն էլ դրական:
4) Երկուսն էլ բացասական:

1179. **Որքա՞ն է նկարում պատկերված կետային լիցքերի ստեղծած արդյունարար դաշտի լարվածության մոդուլը այդ լիցքերը միացնող հատվածի A միջնակետում:**

1) $E=\dfrac{2kq}{r^2}$:
2) $E=\dfrac{kq}{r^2}$:
3) $E=\dfrac{kq^2}{4r^2}$:
4) $E=0$:



1180. **Երկու տարաձուն կետային լիցքեր գտնվում են մի ուղղի վրա: q դրական լիցքի դաշտի լարվածությունը O կետում 60 Վ/մ է, իսկ $-q$ լիցքինը՝ 40 Վ/մ: Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածությունն այդ կետում, և ինչպե՞ս է այն ուղղված:**

1) 20 Վ/մ, ուղղված է դեպի ձախ:
2) 20 Վ/մ, ուղղված է դեպի աջ:
3) 100 Վ/մ, ուղղված է դեպի ձախ:
4) 100 Վ/մ, ուղղված է դեպի աջ:



1181. **Նկարում պատկերված $q_1=|q|$ և $q_2=-2|q|$ կետային լիցքերն ամրացված են A և B կետերում: Ո՞ր տիրույթում է այն կետը, որտեղ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը զրո է:**

1) a տիրույթում:
2) b տիրույթում:
3) c տիրույթում:
4) Բոլոր տիրույթներում:



1182. **Նկարում պատկերված է $q_1=|q|$ և $q_2=4|q|$ անշարժ կետային լիցքերի դասավորությունը: Ո՞ր կետում արդյունարար դաշտի լարվածության մոդուլը կլինի առավելագույնը:**

1) A կետում:
2) B կետում:



www.atc.am

3) C կետում:
4) Բոլոր կետերում նույնն է:

1183. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված $q_1 = |q|$ և $q_2 = -|q|$ անշարժ կետային լիցքերի արդյունարար դաշտի լարվածության վեկտորը լիցքերից հավասարահեռ A կետում:



1) a:
2) b:
3) c:
4) d:

1184. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված $q_1 = q_2 = -|q|$ կետային անշարժ լիցքերի արդյունարար դաշտի լարվածության վեկտորը լիցքերից հավասարահեռ A կետում:



1) a:
2) b:
3) c:
4) d:

1185. Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը հավասարակողմ եռանկյան O կենտրոնում, եթե յուրաքանչյուր գագաթում տեղադրված q կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը եռանկյան կենտրոնում E է:



1) 0:
2) E:
3) $3E$:
4) $9E$:

1186. Ո՞ր պնդումն է սխալ:

1) Հաղորդիչներն այն նյութերն են, որոնց մեջ կան ազատ լիցքակիրներ:
2) Մետաղներում ազատ լիցքակիրներն էլեկտրոններն են:
3) Դիէլեկտրիկներն այն նյութերն են, որոնց մեջ գործնականում բացակայում են ազատ լիցքակիրները:
4) Հաղորդիչները բաժանվում են երկու դասի՝ բևեռային և ոչ բևեռային:

1187. Իրար հպված a և b էլեկտրաչեզոք հաղորդիչները տեղադրում են դրական կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտում և հեռացնում իրարից: Ինչպիսի՞ լիցք կունենան a և b հաղորդիչները:

1) Երկուսն էլ կմնան էլեկտրաչեզոք:
2) a-ն՝ դրական, b-ն՝ բացասական:
3) b-ն՝ դրական, a-ն՝ բացասական:
4) Երկուսն էլ՝ բացասական:



www.atc.am

1188. **Կամայական ձև ունեցող մետաղե մարմնին հաղորդել են q լիցք: Համեմատեք էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլները մարմնի ներսում՝ A, B և C կետերում:**



1) $E_C < E_B < E_A$:
2) $E_A = E_B = E_C = 0$:
3) $E_A < E_B < E_C$:
4) $E_A = E_B > E_C$:

1189. **Մետաղե գնդային մակերևույթին հաղորդվել է q լիցք: Ի՞նչ առնչություն գոյություն ունի A, B, C և D կետերում դաշտի լարվածության մոդուլների միջև:**



1) $E_A = E_B = E_C = E_D$:
2) $E_A > E_B$, $E_C > E_D$:
3) $E_A < E_B$, $E_C < E_D$:
4) $E_A = E_B = 0$, $E_C > E_D$:

1190. **Նույն շառավղով երկու մետաղե գնդերին, որոնցից մեկը հոծ է, մյուսը՝ սնամեջ, հաղորդում են նույն լիցքը: Ո՞ր գնդի լիցքի մակերևութային խտությունն է ավելի մեծ:**

1) Հոծ:
2) Սնամեջ:
3) Երկու դեպքում էլ նույնն է:
4) Հոծ գնդի լիցքը մակերևույթի վրա չի բաշխվում:

1191. **Ինչպե՞ս է բաշխվում լիցքը կամայական ձև ունեցող հաղորդչում:**

1) Կախված հաղորդչի ձևից՝ կամայական ձևով կբաշխվի նրա ծավալում:
2) Հավասարաչափ բաշխվում է նրա ծավալում:
3) Հավասարաչափ բաշխվում է նրա մակերևույթին:
4) Բաշխվում է միայն արտաքին մակերևույթին:

1192. **Հողակցված սնամեջ մետաղե գնդոլորտի մեջ մտցվում է լիցքավորված գնդիկ, որը չի հպվում գնդոլորտի պատերին: Որո՞նք են գնդոլորտի ներսում և գնդոլորտից դուրս էլեկտրական դաշտի E_1 և E_2 լարվածությունների ճիշտ արժեքները:**

1) $E_1 = E_2 = 0$:
2) $E_1 = 0$, $E_2 \neq 0$:
3) $E_1 \neq 0$, $E_2 = 0$:
4) $E_1 \neq 0$, $E_2 \neq 0$:

1193. **Ի՞նչ չափայնություն ունի նյութի դիէլեկտրական թափանցելիությունը:**

1) Կլ:
2) Ն/Կլ :
3) Ω/Կլ:
4) Չափայնություն չունի:

www.atc.am

1194. Ի՞նչ է ցույց տալիս միջավայրի դիէլեկտրական թափանցելիությունը:

1) Երկու կամայական միջավայրերում էլեկտրական դաշտի լարվածությունների հարաբերությունը:
2) Երկու կամայական միջավայրերում էլեկտրական դաշտի պոտենցիալների հարաբերությունը:
3) Քանի անգամ է միջավայրում էլեկտրական դաշտի լարվածությունը մեծ վակուումում էլեկտրական դաշտի լարվածությունից:
4) Քանի անգամ է վակուումում էլեկտրական դաշտի լարվածությունը մեծ միջավայրում էլեկտրական դաշտի լարվածությունից:

1195. Ինչպե՞ս կշարժվի էլեկտրական երկբևեռը համասեռ էլեկտրաստատիկ դաշտում:



1) Կկատարի համընթաց շարժում դեպի աջ:
2) Կկատարի համընթաց շարժում դեպի ձախ:
3) Կպտտվի ժամսլաքի պտտման ուղղությամբ:
4) Կպտտվի ժամսլաքի պտտման հակառակ ուղղությամբ:

1196. Ո՞ր բանաձևը չի արտահայտում համասեռ էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը:

1) $A = qU$:
2) $A = q(\varphi_1 - \varphi_2)$:
3) $A = qE$:
4) $A = qE\Delta d$:

1197. $\vec{E}$ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում q կետային լիցքը A կետից տեղափոխվում է B կետը՝ անցնելով l ճանապարհ: Ո՞րն է դաշտի կատարած աշխատանքի ճիշտ արտահայտությունը:

1) 0 :
2) qEl :
3) $qEl\cos\alpha$:
4) $qEl\sin\alpha$:



1198. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Լիցքի տեղափոխման ժամանակ էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը կախված է հետագծի ձևից:
2) Եթե էլեկտրաստատիկ դաշտում լիցքը շարժվում է փակ հետագծով, դաշտի կատարած աշխատանքը զրո է:
3) Էլեկտրաստատիկ դաշտը պոտենցիալային է:
4) Էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը հավասար է լիցքի պոտենցիալ էներգիայի փոփոխությանը՝ հակառակ նշանով:

1199. Դրական կետային լիցքը նախ տեղափոխում են համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերի ուղղությամբ, ապա նույն չափով ուժա-

www.ato.am

գծերին ուղղահայաց ուղղությամբ: Ո՞րն է էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքների միջև ճիշտ առնչությունը:

1) $A_1 < A_2$:
2) $A_1 > A_2 = 0$:
3) $A_1 > A_2 \neq 0$:
4) $A_1 = A_2 \neq 0$:

1200. Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական դաշտի պոտենցիալը միավորների ՄՀ-ում:

1) 1 Վ:
2) 1 Կլ/Ն:
3) 1 Վ/մ:
4) 1 Ն/Կլ :

1201. Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Լարվածությունը և պոտենցիալը էլեկտրաստատիկ դաշտի ուժային բնութագրերն են:
2) Լարվածությունը և պոտենցիալը էլեկտրաստատիկ դաշտի էներգիական բնութագրերն են:
3) Լարվածությունը էլեկտրաստատիկ դաշտի ուժային բնութագիրն է, իսկ պոտենցիալը՝ էներգիական:
4) Լարվածությունը էլեկտրաստատիկ դաշտի էներգիական բնութագիրն է, իսկ պոտենցիալը՝ ուժային:

1202. Լիցքավորված մետաղե հոծ գնդի մակերևույթի A կետում էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալը 100 Վ է: Որքա՞ն է պոտենցիալը գնդի O կենտրոնում:



1) 100 Վ:
2) 0:
3) Մեծ է 100 Վ-ից:
4) Փոքր է 100 Վ-ից:

1203. Ո՞ր մեծությունն ունի Ջ/Կլ չափայնություն:

1) Էլեկտրական դաշտի լարվածությունը:
2) Պոտենցիալների տարբերությունը:
3) Լիցքերի փոխազդեցության ուժը:
4) Լիցքերի փոխազդեցության պոտենցիալ էներգիան:

1204. Քանի՞ անգամ կմեծանա պրոտոնի պոտենցիալ էներգիան էլեկտրական դաշտում, եթե այն 5 Վ պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվի 15 Վ պոտենցիալ ունեցող կետը:

1) 10 անգամ:
2) 5 անգամ:
3) 3 անգամ:
4) 20 անգամ:

www.etc.am

1205. Էլեկտրոնը էլեկտրական դաշտի ազդեցությամբ փոքր պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվում է մեծ պոտենցիալ ունեցող կետ: Ինչպե՞ս է փոխվում այդ ընթացքում նրա կինետիկ էներգիան:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Պատասխանը կախված է հետագծի ձևից:

1206. Նկարում պատկերված համասեռ էլեկտրաստատիկ դաշտի A, B, C և D կետերից ո՞ր զույգի միջև է պոտենցիալների տարբերությունը զրո:



1) A և B:
2) A և C:
3) B և D:
4) B և C:

1207. Որքա՞ն է A և B կետերի պոտենցիալների տարբերությունը, եթե A կետի պոտենցիալը 5 Վ է, իսկ B կետինը՝ – 5 Վ:

1) 0:
2) 1 Վ:
3) 5 Վ:
4) 10 Վ:

1208. Համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ուժագծի վրա տրված են A, B և C կետերը, ընդ որում, $AB = BC$: Որքա՞ն է A և B կետերի պոտենցիալների տարբերության հարաբերությունը B և C կետերի պոտենցիալների տարբերությանը:



1) 2:
2) 1:
3) $\frac{1}{2}$:
4) 0:

1209. Լիցքավորված մասնիկը լիցքավորված կոնդենսատորի ներսում շարժվում է A կետից B կետը՝ նկարում պատկերված հետագծերով: Ո՞ր հետագծով շարժվելիս մասնիկի կինետիկ էներգիայի փոփոխությունը կլինի ամենամեծը:



1) a հետագծով:
2) b հետագծով:
3) c հետագծով:
4) Բոլոր հետագծերով շարժվելիս նույնն է:

1210. Նկարում պատկերված $+q$ կետային լիցքի դաշտում q_0 լիցքը առաջին դեպքում տեղափոխվել է A կետից B կետ, երկրորդ դեպքում՝



www.ate.am

A-ից C կետը, իսկ երրորդ դեպքում՝ B-ից C կետը: Համեմատեք այդ դեպքերում դաշտի կատարած A_{AB}, A_{AC} և A_{BC} աշխատանքները:

1) $A_{AB}=0,\ A_{AC}<A_{BC}$:
2) $A_{AB}=0,\ A_{AC}>A_{BC}$:
3) $A_{AB}=A_{AC}=A_{BC}$:
4) $A_{AB}=0,\ A_{AC}=A_{BC}$:

1211. Համասեռ էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալն աճում է աջից դեպի ձախ տեղափոխվելիս: Ինչպե՞ս է ուղղված դաշտի լարվածության վեկտորը:

1) Աջից ձախ:
2) Վերևից ներքև:
3) Ձախից աջ:
4) Ներքևից վերև:

1212. m զանգվածով և q լիցքով գնդիկը միայն էլեկտրաստատիկ ուժի ազդեցությամբ φ պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվում է զրո պոտենցիալ ունեցող կետը: Որքա՞ն է մասնիկի սկզբնական արագությունը, եթե նրա վերջնական արագությունը v_2 է:

1) $\sqrt{v_2^2+\frac{2q\varphi}{m}}$:
2) $\sqrt{v_2^2-\frac{2q\varphi}{m}}$:
3) $\sqrt{v_2^2-\frac{q\varphi}{m}}$:
4) $\sqrt{\frac{2q\varphi}{m}-v_2^2}$:

1213. Առանձնացված հաղորդչի լիցքը մեծացրին 2 անգամ: Ինչպե՞ս կփոխվի նրա պոտենցիալը:

1) Կաճի 2 անգամ:
2) Կնվազի 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կաճի 4 անգամ:

1214. Ֆիզիկական ո՞ր մեծությունն ունի Կլ/Վ չափայնություն:

1) Էլեկտրական դաշտի լարվածությունը:
2) Էլեկտրաունակությունը:
3) Էլեկտրական դաշտի կատարած աշխատանքը:
4) Էլեկտրական լարումը:

1215. Ինչպե՞ս է արտահայտվում էլեկտրաունակության միավորը ՄՀ-ի հիմնական միավորներով:

1) 1 Ա վ:
2) 1 կգ$^{-1}$ մ$^{-2}$ վ^{4} Ա^{2}:
3) 1 կգ մ$^{-2}$ վ$^{-4}$ Ա$^{-2}$:
4) 1 կգ մ^{2} վ$^{-3}$ Ա$^{-1}$:

1216. Երկու գնդերի էլեկտրաունակությունները $C_1=10$ պՖ և $C_2=20$ պՖ են, իսկ դրանց լիցքերը՝ համապատասխանաբար՝ $q_1=10^{-8}$ Կլ և

www.aic.am

$q_2 = 2 \cdot 10^{-8}$ Կլ: Հնարավո՞ր է արդյոք լիցքի տեղափոխություն մի գնդից մյուսը, եթե գնդերը միացնենք հաղորդալարով:

1) Այո, քանի որ $q_2 > q_1$:
2) Այո, քանի որ $C_2 > C_1$:
3) Ոչ, քանի որ գնդերի պոտենցիալները հավասար են:
4) Պատասխանը կախված է գնդերի շառավիղներից:

1217. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաղորդչի էլեկտրաունակության կախումը նրա լիցքի մեծությունից:



1) a:
2) b:
3) c:
4) d:

1218. Ո՞ր բանաձևն է արտահայտում կոնդենսատորի էլեկտրաունակության սահմանումը:

1) $C = \frac{\varepsilon_0 \varepsilon S}{d}$:
2) $C = \frac{\varepsilon_0 S}{d}$:
3) $C = \frac{q}{U}$:
4) Բոլոր բանաձևերը:

1219. Նկարում պատկերված է կոնդենսատորի շրջադիրների միջև լարման՝ կոնդենսատորի լիցքից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է կոնդենսատորի էլեկտրաունակությունը:



1) $2 \cdot 10^{-5}$ Ֆ:
2) $4 \cdot 10^{-2}$ Ֆ:
3) $8 \cdot 10^{-2}$ Ֆ:
4) 50 Ֆ:

1220. Ո՞ր մեծությունից է կախված կոնդենսատորի էլեկտրաունակությունը:

1) Լիցքից:
2) Լարումից:
3) Տեսակարար դիմադրությունից:
4) Չափերից և ձևից:

1221. Ինչպե՞ս կփոխվի հարթ կոնդենսատորի էլեկտրաունակությունը, եթե նրա շրջադիրների միջև լարումը փոքրացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կմեծանա 4 անգամ:

1222. Օդային հարթ կոնդենսատորի շրջադիրները երկու միատեսակ սկավառակներ են: Ինչպե՞ս կփոխվի կոնդենսատորի ունակությունը, եթե

www.atc.am

սկավառակների շառավիղը և նրանց միջև հեռավորությունը մեծացվի 2 անգամ:

1) Կփոքրանա 2 անգամ:
2) Չի փոխվի:
3) Կմեծանա 2 անգամ:
4) Կմեծանա 4 անգամ:

1223. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ կոնդենսատորի լիցքը, եթե նրա շրջադիրների միջև տեղադրենք դիէլեկտրիկ:

1) Կմեծանա:
2) Կփոքրանա:
3) Կմնա նույնը:
4) Կախված դիէլեկտրիկի տեսակից՝ կմեծանա կամ կփոքրանա:

1224. Լիցքավորված և աղբյուրից անջատված օդային կոնդենսատորը խորասուզում են կերոսինի մեջ: Ինչպե՞ս է փոխվում կոնդենսատորի շրջադիրների միջև լարումը:

1) Չի փոխվում:
2) Փոքրանում է:
3) Մեծանում է:
4) Հավասարվում է զրոյի:

1225. Հարթ օդային կոնդենսատորը լիցքավորում են մինչև U լարում և անջատում հոսանքի աղբյուրից: Ինչպե՞ս կփոխվի լարումը, եթե շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք k անգամ:

1) Կմեծանա k անգամ:
2) Կփոքրանա k անգամ:
3) Կմնա նույնը:
4) Կմեծանա k-1 անգամ:

1226. Ի՞նչպես կփոխվի լիցքավորված և աղբյուրից անջատված կոնդենսատորի էլեկտրական դաշտի W էներգիան, U լարումը, q լիցքը և E լարվածությունը, եթե շրջադիրների միջև եղած հեռավորությունը մեծացվի:

1) $\Delta W > 0,\ \Delta U > 0,\ \Delta q = 0,\ \Delta E = 0$:
2) $\Delta W < 0,\ \Delta U > 0,\ \Delta q = 0,\ \Delta E = 0$:
3) $\Delta W > 0,\ \Delta U > 0,\ \Delta q < 0,\ \Delta E < 0$:
4) $\Delta W < 0,\ \Delta U > 0,\ \Delta q > 0,\ \Delta E > 0$:

1227. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի շրջադիրների հեռավորությունը մեծացրին երկու անգամ: Ինչպե՞ս փոխվեց շրջադիրների փոխազդեցության ուժը:

1) Մեծացավ երկու անգամ:
2) Փոքրացավ երկու անգամ:
3) Փոքրացավ չորս անգամ:
4) Մեծացավ չորս անգամ:

www.atc.am

1228. **Հարթ կոնդենսատորի շրջադիրները միացված են գալվանական էլեմենտին: Ինչպե՞ս կփոխվի նրանց ձգողության ուժը, եթե կոնդենսատորը տեղավորենք $\varepsilon = 3$ դիէլեկտրիկ թափանցելիություն ունեցող դիէլեկտրիկ հեղուկի մեջ:**

1) Կփոքրանա 3 անգամ:
2) Կմեծանա 3 անգամ:
3) Կփոքրանա 9 անգամ:
4) Կմեծանա 9 անգամ:

1229. **Ո՞ր գրաֆիկն է արտահայտում էլեկտրական դաշտի էներգիայի ω խտության՝ դաշտի E լարվածությունից կախվածությունը:**



1) a:
2) b:
3) c:
4) d:

1230. **Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրից անջատված հարթ կոնդենսատորի էլեկտրաստատիկ դաշտի էներգիան, եթե նրա շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:**

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմնա նույնը:
4) Կմեծանա 4 անգամ:

1231. **Հոսանքի աղբյուրից անջատված հարթ օդային կոնդենսատորի էներգիան W է: Ի՞նչ աշխատանք պետք է կատարել նրա շրջադիրների միջև հեռավորությունը n անգամ մեծացնելու համար:**

1) nW:
2) $(n-1)W$:
3) $\frac{W}{n}$:
4) $\frac{n-1}{n}W$:

1232. **Առաջին դեպքում կոնդենսատորին հաղորդում են այնքան լիցք, որ նրա լարումն աճում է 0-ից մինչև U, իսկ երկրորդ դեպքում U-ից մինչև $2U$: Ո՞ր դեպքում է կոնդենսատորի էներգիան ավելի շատ մեծանում:**

1) Առաջին դեպքում, 3 անգամ ավելի շատ:
2) Երկրորդ դեպքում, 3 անգամ ավելի շատ:
3) Երկրորդ դեպքում, 2 անգամ ավելի շատ:
4) Երկու դեպքում էլ՝ նույն չափով:

1233. **Նկարում պատկերված լիցքավորված հարթ կոնդենսատորի A կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը E է: Որքա՞ն է լարվածության մոդուլը B, C և D կետերում:**

www.atc.am

1) B-ում՝ $2E$, C-ում՝ E, D-ում՝ E:
2) B-ում՝ E, C-ում՝ E, D-ում՝ 0:
3) B-ում՝ E, C-ում՝ 0, D-ում՝ 0:
4) B-ում՝ $2E$, C-ում՝ 0, D-ում՝ $2E$:



1234. Ո՞րն է լիցքավորված հարթ կոնդենսատորի շրջադիրների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտի էներգիայի խտության բանաձևը:

1) $\omega = \frac{1}{2}\varepsilon\varepsilon_0 E^2$:
2) $\omega = Ed$:
3) $\omega = \frac{CU^2}{2}$:
4) $\omega = qU$:

www.atc.am

9.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1235. Երկու միևնույն չափի մետաղե գնդիկներ ունեն -5 նԿլ և 9 նԿլ լիցքեր: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հպենք իրար և նորից հեռացնենք: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1236. Մետաղե գնդիկը լիցքավորված է $-8\cdot10^{-16}$ Կլ լիցքով: Քանի՞ հավելուրդային էլեկտրոն կա գնդիկի վրա:

1237. Ամպրոպային ամպի երկու կուտակումների միջև հեռավորությունը 10 կմ է: Այդ ամպերի լիցքերը համապատասխանաբար 2 Կլ և 4 Կլ են: Որքա՞ն է այդ ամպերի փոխազդեցության ուժը: Ամպերի չափերը շատ փոքր են նրանց հեռավորության համեմատությամբ:

1238. Ի՞նչ ուժով են փոխազդում միմյանցից $0{,}4\cdot10^{-8}$ մ հեռավորությամբ էլեկտրոնը և պրոտոնը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:

1239. Յուրաքանչյուրը 5,6 մկԿլ լիցք ունեցող երկու գնդեր տեղադրված են որոշակի հեռավորությամբ: Ի՞նչ մեծության դրական լիցք պետք է մի գնդից տեղափոխել մյուսը, որպեսզի նրանց փոխազդեցության ուժը փոքրանա 2 անգամ: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1240. Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլը 20 Ն է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք 2 անգամ:

1241. Քանի՞ անգամ կմեծանա մոդուլով հավասար նույնանուն լիցքերով լիցքավորված երկու գնդիկների էլեկտրական փոխազդեցության ուժը, եթե նրանց հեռավորությունը փոքրացվի երկու անգամ և մեկի լիցքի կեսը տեղափոխվի մյուսի վրա:

1242. Քանի՞ անգամ պետք է մեծացնել երկու հավասար կետային լիցքերից յուրաքանչյուրի մեծությունը, որպեսզի ջրի մեջ սուզելիս նրանց փոխազդեցության ուժը նույն հեռավորության դեպքում լինի այնքան, որքան օդում էր: Ջրի դիէլեկտրական թափանցելիությունը 81 է:

1243. Քանի՞ անգամ կմեծանա երկու կետային լիցքերի էլեկտրական փոխազդեցության ուժը, եթե նրանց միջև հեռավորությունը փոքրացվի 4 անգամ և միաժամանակ նրանք տեղափոխվեն մի միջավայր, որի դիէլեկտրական թափանցելիությունը 2 անգամ մեծ է նախորդինից:

1244. Երկու միատեսակ գնդեր լիցքավորված են նույնանուն լիցքերով և դրանցից մեկի լիցքի մոդուլը 5 անգամ մեծ է մյուսից: Գնդերը հպեցին

www.atc.am

իրար և հեռացրին նույն հեռավորությամբ: Քանի՞ անգամ մեծացավ լիցքերի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1245. Երկու կետային լիցքեր, որոնց հեռավորությունն օդում 0,05 մ է, միմյանց հետ փոխազդում են $1{,}2\cdot10^{-4}$ Ն ուժով: Հեղուկ դիէլեկտրիկում այդ լիցքերի փոխազդեցության ուժը $0{,}15\cdot10^{-4}$ Ն է, երբ նրանք իրարից հեռու են 0,1 մ: Որքա՞ն է հեղուկի դիէլեկտրական թափանցելիությունը:

1246. $2\cdot10^{-5}$ Կլ և $4{,}5\cdot10^{-5}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 10 մ է: Լիցքերը միացնող ուղղի վրա փոքր լիցքից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղավորել կետային լիցքը, որպեսզի այն լինի հավասարակշռության մեջ:

1247. $2\cdot10^{-5}$ Կլ կետային լիցքը $3\cdot10^{5}$ Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում է: Որքա՞ն է այդ լիցքի վրա ազդող ուժը:

1248. $16\cdot10^{-4}$ Կլ կետային լիցքից ի՞նչ հեռավորությամբ կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը կլինի $4\cdot10^{5}$ Ն/Կլ:

1249. $4\cdot10^{3}$ Վ/մ լարվածությամբ արտաքին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում դիէլեկտրիկի կապված լիցքերի դաշտի լարվածությունը $2\cdot10^{3}$ Վ/մ է: Որքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:

1250. 2 մ տրամագիծ ունեցող գնդին հաղորդեցին $3\cdot10^{-8}$ Կլ լիցք: Նրա մակերևույթից ի՞նչ հեռավորության վրա էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը կլինի 30 Ն/Կլ:

1251. Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը նրանից որոշ հեռավորության վրա վակուումում $8{,}1\cdot10^{5}$ Ն/Կլ է, իսկ ջրում այդ լիցքից նույն հեռավորության վրա՝ 10^{4} Ն/Կլ: Որքա՞ն է ջրի դիէլեկտրական թափանցելիությունը:

1252. $4\cdot10^{-9}$ Կլ և $-9\cdot10^{-9}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 0,5 մ է: Լիցքերը միացնող ուղղի վրա դրական լիցքից ի՞նչ հեռավորությամբ կետում էլեկտրական դաշտի լարվածությունը կլինի զրո:

1253. Միատեսակ $-5\cdot10^{-7}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 0,7 մ է: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը լիցքերը միացնող ուղղի միջնակետում:

www.atc.am

1254. Էլեկտրական դաշտի 10^7 Ն/Կլ լարվածության դեպքում օդը դադարում է մեկուսիչ լինելուց, տեղի է ունենում պարպում: Որքա՞ն պետք է լինի մետաղե գնդի շառավղի փոքրագույն արժեքը, որպեսզի հնարավոր լինի նրա վրա կուտակել 1 Կլ լիցք:

1255. Փոշեհատիկը, որն ունի $16\cdot10^{-12}$ Կլ լիցք և $4\cdot10^{-7}$ գ զանգված, ուղղաձիգ վեր ուղղված համասեռ էլեկտրաստատիկ դաշտում հավասարակշռության վիճակում է: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը:

1256. $4\cdot10^3$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում տեղադրում են $27\cdot10^{-10}$ Կլ կետային լիցք: Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածության մոդուլը ուժագծերի հակառակ ուղղությամբ լիցքից 0,09 մ հեռավորությամբ գտնվող A կետում (նկ. 34):



Նկ. 34

1257. 30 սմ տրամագծով մետաղե գնդին հաղորդեցին 16 նԿլ լիցք: Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդի մակերևույթին:

1258. Յուղով լցված անոթը մտցրին համասեռ էլեկտրաստատիկ դաշտ, որի լարվածությունը 750 Վ/մ է: Ինչքա՞ն է դաշտի լարվածությունը յուղում, եթե յուղի դիէլեկտրական թափանցելիությունը 2,5 է:

1259. Կետային լիցքը հեղուկի մեջ է, որի դիէլեկտրական թափանցելիությունը 4 է: Լիցքից ի՞նչ հեռավորության վրա դաշտի լարվածությունը կլինի այնքան, որքան վակուումում 40 սմ հեռավորության վրա: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1260. Լիցքը Երկրի մակերևույթից 1000 Վ պոտենցիալով կետ տեղափոխելիս կատարվել է 10^{-5} Ջ աշխատանք: Որքա՞ն է տեղափոխվող լիցքը: Երկրի պոտենցիալն ընդունել զրո: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1261. Որքա՞ն է A և B կետերի միջև լարումը, եթե նրանց միջև հեռավորությունը 8 սմ է, իսկ AB հատվածը 50 կՎ/մ լարվածությամբ համասեռ դաշտի ուժագծերի հետ կազմում է 60^0 անկյուն (նկ. 35):



Նկ. 35

www.atc.am

1262. Լիցքը համասեռ էլեկտրական դաշտի ուժագծերի ուղղությամբ 5 սմ տեղափոխելիս դաշտը կատարում է 15 Ջ աշխատանք: Ի՞նչ աշխատանք կկատարի այդ դաշտը երկու անգամ ավելի մեծ լիցքն ուժագծերի ուղղությամբ 3 սմ տեղափոխելիս:

1263. Ի՞նչ աշխատանք կկատարի էլեկտրական դաշտը 0,25 Կլ լիցքը 8 Վ պոտենցիալների տարբերություն ունեցող կետերի միջև տեղափոխելիս:

1264. Ի՞նչ արագություն ձեռք կբերի էլեկտրոնը 10^4 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում ուժագծի երկայնքով $4{,}5\cdot10^{-3}$ մ տեղափոխվելիս, եթե նրա սկզբնական արագությունը զրո է: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1265. Որքա՞ն է համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը, եթե նրա ուժագծերի ուղղությամբ պրոտոնը 1 մ տեղափոխելու համար պահանջվում է $2{,}56\cdot10^{-16}$ Ջ աշխատանք:

1266. Երկու լիցքավորված զուգահեռ թիթեղների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտի լարվածությունը 5 կՎ/մ է, իսկ նրանց միջև լարումը՝ 200 Վ: Որքա՞ն է թիթեղների հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1267. $8\cdot10^6$ մ/վ արագությամբ թռչող էլեկտրոնը թափանցում է էլեկտրական դաշտ: Լարվածության գծերի ուղղությամբ շարժվելով երկու կետերի միջև՝ նրա արագությունը փոքրանում է 3 անգամ: Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարբերությունը:

1268. Համասեռ դաշտի լարվածության նույն գծի 40 սմ հեռավորությամբ երկու կետերի միջև լարումը 300 Վ է: Որքա՞ն է դաշտի լարվածությունը:

1269. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի լիցքը 20 մկԿլ է: Որքա՞ն կլինի կոնդենսատորի լիցքը, եթե շրջադիրների նույն հեռավորության դեպքում շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը փոքրացվի 4 անգամ: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1270. Հարթ օդային կոնդենսատորի ունակությունը $3\cdot10^{-6}$ Ֆ է: Որքա՞ն լիցք պետք է հաղորդել կոնդենսատորին, որպեսզի շրջադիրների միջև 3 թափանցելիությամբ դիէլեկտրիկ մտցնելուց հետո նրանց միջև առաջանա 1 Վ լարում: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1271. Որքա՞ն է կոնդենսատորի կուտակած էլեկտրական դաշտի էներգիան, եթե նրա լիցքը 0,04 Կլ է, իսկ շրջադիրների միջև լարումը՝ 100 Վ:

www.atc.am

1272. Հարթ օդային կոնդենսատորի թիթեղների միջև հեռավորությունը 0,5 մմ է, լարումը՝ 10 Վ: Կոնդենսատորն անջատված է աղբյուրից: Որքա՞ն կլինի լարումը, եթե թիթեղների միջև հեռավորությունը հասցվի 5 մմ-ի:

1273. Հոսանքի աղբյուրից անջատված, 4 դիէլեկտրական թափանցելիություն ունեցող հեղուկ դիէլեկտրիկով լցված կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան 20 Ջ է: Որքա՞ն կլինի կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան, եթե հեռացվի հեղուկ դիէլեկտրիկը:

1274. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի թիթեղների փոխազդեցության ուժը 12 Ն է: Որքա՞ն կլինի թիթեղների փոխազդեցության ուժը, եթե դրանց հեռավորությունը մեծացվի երկու անգամ:

1275. Օդային հարթ կոնդենսատորի թիթեղների միջև կարծր դիէլեկտրիկ մտցնելիս կոնդենսատորի լարումը 400 Վ-ից փոքրացավ մինչև 50 Վ: Ինչքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:

1276. Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը, եթե նրան 0,01 Կլ լիցք հաղորդելիս կատարվում է 10 Ջ աշխատանք: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1277. Իմպուլսային ֆոտոբռնկման լամպը սնվում է 300 Վ լարման և 800 մկՖ ունակությամբ կոնդենսատորից: Որքա՞ն է բռնկման էներգիան:

www.atc.am

9.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1278. Ուղղաձիգ ներքև ուղղված $2 \cdot 10^4$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում մեկուսիչ թելից կախված է 0,1 կգ զանգվածով և $2 \cdot 10^{-4}$ Կլ լիցքով գնդիկը:

1) Որքա՞ն է գնդիկի վրա էլեկտրաստատիկ դաշտի ազդող ուժը:
2) Որքա՞ն է թելի լարման ուժը:

1279. Միևնույն նշանի և մեծության երկու կետային լիցքերը միացնող հատվածի միջնակետում տեղադրում են նույն նշանի երկու անգամ մեծ երրորդ լիցքը:

1) Լիցքերից յուրաքանչյուրի վրա երրորդ լիցքի ազդող ուժը քանի՞ անգամ է մեծ միևչև երրորդ լիցքը տեղադրելը լիցքերի փոխազդեցության ուժից:
2) Քանի՞ ագամ մեծացավ լիցքերից յուրաքանչյուրի վրա ազդող ուժը երրորդ լիցքը տեղադրելուց հետո:

1280. Հավասարակողմ եռանկյան գագաթներում միևնույն նշանի լիցքերից յուրաքանչյուրի վրա ազդող համազոր ուժը $\sqrt{3} \cdot 10^{-3}$ Ն է:

1) Որքա՞ն է լիցքերից յուրաքանչյուր զույգի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է եռանկյան կողմի երկարությունը, եթե լիցքերից յուրաքանչյուրը $6 \cdot 10^{-9}$ Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1281. Պրոտոնը $2 \cdot 10^5$ Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում է: Պրոտոնի զանգվածն ընդունել $1{,}6 \cdot 10^{-27}$ կգ:

1) Որքա՞ն է պրոտոնի վրա ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10^{15}-ով:
2) Որքա՞ն է պրոտոնի արագացումն այդ դաշտում: Պատասխանը բազմապատկել 10^{-13}-ով:

1282. Ցողի գնդաձև կաթիլն առաջացել է մառախուղի նույն չափի և նույն լիցքը կրող 216 կաթիլների միացումից:

1) Ցողի կաթիլի շառավիղը քանի՞ անգամ է մեծ մառախուղի յուրաքանչյուր կաթիլի շառավղից:
2) Ցողի կաթիլի մակերևույթի վրա դաշտի լարվածությունը քանի՞ անգամ է մեծ մառախուղի յուրաքանչյուր կաթիլի մակերևույթի վրա դաշտի լարվածությունից:

www.aic.am

1283. Հավասարակողմ եռանկյան AB և AC կողմերը միևնույն լիցքով հավասարաչափ լիցքավորված ձողեր են (նկ. 36): Եռանկյան O կենտրոնում էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը 100 Վ/մ է, իսկ պոտենցիալը՝ 300 Վ:



Նկ. 36

1) Որքա՞ն կլինի լարվածության մոդուլն այդ կետում, եթե ձողերից մեկը հեռացնենք:
2) Որքա՞ն կլինի պոտենցիալն այդ կետում, եթե ձողերից մեկը հեռացնենք:

1284. Առանձնացված 9 մ շառավղով դրականապես լիցքավորված մետաղե գնդի մակերևույթի վրա էլեկտրական դաշտի լարվածությունը 130 Վ/մ է:

1) Որքա՞ն է գնդի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդի կենտրոնից 18 մ հեռավորությամբ կետում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1285. Քառակուսու գագաթներում տեղադրված են 4 կետային լիցքեր՝ $q_1 = -1$ նԿլ, $q_2 = +2$ նԿլ, $q_3 = -3$ նԿլ և $q_4 = +4$ նԿլ (նկ. 37): Քառակուսու անկյունագիծը 20 սմ է:



Նկ. 37

1) Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում:
2) Որքա՞ն կլինի դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում, եթե q_1 և q_3 լիցքերը հեռացնենք:

1286. Երկու միատեսակ՝ -10^{-7} Կլ բացասական լիցքով և $3 \cdot 10^{-4}$ կգ զանգվածով նյութական կետեր պտտվում են 10^{-7} Կլ դրական կետային լիցքի շուրջը՝ դրական լիցքով անցնող 0,2 մ երկարությամբ տրամագծի հակադիր ծայրերում: Ծանրության ուժն անտեսել:

1) Որքա՞ն է բացասական լիցքերի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:
2) Որքա՞ն է բացասական լիցքերի պտտման անկյունային արագությունը:

www.atc.am

1287. **$2 \cdot 10^{-3}$ կգ զանգվածով և $3 \cdot 10^{-8}$ Կլ լիցքով մասնիկի արագությունը էլեկտրաստատիկ դաշտում երկու կետերի միջև տեղափոխվելիս 0,02 մ/վ-ից դարձավ 0,1 մ/վ:**

1) Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրաստատիկ դաշտը մասնիկն այդ կետերի միջև տեղափոխվելիս: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարբերությունը:

1288. **Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի շրջաղիրների հեռավորությունը փոքրացրին 2 անգամ:**

1) Քանի՞ անգամ փոխվեց շրջաղիրների միջև դաշտի լարվածությունը:
2) Քանի՞ անգամ փոխվեց կոնդենսատորի լիցքը:

1289. **20 Վ լարման հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի շրջաղիրների հեռավորությունը 1 սմ-ից դարձրին 2 սմ:**

1) Որքանո՞վ փոքրացավ շրջաղիրների միջև լարվածությունը:
2) Քանի տոկոսով փոքրացավ կոնդենսատորի լիցքը:

www.atc.am

9.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1290. 10^4 Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտի ուժագծերի երկայնքով շարժվում են 3 մ երկարությամբ թելով կապված երկու գնդիկներ: Գնդիկների զանգվածները 20 գ և 30 գ են, իսկ լիցքերը՝ համապատասխանաբար՝ –1 մկԿլ և 4 մկԿլ: Ծանրության ուժն անտեսել:

1) Որքա՞ն է լիցքերի շարժման արագացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է լիցքերի կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
3) Որքա՞ն է լիցքերը միացնող թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1291. 7 գ զանգվածով գնդիկը լիցքավորված է $q_1 = 280$ նԿլ լիցքով և կախված է թելից (նկ. 38): Նրան հակառակ նշանի q_2 լիցք մոտեցնելիս թելը շեղվում է $\alpha = 45^\circ$-ով: Լիցքերը նույն հորիզոնականի վրա են:



Նկ. 38

1) Որքա՞ն է գնդիկների կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է q_2 լիցքի մոդուլը, եթե r = 6 սմ: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
3) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1292. Ուղղաձիգ ներքև ուղղված $8\cdot10^3$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում 16 գ զանգվածով և $4\cdot10^{-6}$ Կլ լիցքով ուղղաձիգ վեր նետված մարմինը 10 վ հետո վերադառնում է նետման կետ: Էլեկտրական դաշտի ուժագծերը համընկնում են Երկրի գրավիտացիոն ուժի ուղղությանը: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:
2) Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը:
3) Ի՞նչ առավելագույն բարձրության կհասնի մարմինը:



Նկ. 39

1293. Էլեկտրական դաշտն առաջացել է արտաքին համասեռ դաշտի և լիցքավորված թիթեղի դաշտի վերադրումից (նկ. 39): Արդյունարար

www.atc.am

դաշտի լարվածությունը թիթեղից աջ $E_1 = 4 \cdot 10^4$ Վ/մ է, իսկ ձախ՝ $E_2 = 2 \cdot 10^4$ Վ/մ:

1) Որքա՞ն է արտաքին դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
2) Որքա՞ն է թիթեղի ստեղծած դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
3) Որքա՞ն է թիթեղի լիցքը, եթե թիթեղի վրա արտաքին դաշտի ազդող ուժը 2 Ն է: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1294. $8 \cdot 10^4$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում ուղղաձիգ առանցքի շուրջը 6 ռադ/վ անկյունային արագությամբ պտտվում է 1 մ երկարությամբ թելից կախված 10 գ զանգվածով և 10^{-6} Կլ լիցքով գնդիկը: Էլեկտրական դաշտի ուժագծերն ուղղված են ծանրության ուժի ուղղությամբ:

1) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է թելի կազմած անկյունն ուղղաձիգի հետ:
3) Որքա՞ն է գնդիկի կինետիկ էներգիան 6 ռադ/վ անկյունային արագությամբ պտտվելիս: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1295. Միմյանցից 8 սմ հեռավորությամբ զուգահեռ դասավորված A և B թիթեղների վրա պահպանվում են համապատասխանաբար +60 և –60 Վ պոտենցիալներ: Նրանց միջև A թիթեղից 2 սմ հեռավորությամբ տեղադրում են C հողակցված մետաղե թիթեղը:

1) Որքա՞ն էր դաշտի լարվածությունը A և B թիթեղների միջև մինչև C թիթեղի տեղադրելը:
2) Որքա՞ն դարձավ դաշտի լարվածությունը A և C թիթեղների միջև:
3) Որքա՞ն դարձավ դաշտի լարվածությունը B և C թիթեղների միջև:

1296. Էլեկտրոնն արագացնող դաշտում տեղափոխվեց 20 Վ պոտենցիալ ունեցող կետից 30 Վ պոտենցիալ ունեցող կետ: Էլեկտրոնի սկզբնական արագությունը զրո է:

1) Որքա՞ն է էլեկտրոնի ձեռք բերած կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{19}-ով:
2) Որքա՞ն է էլեկտրոնի ձեռք բերած արագությունը: Ընդունել՝ $\sqrt{2} = 1{,}41$: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
3) Որքա՞ն է էլեկտրոնի էլեկտրական փոխազդեցության պոտենցիալ էներգիայի փոփոխության մոդուլը: Պատասխանը բազմապատկեք 10^{19}-ով:

www.atc.am

1297. $8\cdot10^{-7}$ Կլ լիցք կրող փոշեհատիկը հորիզոնական դիրքով դասավորված երկու մետաղե թիթեղների մեջտեղում է: Թիթեղների միջև հեռավորությունը 0,01 մ է: Երբ թիթեղների պոտենցիալների տարբերությունը 200 Վ է, փոշեհատիկն ուղղաձիգ ներքև է իջնում 2 մ/վ^2 արագացմամբ: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է թիթեղների միջև դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
2) Որքա՞ն է փոշեհատիկի վրա էլեկտրական դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
3) Որքա՞ն է փոշեհատիկի զանգվածը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1298. Միմյանցից 10^{-2} մ հեռավորությամբ երկու ուղղաձիգ թիթեղների միջև մեկուսիչ թելից կախված է 10^{-4} կգ զանգվածով և 10^{-8} Կլ լիցքով գնդիկը: Երբ թիթեղներին կիրառում են 1000 Վ լարում, գնդիկը թելի հետ շեղվում է:

1) Որքա՞ն է թիթեղների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
2) Որքա՞ն է ուղղաձիգի հետ թելի կազմած անկյունը:
3) Որքա՞ն է թելի լարման ուժը շեղված վիճակում: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1299. 40 գ զանգված և $2\cdot10^{-5}$ Կլ լիցք ունեցող գնդիկը կախված է 0,4 մ երկարությամբ մեկուսիչ թելից և պտտվում է հորիզոնական հարթության մեջ այնպես, որ թելն ուղղաձիգի հետ կազմում է 60^0 անկյուն: Համակարգը ուղղաձիգ վեր ուղղված 10^4 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում է:

1) Ո՞րքան է գնդիկի վրա դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է գնդիկի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1300. Լիցքավորված օդային հարթ կոնդենսատորի շրջաղիրներից յուրաքանչյուրի մակերեսը 20 սմ^2 է, նրանց հեռավորությունը՝ 2 սմ, իսկ նրանց միջև դաշտի լարվածությունը՝ 200 Վ/մ: Կոնդենսատորը տեղադրում են 150 Վ/մ լարվածությամբ արտաքին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում այնպես, որ այդ դաշտի լարվածության վեկտորը

www.etc.am

հակառակ է ուղղված կոնդենսատորի թիթեղների միջև դաշտի լարվածությանը:

1) Որքա՞ն է արտաքին դաշտում տեղադրելուց հետո շրջադիրների միջև դաշտի լարվածությունը:
2) Որքա՞ն կլինի շրջադիրների միջև դաշտի լարվածությունը, եթե շրջադիրների տեղերը փոխվի:
3) Որքա՞ն աշխատանք պետք է կատարել շրջադիրների տեղերը փոխելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{14}-ով:

1301. Ուղղաձիգ դեպի ներքև ուղղված $E = 2 \cdot 10^3$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում $l = 0{,}45$ մ երկարությամբ թելից կախված m = 1 գ զանգվածով գնդիկին հաղորդվել է $q = 5 \cdot 10^{-6}$ Կլ լիցք (նկ. 40): Թելը շեղում են 90^0-ով և բաց թողնում:



Նկ. 40

1) Որքա՞ն է գնդիկի արագությունն այն պահին, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է $\alpha = 60^0$ անկյուն:
2) Որքա՞ն է թելի լարման ուժն այն պահին, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է $\alpha = 60^0$ անկյուն: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է էլեկտրական դաշտի կատարած աշխատանքը, երբ գնդիկն սկզբնական դիրքից տեղափոխվում է մինչև այն դիրքը, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է $\alpha = 60^0$ անկյուն: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:

1302. Մինչև 600 Վ պոտենցիալների տարբերությունը լիցքավորված $2 \cdot 10^{-6}$ Ֆ ունակությամբ կոնդենսատորը միացնում են նույն ունակությունն ունեցող չլիցքավորված կոնդենսատորին:

1) Որքա՞ն է լիցքավորված կոնդենսատորի էներգիան մինչև չլիցքավորվածին միացնելը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն կլինի սկզբում չլիցքավորված կոնդենսատորի թիթեղների միջև պոտենցիալների տարբերությունն այն լիցքավորվածին միացնելուց հետո:
3) Որքա՞ն է կոնդենսատորների համակարգի էլեկտրական դաշտի էներգիայի փոփոխության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1303. 10 պՖ ունակությամբ հաղորդիչն ունի 600 նԿլ լիցք, իսկ նրանից մեծ հեռավորությամբ տեղադրված 30 պՖ ունակությամբ հաղորդիչը՝ –200

www.atc.am

ՆԿ լիցք: Հաղորդիչները միմյանց միացնում են հաղորդալարով, որի ունակությունը կարելի է անտեսել:

1) Որքա՞ն լիցք կմնա առաջին հաղորդչի վրա միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Որքա՞ն լիցք կմնա երկրորդ հաղորդչի վրա միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
3) Որքա՞ն կլինի հաղորդիչների պոտենցիալը միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:

www.atc.am

9.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1304. Կախոցի նույն կետից ամրացված միևնույն երկարությամբ թելերից կախված երկու լիցքավորված գնդիկներ օդից մտցնում են կերոսինի մեջ: Կերոսինի խտությունը 800 կգ/մ^3 է, իսկ դիէլեկտրական թափանցելիությունը՝ 2: Հավասարակշռության վիճակում թելերի կազմած անկյունը օդում և կերոսինում նույնն է:

1) Գնդիկների էլեկտրական փոխազդեցության ուժն օդում քանի՞ անգամ է մեծ դիէլեկտրիկում նրանց էլեկտրական փոխազդեցության ուժից:
2) Գնդիկի ծանրության ուժը քանի՞ անգամ է մեծ նրա վրա ազդող կերոսինի արքիմեդյան ուժից:
3) Որքա՞ն է կերոսինում և օդում թելերի լարման ուժերի հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն է գնդիկների միջին խտությունը:

1305. 10 գ զանգվածով և 1 մկԿլ լիցքով մարմինը նետվել է հորիզոնի նկատմամբ 30^0 անկյան տակ 10 մ/վ սկզբնական արագությամբ: Մարմնի շարժումը տեղի է ունենում գրավիտացիոն և 10^5 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտերում: Վերջինիս ուժագծերն ուղղված են ուղղաձիգ դեպի ներքև:

1) Որքա՞ն է մարմնի արագացումը:
2) Որքա՞ն է թռիչքի տևողությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է թռիչքի հեռահասությունը: Ընդունել՝ $\sqrt{3} = 1{,}8$: Պատասխանը բազմապատկիք 10-ով:
4) Որքա՞ն է թռիչքի առավելագույն բարձրությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1306. 0,1 կգ զանգվածներով A և B գնդիկները լիցքավորված են 10 մկԿլ տարաանուն լիցքերով: A գնդիկը կախված է անշիռ մեկուսիչ 10 Ն/մ կոշտությամբ զսպանակից, որի տակ տեղադրված B գնդիկը (նկ. 41): Սկզբնական դիրքում գնդիկների կուլոնյան ձգողության ուժը 4 անգամ մեծ է գնդիկներից մեկի ծանրության ուժից: Զսպանակի O կախման կետը բարձրացնում են այնքան, որ BC թելի լարումը հավասարվի զրոյի:

1) Որքա՞ն է սկզբնական վիճակում A և B գնդերի հեռավորությունը: Ընդունել՝ $\sqrt{10} = 3{,}2$: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.etc.am

2) Որքա՞ն է սկզբնական վիճակում զսպանակի երկարացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

3) O կետը բարձրացնելուց հետո որքա՞ն է գնդիկների միջև հեռավորությունը: Ընդունել՝ $\sqrt{10} = 3{,}2$: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

4) Որքա՞ն է բարձրացնելուց հետո զսպանակի երկարացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:



Նկ. 41

1307. Ուղղաձիգ վեր ուղղված $9\cdot10^2$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում դադարի վիճակում պահում են 2 մ երկարությամբ մեկուսիչ անկշիռ ձողի ծայրին ամրացված 0,3 կգ զանգվածով և $2\cdot10^{-2}$ Կլ լիցքով գնդիկը: Ձողի ազատ ծայրը հոդակապով ամրացված է հորիզոնական հարթությանը (նկ. 42): Սկզբում ձողն ուղղաձիգի հետ կազմում է $\alpha = 60^0$ անկյուն:

1) Որքա՞ն է էլեկտրական դաշտի կողմից գնդիկի վրա ազդող ուժը:

2) Գնդիկն ազատ արձակելուց հետո, որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրաստատիկ դաշտը, մինչև այն պահը, երբ ձողն անցնում է ուղղաձիգ դիրքով:



Նկ. 42

3) Որքա՞ն է գնդիկի արագությունը ձողն ուղղաձիգ դիրքով անցնելիս:

4) Որքա՞ն է ձողի լարման ուժը, այն ուղղաձիգ դիրքով անցնելիս:

1308. 10^{-8} գ զանգվածով, լիցքավորված փոշեհատիկը գտնվում է հորիզոնական դիրքով դրված թիթեղների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտում: Ներքևի թիթեղը լիցքավորված է մինչև 3 կՎ, իսկ վերևինը՝ –3 կՎ պոտենցիալը: Թիթեղների միջև հեռավորությունը 6 սմ է: Սկզբնական պահին փոշեհատիկը ներքևի թիթեղից բարձր է 1 սմ և 0,1 վ-ի ընթացքում հասնում է վերևի թիթեղին:

1) Որքա՞ն է թիթեղների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:

2) Որքա՞ն է փոշեհատիկի արագացումը:

3) Որքա՞ն է փոշեհատիկի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^{15}-ով:

4) Որքա՞ն պետք է լինի փոշեհատիկի լիցքը, որպեսզի այն գտնվի հավասարակշռության վիճակում: Պատասխանը բազմապատկել 10^{15}-ով:

1309. Ուղղաձիգ ուղղի վրա միմյանցից 0,3 մ հեռավորությամբ ամրացված են երկու միատեսակ $q = 2\cdot10^{-6}$ Կլ կետային լիցքեր (նկ. 43): Այդ լիցքերից հավասարահեռ հորիզոնական հարթության մեջ r = 0,2 մ

www.atc.am

շառավղով շրջանագծով պտտվում է $q_0 = -4 \cdot 10^{-5}$ Կլ կետային լիցքն այնպես, որ շրջանագծի կենտրոնը գտնվում է ամրացված լիցքերը միացնող ուղղի վրա: Ծանրության ուժն անտեսել:



Նկ. 43

1) Որքա՞ն է ամրացված լիցքերից յուրաքանչյուրի ստեղծած էլեկտրական դաշտի լարվածությունը պտտվող լիցքի ուղեծրի վրա: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:
2) Որքա՞ն է ամրացված լիցքերի արդյունարար դաշտի լարվածությունը պտտվող լիցքի ուղեծրի վրա: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
3) Որքա՞ն է պտտվող լիցքի անկյունային արագությունը, եթե նրա զանգվածը 6,4 գ է:
4) Քանի՞ անգամ պետք է մեծացնել պտտվող լիցքի մեծությունը, որպեսզի նույն ուղեծրով պտտվելիս անկյունային արագությունը մեծանա 3 անգամ:

1310. Հարթ օդային կոնդենսատորի շրջաղիրներից յուրաքանչյուրի մակերեսը 0,01 մ^2 է, նրանց միջև հեռավորությունը $3 \cdot 10^{-3}$ մ: Շրջաղիրների միջև տեղադրում են հավասար չափերով տարբեր դիէլեկտրիկներ այնպես, որ շրջաղիրների միջև տարածությունն ամբողջովին լցվում է (նկ. 44): Դիէլեկտրիկների դիէլեկտրական թափանցելիությունները՝ $\varepsilon_1 = 4$, $\varepsilon_2 = 6$:



Նկ. 44

1) Որքա՞ն է կոնդենսատորի ε_1 թափանցելիությամբ կեսի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{12}-ով:
2) Որքա՞ն է կոնդենսատորի ε_2 թափանցելիությամբ կեսի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:
3) Որքա՞ն է ամբողջ կոնդենսատորային համակարգի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:
4) Կոնդենսատորային համակարգի ունակությունը քանի՞ անգամ է մեծ օդային կոնդենսատորի (առանց դիէլեկտրիկների) ունակությունից:

www.atc.am

10. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔ: ՕՀՄ ՕՐԵՆՔԸ ՇՂԹԱՅԻ ՏԵՂԱՍԱՍԻ ՀԱՄԱՐ: ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԶՈՒԳԱՀԵՌ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ

10.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1311. Ինչպե՞ս են մետաղում շարժվում էլեկտրոնները էլեկտրական դաշտի առկայությամբ:

1) Կատարում են անկանոն, քաոսային շարժում:
2) Կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:
3) Ջերմային շարժման հետ մեկտեղ կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:
4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

1312. Էլեկտրական հոսանքի ո՞ր ազդեցությունը միշտ տեղի ունի կամայական միջավայրով անցնելիս:

1) Ջերմային ազդեցությունը:
2) Մագնիսական ազդեցությունը:
3) Քիմիական ազդեցությունը:
4) Թե՛ ջերմային ազդեցությունը, թե՛ մագնիսական:

1313. Ո՞ր ուղղությունն է ընդունված որպես հոսանքի ուղղություն:

1) Դրականապես լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժման ուղղությունը:
2) Բացասականապես լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժման ուղղությունը:
3) Դրականապես լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժման հակառակ ուղղությունը:
4) Բոլոր պատասխանները սխալ են:

1314. Էլեկտրաչեզոք մետաղե հաղորդչում միշտ առկա են ազատ էլեկտրոններ: Ինչո՞ւ այդ դեպքում նրա շուրջը էլեկտրական դաշտ չի նկատվում:

1) Էլեկտրոնների շարժումը քաոսային է:
2) Էլեկտրոնները շատ քիչ են:
3) Էլեկտրաչեզոք մետաղում ազատ էլեկտրոնների և իոնների գումարային լիցքը զրո է:

www.atc.am

4) Էլեկտրական դաշտ ի հայտ չի գալիս, որովհետև հաղորդալարը պատված է մեկուսիչ թաղանթով:

1315. Ո՞ր բանաձևն է արտահայտում հաստատուն հոսանքի ուժի սահմանումը:

1) $I = \frac{U}{R}$:
2) $I = \frac{q}{t}$:
3) $I = \frac{F_{\max}}{Bl}$:
4) $I = \frac{\varepsilon}{R + r}$:

1316. Ո՞ր բանաձևն է արտահայտում I հոսանքի ուժի, հաղորդչի լայնական հատույթի S մակերեսի, նրա մեջ q_0 լիցքով ազատ մասնիկների ուղղորդված շարժման v միջին արագության և n կոնցենտրացիայի միջև կապը:

1) $I = q_0 nv$:
2) $I = q_0 nvS$:
3) $I = q_0 nv^2$:
4) $I = nvS$:

1317. Հաղորդչի ծայրերին կիրառվում է որոշակի լարում: Ինչպե՞ս կփոխվի էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունը, եթե նույն լարումը կիրառենք նույն նյութից պատրաստված, լայնական հատույթի նույն մակերեսով, սակայն ավելի երկար հաղորդչի ծայրերին:

1) Չի փոխվի:
2) Կմեծանա:
3) Կփոքրանա:
4) Կախված հաղորդչի նյութի տեսակից՝ կմեծանա կամ կփոքրանա:

1318. Մետաղական հաղորդալարով հաստատուն հոսանք անցնելիս հոսանքի ո՞ր ազդեցությունն է բացակայում, եթե այն գերհաղորդիչ վիճակում չէ:

1) Ջերմային ազդեցությունը:
2) Քիմիական ազդեցությունը:
3) Մագնիսական ազդեցությունը:
4) Թե՛ ջերմային ազդեցությունը, թե՛ մագնիսական:

1319. Հաղորդչով անցած լիցքի մեծությունը ժամանակի ընթացքում փոխվում է նկարում պատկերված ձևով: Որքա՞ն է



www.atc.am

հոսանքի առավելագույն ուժը ժամանակի 0-8 վ-ում:

1) 0,125 Ա: 3) 2 Ա:

2) 1,5 Ա: 4) 4,5 Ա:

1320. Նկարում պատկերված է հաղորդալարով անցնող հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ի՞նչ քանակությամբ լիցք կանցնի հաղորդչի լայնական հատույթով 0-2 վ-ում:



1) 5 Կլ: 3) 10 Կլ:

2) 7,5 Կլ: 4) 20 Կլ:

1321. Ո՞ր բանաձևով է արտահայտվում Օհմի օրենքը շղթայի տեղամասի համար:

1) $I=\frac{q}{t}$: 3) $I=\frac{U}{R}$:

2) $\varepsilon=\frac{A}{q}$: 4) $I=\frac{\varepsilon}{R+r}$:

1322. Աղյուսակում տրված են հաղորդչում հաստատուն հոսանքի ուժի արժեքները՝ նրա ծայրերին կիրառված լարման տարբեր արժեքների դեպքում: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդչում 3,5 Վ լարման դեպքում:

U (Վ)	0	1	2	3	4
I (Ա)	0	2	4	6	8

1) 2 Ա 3) 7 Ա

2) 6,5 Ա 4) 7,5 Ա

1323. Որքա՞ն է l երկարությամբ համասեռ պղնձալարի դիմադրությունը, եթե նրա լայնական հատույթի մակերեսը S է, իսկ պղնձի տեսակարար դիմադրությունը՝ ρ:

1) $\rho\frac{l}{S}$: 3) $\frac{l}{\rho S}$:

2) $\rho\frac{S}{l}$: 4) $\frac{S}{\rho l}$:

1324. Ի՞նչ չափայնություն ունի տեսակարար դիմադրությունը միավորների ՄՀ-ում:

1) Օմ·մ^2: 3) Օմ·մ:

www.atc.am

2) Ա·Վ·մ: 4) Օմ·մ$^{-2}$:

1325. Ի՞նչ միավորով է չափվում նյութի տեսակարար դիմադրությունը:

1) 1 Օմ: 3) 1 Վ/Ա:

2) 1 Օմ·մ: 4) 1 Օմ·մ^2:

1326. Ինչի՞ց է կախված հաղորդչի դիմադրությունը:

1) Հոսանքի ուժից:
2) Լարումից:
3) Հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ից:
4) Նրա չափերից, նյութի տեսակից և ջերմաստիճանից:

1327. Միևնույն նյութից և միևնույն լայնական հատույթի մակերես ունեցող երկու հաղորդիչներ ունեն տարբեր l_1 և l_2 երկարություններ: Ո՞րն է նրանց R_1 և R_2 դիմադրությունների միջև ճիշտ հարաբերակցությունը:

1) $R_1 = R_2$: 3) $\frac{R_1}{R_2} = \frac{l_2}{l_1}$:

2) $\frac{R_1}{R_2} = \frac{l_1}{l_2}$: 4) $R_1 R_2 = l_1 l_2$:

1328. Որքա՞ն է նույն նյութից պատրաստված, նույն երկարությամբ երկու գլանաձև հաղորդիչների R_1 և R_2 դիմադրությունների հարաբերությունը, եթե առաջինի լայնական հատույթի մակերեսը երկու անգամ մեծ է երկրորդինից:

1) $\frac{R_1}{R_2} = \frac{1}{2}$: 3) $\frac{R_1}{R_2} = 2$:

2) $\frac{R_1}{R_2} = 4$: 4) $\frac{R_1}{R_2} = \frac{1}{4}$:

1329. Նկարում պատկերված հաղորդալարերը պատրաստված են նույն նյութից: Ո՞ր զույգը պետք է վերցնել, որ փորձով հայտնաբերվի դիմադրության կախումը հաղորդչի լայնական հատույթի մակերեսից:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1330. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը, եթե երկաթե հաղորդալարը փոխարինենք նույն չափեր ունեցող պղնձե հաղորդալարով: Լարումը երկու

www.aic.am

դեպքում էլ նույնն է: Երկաթի տեսակարար դիմադրությունը 7 անգամ մեծ է պղնձի տեսակարար դիմադրությունից:

1) Կփոքրանա 7 անգամ:
2) Կմեծանա 7 անգամ:
3) Կփոքրանա 49 անգամ:
4) Կմեծանա 49 անգամ:

1331. Մետաղե հաղորդչի ծայրերին կիրառենք հաստատուն լարում և այն տաքացնենք: Տաքացմանը զուգընթաց ինչպե՞ս կփոխվի նրա միջով անցնող հոսանքի ուժը:

1) Կաճի:
2) Կնվազի:
3) Չի փոխվի:
4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

1332. Ինչպե՞ս կփոխվի գլանաձև համասեռ հաղորդչի դիմադրությունը, եթե նրա լայնական հատույթի մակերեսը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 4 անգամ:

1333. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Վոլտաչափի դիմադրությունը պետք է շատ մեծ լինի այն տեղամասի դիմադրությունից, որին միացված է:
2) Վոլտաչափը միացնում են շղթայի տեղամասին հաջորդաբար:
3) Վոլտաչափը միացնում են շղթայի տեղամասին զուգահեռ:
4) Վոլտաչափը նախատեսված է լարում չափելու համար:

1334. R դիմադրության ծայրերում լարումը չափելու համար չորս աշակերտ վոլտաչափը միացրեցին տարբեր ձևերով: Արդյունքները պատկերված են նկարում: Ո՞ր վոլտաչափն է ճիշտ միացված:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

www.ato.am

1335. Հաղորդչի դիմադրությունը կարելի է հաշվել $R = U/I$ բանաձևով: Այս բանաձևի հիման վրա կարելի՞ է արդյոք պնդել, որ հաղորդչի դիմադրությունն այնքան անգամ մեծ է, որքան անգամ մեծ է նրա ծայրերին կիրառված լարումը:

1) Չի կարելի, քանի որ լարումը մեծացնելիս հոսանքի ուժը փոքրանում է:
2) Կարելի է, քանի որ դիմադրությունն ուղիղ համեմատական է կիրառված լարմանը:
3) Չի կարելի, որովհետև քանի անգամ մեծացնում ենք լարումը, նույնքան անգամ մեծանում է հոսանքի ուժը:
4) Կարելի է, քանի որ դիմադրությունը բնութագրում է հաղորդչի՝ նրա միջով անցնող հոսանքին դիմադրելու հատկությունը:

1336. Շղթայում միացված են երեք միատեսակ դիմադրություններ: A_3 ամպերաչափը ցույց է տալիս I_0 հոսանք: Պատասխանների ո՞ր զույգն է ճիշտ արտահայտում A_1 և A_2 ամպերաչափերի ցուցմունքները: Ամպերաչափերի դիմադրությունները հաշվի չառնել:



1) $\frac{I_0}{2}$, $\frac{I_0}{2}$:
2) $\frac{I_0}{3}$, $\frac{I_0}{3}$:
3) $\frac{2I_0}{3}$, $\frac{I_0}{3}$:
4) I_0, I_0:

1337. Ինչպե՞ս կփոխվեն A_1 և A_2 ամպերաչափերի ցուցմունքները, եթե K բանալին փակենք: Ամպերաչափերի դիմադրությունները հաշվի չառնել:



1) A_1-ինը կաճի, A_2-ինը կնվազի:
2) A_1-ինը կնվազի, A_2-ինը կաճի:
3) Երկուսինն էլ կաճեն:
4) Երկուսինն էլ կնվազեն:

1338. Նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված է U_0 լարում: Որքա՞ն է 2R դիմադրության ծայրերին լարման անկումը:



1) $3U_0$:
2) U_0:
3) $\frac{U_0}{3}$:
4) $\frac{2U_0}{3}$:

www.atc.am

1339. Նկարում պատկերված շղթայի ո՞ր դիմադրությունում է հոսանքի ուժն ամենամեծը:



1) 100 Օմ դիմադրությունում:
2) 50 Օմ դիմադրությունում:
3) 60 Օմ դիմադրությունում:
4) Բոլոր դիմադրություններում հոսանքի ուժը նույնն է:

1340. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը հաղորդչում, եթե անփոփոխ պահելով նրա ծայրերին կիրառված լարումը և լայնական հատույթի մակերեսը, երկարությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 4 անգամ:

1341. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը հաղորդչում, եթե անփոփոխ լարման դեպքում հաղորդչի տրամագիծը և երկարությունը մեծացնենք 2 անգամ:

1) Չի փոխվի:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կփոքրանա 4 անգամ:
4) Կմեծանա 2 անգամ:

1342. Նկարում պատկերված են հոսանքի ուժի՝ լարումից կախման գրաֆիկները R_1 և R_2 դիմադրություններ ունեցող երկու հաղորդիչների համար: Ո՞րն է այդ դիմադրությունների միջև ճիշտ առնչությունը:



1) $R_1 > R_2$:
2) $R_1 < R_2$:
3) $R_1 = R_2$:
4) Գրաֆիկներից եզրակացություն անել հնարավոր չէ:

1343. Ինչպե՞ս կփոխվեն շղթայում միացված ամպերաչափի և վոլտաչափի ցուցմունքները, եթե ռեոստատի սողնակը տեղափոխենք դեպի ներքև: Չափիչ սարքերը համարել իդեալական:



1) Վոլտաչափինը կաճի, ամպերաչափինը կնվազի:
2) Վոլտաչափինը կնվազի, ամպերաչափինը կաճի:
3) Վոլտաչափինը չի փոխվի, ամպերաչափինը կաճի:
4) Երկուսինն էլ կնվազեն:

www.ato.am

1344. Աշակերտը փորձով ստուգում է այն պնդումը, որ սարքով անցնող հոսանքի ուժն ուղիղ համեմատական է նրա ծայրերին կիրառված լարմանը: Նկարում պատկերված են փորձի տվյալների հիման վրա նրա կառուցած համապատասխան գրաֆիկները A և B սարքերի համար: Ո՞ր սարքի համար է ճիշտ վերը նշված պնդումը:



1) Միայն A սարքի:
2) Միայն B սարքի:
3) Երկու սարքերի համար:
4) Ոչ մեկի:

1345. Ո՞րն է նախադասության ոչ ճիշտ շարունակությունը:

Հաղորդիչների հաջորդական միացման դեպքում…

1) շղթայի տեղամասը ճյուղավորումներ չունի:
2) բոլոր հաղորդիչներում հոսանքի ուժը նույնն է:
3) ամբողջ տեղամասի լարումը հավասար է առանձին հաղորդիչների լարումների գումարին:
4) հաջորդաբար միացված տեղամասերում լարումները հակադարձ համեմատական են այդ տեղամասերի դիմադրություններին:

1346. Ինչպե՞ս են հարաբերում նկարում պատկերված շղթայում R_1 և R_2 դիմադրություններով անցնող I_1 և I_2 հոսանքները:

1) $\frac{I_1}{I_2}=\frac{R_1}{R_2}$:
2) $\frac{I_1}{I_2}=\frac{R_2}{R_1}$:
3) $\frac{I_1}{I_2}=\left(\frac{R_1}{R_2}\right)^2$:
4) $\frac{I_1}{I_2}=1$:



1347. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 3R:
2) R/3:
3) 2R/3:
4) 3R/2:

1348. Ո՞րն է շղթայում միացված V_1 և V_2 իդեալական վոլտաչափերի U_1 և U_2 ցուցմունքների ճիշտ առնչությունը:



www.atc.am

1) $U_1 = \frac{U_2}{4}$:

2) $U_1 = \frac{U_2}{2}$:

3) $U_1 = 2U_2$:

4) $U_1 = 4U_2$:

1349. Ո՞րն է նախադասության ոչ ճիշտ շարունակությունը:
Հաղորդիչների զուգահեռ միացման դեպքում…

1) հոսանքի ուժը շղթայի չճյուղավորված մասում հավասար է առանձին ճյուղերով անցնող հոսանքի ուժերի գումարին:
2) լարումը նրանց ծայրերում նույնն է:
3) ամբողջ տեղամասի դիմադրությունը հավասար է առանձին հաղորդիչների դիմադրությունների գումարին:
4) զուգահեռ միացված տեղամասերում հոսանքի ուժերը հակադարձ համեմատական են այդ տեղամասերի դիմադրություններին:

1350. Ո՞ր բանաձևով է որոշվում R_1 և R_2 դիմադրություններով երկու հաղորդիչների զուգահեռ միացման ընդհանուր դիմադրությունը:

1) $R_1 + R_2$:

2) $\frac{1}{R_1} + \frac{1}{R_2}$:

3) $\frac{R_1 + R_2}{R_1 R_2}$:

4) $\frac{R_1 R_2}{R_1 + R_2}$:

1351. 2 Օմ և 6 Օմ դիմադրություններով երկու հաղորդալարեր միացված են նկարում պատկերված ձևով: Որքա՞ն է ab տեղամասի ընդհանուր դիմադրությունը:



1) 12 Օմ:
2) 8 Օմ:
3) 4 Օմ:
4) 1,5 Օմ:

1352. Ո՞ր շղթաներում են լամպերը միացված զուգահեռ:



1) ա և դ շղթաներում:
2) Միայն բ շղթայում:
3) բ և գ շղթաներում:
4) ա, բ և գ շղթաներում:

www.atc.am

1353. Շղթայի չճյուղավորված տեղամասով անցնում է I=10 Ա հաստատուն հոսանք: Ի՞նչ է ցույց տալիս ամպերաչափը: Ամպերաչափի դիմադրությունն անտեսել:



1) 10 Ա:
2) 5 Ա:
3) 2,5 Ա:
4) 20 Ա:

1354. Բնակարանում էլեկտրասպառիչները միացնում են զուգահեռ: Ինչո՞ւ:

1) Նույն լարումն ունենալու նպատակով:
2) Նույն հոսանքի ուժն ունենալու նպատակով:
3) Նույն հզորությունը ծախսելու նպատակով:
4) Քիչ հաղորդալար ծախսելու նպատակով:

1355. Ինչպե՞ս է փոխվում շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը՝ նրան ևս մեկ դիմադրություն զուգահեռ միացնելիս:

1) Մեծանում է:
2) Չի փոխվում:
3) Փոքրանում է:
4) Հնարավոր է՝ մեծանա կամ փոքրանա:

1356. Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) $R = R_1 + R_2 + R_3$:
2) $R = R_2 + \frac{R_1 R_3}{R_1 + R_3}$:
3) $R = R_1 + \frac{R_2 R_3}{R_2 + R_3}$:
4) $R = \frac{R_2 (R_1 + R_3)}{R_1 + R_2 + R_3}$:

1357. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 4 Օմ:
2) 8 Օմ:
3) 12 Օմ:
4) 24 Օմ:

1358. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) R:
2) 1,5R:
3) 2 R:
4) 4 R:

www.ato.am

1359. **Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:**



1) 1 Օմ: 3) 3 Օմ:
2) 2 Օմ: 4) 12 Օմ:

1360. **Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:**



1) 1 Օմ: 3) 4 Օմ:
2) 3 Օմ: 4) 12 Օմ:

1361. **Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը A և B կետերի միջև:**



1) $5R$:
2) $4R$:
3) $2{,}5R$:
4) $0{,}5R$:

1362. **Շղթայում n միատեսակ դիմադրություններ միացված են հաջորդաբար: Ինչպե՞ս կփոխվի շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե այդ հաղորդիչները միացվեն զուգահեռ:**

1) Կմեծանա n անգամ: 3) Կմեծանա n^2 անգամ:
2) Կփոքրանա n անգամ: 4) Կփոքրանա n^2 անգամ:

1363. **Կփոխվե՞ն արդյոք նկարում պատկերված a և b լամպերի պայծառությունները, եթե c լամպն այրվի: Լամպերը միատեսակ են:**



1) Երկուսի պայծառությունն էլ չի փոխվի:
2) Երկուսի պայծառությունն էլ կմեծանա:
3) a-ինը կմեծանա, b-ինը կփոքրանա:
4) a-ինը կփոքրանա, b-ինը կմեծանա:

1364. **Նկարում պատկերված շղթայի R դիմադրությունով անցնում է I հոսանք: Ի՞նչ հոսանք է անցնում $2R$ դիմադրությունով:**



1) $3I$: 3) I:
2) $2I$: 4) $0{,}5I$:

www.atc.am

1365. Նկարում պատկերված շղթայում A_1 ամպերաչափի ցուցմունքը 1 Ա է: Որքա՞ն է A_2 ամպերաչափի ցուցմունքը, եթե $R_1 = R_2 = R_3$: Ամպերաչափերի դիմադրություններն անտեսել:



1) 1 Ա: 3) 2 Ա:
2) 1,5 Ա: 4) 3 Ա:

1366. Ո՞րն է նկարում պատկերված սխեմայում V_1 և V_2 վոլտաչափերի ցուցմունքների ճիշտ հարաբերակցությունը:



1) $U_1 = U_2$:
2) $U_1 = 3U_2$:
3) $U_2 = 3U_1$:
4) Տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

1367. R հաստատուն և r փոփոխական դիմադրությամբ ռեզիստորները միացված են զուգահեռ: Ո՞ր գրաֆիկով է ներկայացված շղթայի ընդհանուր R_0 դիմադրության կախվածությունը r դիմադրությունից:



1) a:
2) b:
3) c:
4) d:

1368. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը: Միացնող հաղորդալարերի դիմադրությունն անտեսել:



1) $3R$: 3) $\frac{R}{3}$:
2) $\frac{3R}{2}$: 4) 0:

1369. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:



1) R: 3) $3R$:
2) $2R$: 4) $5R$:

www.atc.am

1370. Նկարում պատկերված շղթայի տեղամասը կազմված է յուրաքանչյուրը R դիմադրությամբ երեք հաղորդչից: Որքա՞ն է շղթայի տեղամասի լրիվ դիմադրությունը, երբ բանալին փակ է:



1) $R/2$:
2) R:
3) $2R$:
4) $3R$:

1371. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) $\frac{2}{3}R$:
2) $\frac{3}{4}R$:
3) $\frac{4}{5}R$:
4) $\frac{5}{6}R$:

1372. Առաջին հաղորդչով q լիցք տեղափոխվելիս էլեկտրական դաշտը կատարում է A աշխատանք: Երկրորդ հաղորդչով նույն լիցքը տեղափոխվելիս էլեկտրական դաշտը կատարում է 2A աշխատանք: Որքա՞ն է հաղորդիչների ծայրերին կիրառված լարումների հարաբերությունը:

1) $\frac{U_1}{U_2}=4$:
2) $\frac{U_1}{U_2}=2$:
3) $\frac{U_1}{U_2}=\frac{1}{2}$:
4) $\frac{U_1}{U_2}=\frac{1}{4}$:

1373. Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում նույն դիմադրությունում անջատված ջերմաքանակը, եթե հոսանքի ուժը մեծանա 4 անգամ:

1) Կմեծանա 4 անգամ:
2) Կփոքրանա 4 անգամ:
3) Կմեծանա 16 անգամ:
4) Կփոքրանա 16 անգամ:

1374. R դիմադրությամբ հաղորդչի ծայրերին հաստատուն U լարում կիրառելիս նրա միջով անցնում է I հոսանք: Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել հաղորդչում անջատված հզորությունը:

1) Միայն $P=I^2R$ բանաձևով:
2) Միայն $P=\frac{U^2}{R}$ բանաձևով:
3) Միայն $P=IU$ բանաձևով:
4) Բոլոր երեք բանաձևերով:

1375. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրական սալիկի հզորությունը, եթե անփոփոխ լարման դեպքում նրա դիմադրությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:

www.aic.am

2) Կփոքրանա 4 անգամ: 4) Չի փոխվի:

1376. Շիկացման լամպի թելիկը ժամանակի ընթացքում բարակում է: Ինչպե՞ս կփոխվի լամպի սպառած հզորությունը, եթե այն միացված է հաստատուն լարման աղբյուրին:

1) Կնվազի:
2) Կաճի:
3) Չի փոխվի:
4) Սիարժեք պատասխանելու համար խնդրի տվյալները բավարար չեն:

1377. Որքա՞ն է զուգահեռ միացված R_1 և R_2 դիմադրությունների վրա անջատված ընդհանուր հզորությունը, եթե շղթայի ծայրերին կիրառված լարումը U է:

1) $\dfrac{U^2}{R_1+R_2}$: 3) $\dfrac{U^2(R_1+R_2)}{R_1R_2}$:

2) $U^2(R_1+R_2)$: 4) $U^2\dfrac{R_1R_2}{R_1+R_2}$:

1378. Ո՞րն է նկարում պատկերված շղթայի R_1 դիմադրության վրա անջատված հզորության արտահայտությունը:



1) $\dfrac{I^2R_1R_2^2}{(R_1+R_2)^2}$: 3) $\dfrac{I(R_1+R_2)}{R_1R_2}$:

2) $I^2(R_1+R_2)$: 4) $I^2\dfrac{R_1R_2^2}{R_1+R_2}$:

1379. Նկարում պատկերված շղթայում $R_1>R_2>R_3$: Ինչպիսի՞ն է դիմադրությունների վրա անջատված հզորությունների հարաբերակցությունը շղթայով հոսանք անցնելիս:



1) $P_1>P_2>P_3$: 3) $P_3>P_1>P_2$:

2) $P_1<P_2<P_3$: 4) $P_2>P_3>P_1$:

1380. Երկու հաղորդիչներ, որոնցից մեկի դիմադրությունը երկու անգամ մեծ է մյուսի դիմադրությունից, հաջորդաբար միացված են հոսանքի աղբյուրին: Դիմադրությունների վրա անջատված լրիվ հզորությունը

www.atc.am

քանի՞ անգամ է մեծ փոքր դիմադրությամբ հաղորդչի վրա անջատված հզորությունից:

1) 2 անգամ:
2) 3 անգամ:
3) 4 անգամ:
4) Հավասար է:

1381. Տոնածառը զարդարված է հաջորդաբար միացված 12 լամպով: Ինչպե՞ս կփոխվի ծախսվող հզորությունը, եթե 12 լամպի փոխարեն միացնենք 6 լամպ:

1) Կփոքրանա 2 անգամ:
2) Կփոքրանա 4 անգամ:
3) Կմեծանա 2 անգամ:
4) Կմեծանա 4 անգամ:

1382. Սենյակը լուսավորվում է հաջորդաբար միացված 4 լամպով: Ինչպե՞ս կփոխվի էլեկտրաէներգիայի ծախսը, եթե լամպերի թիվը փոքրացնենք մեկով:

1) Կնվազի:
2) Կաճի:
3) Չի փոխվի:
4) Միարժեք պատասխանելու համար տվյալները բավարար չեն:

1383. Ի՞նչ ջերմաքանակ կանջատվի իրար հաջորդաբար միացված երեք $R_1 = R_2 = R_3 = R$ հավասար դիմադրություններով շղթայի տեղամասում Δt ժամանակամիջոցում, եթե շղթայի ծայրերին կիրառված լարումը U է:

1) $\frac{3U^2}{R}\Delta t$:
2) $\frac{U^2}{3R}\Delta t$:
3) $\frac{U^2}{R}\Delta t$:
4) $\frac{3U^2}{R\Delta t}$:

1384. Նույն երկարությամբ և նույն նյութից պատրաստված երկու հաղորդիչներ հաջորդաբար միացված են շղթայում: Առաջին հաղորդչի լայնական հատույթի մակերեսը 3 անգամ մեծ է երկրորդ հաղորդչի լայնական հատույթի մակերեսից: Ինչպե՞ս են հարաբերում այդ հաղորդիչներում միավոր ժամանակում անջատված ջերմաքանակները:

1) $\frac{Q_1}{Q_2} = 9$:
2) $\frac{Q_1}{Q_2} = 3$:
3) $\frac{Q_1}{Q_2} = \frac{\sqrt{3}}{3}$:
4) $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{3}$:

www.atc.am

1385. Նկարում պատկերված շղթան միացված է հաստատուն լարման աղբյուրին: Ո՞ր դիմադրությունում ավելի մեծ ջերմաքանակ կանջատվի:



1) Առաջինում՝ 2 անգամ ավելի մեծ:
2) Երկրորդում՝ 2 անգամ ավելի մեծ:
3) Առաջինում՝ 4 անգամ ավելի մեծ:
4) Երկրորդում՝ 4 անգամ ավելի մեծ:

1386. Հաղորդչի ծայրերին կիրառված U լարման դեպքում t ժամանակամիջոցում անջատվում է Q ջերմաքանակ: Ի՞նչ քանակությամբ լիցք է անցնում հաղորդչի լայնական հատույթով այդ ընթացքում:

1) $\frac{QU}{t}$:
2) $\frac{Q}{Ut}$:
3) $\frac{Qt}{U}$:
4) $\frac{Q}{U}$:

1387. Հավասար դիմադրությամբ երկու ռեզիստորներ միացվում են միևնույն հոսանքի աղբյուրին՝ մի դեպքում հաջորդաբար, մյուս անգամ՝ զուգահեռ: Ինչպե՞ս են հարաբերում միևնույն ժամանակում անջատված ջերմաքանակները հաջորդաբար (Q_1) և զուգահեռ (Q_2) միացման դեպքերում: Աղբյուրի ներքին դիմադրությունն անտեսել:

1) $Q_1 = Q_2$:
2) $\frac{Q_1}{Q_2} = 2$:
3) $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{2}$:
4) $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{4}$:

1388. Հաջորդաբար միացված երեք միատեսակ հաղորդիչներում 9 րոպեում անջատվում է որոշակի ջերմաքանակ: Որքա՞ն ժամանակում նույնքան ջերմաքանակ կանջատվի այդ հաղորդիչների զուգահեռ միացման դեպքում: Երկու դեպքում էլ կիրառված լարումը նույնն է:

1) 1 րոպեում:
2) 1,5 րոպեում:
3) 2 րոպեում:
4) 18 րոպեում:

1389. Ո՞ր պնդումն է սխալ:

1) ԷլՇՈւ-ն թվապես հավասար է փակ շղթայով միավոր լիցքի տեղափոխման համար էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքին:
2) ԷլՇՈւ-ն թվապես հավասար է փակ շղթայով միավոր լիցքի տեղափոխման համար կողմնակի ուժերի կատարած աշխատանքին:

www.atc.am

3) ԷՇՈւ-ն թվապես հավասար է բաց շղթայում հոսանքի աղբյուրի սեղմակների պոտենցիալների տարբերությանը:

4) ԷՇՈւ-ն թվապես հավասար է շղթայի արտաքին և ներքին տեղամասերում լարման անկումների գումարին:

1390. Ո՞րը ՄՀ-ում էլեկտրաշարժ ուժի չափայնություն չէ:

1) Ն: 3) Ջ/Կլ:

2) Վ: 4) կգ մ^2/(Ա վ^3):

1391. Ո՞ր բանաձևով է որոշվում հոսանքի ուժը ε ԷՇՈւ-ով հոսանքի աղբյուրի կարճ միացման դեպքում: R-ը շղթայի արտաքին տեղամասի դիմադրությունն է, իսկ r-ը՝ ներքին դիմադրությունը:

1) $I=\dfrac{\varepsilon}{R+r}$: 3) $I=\dfrac{U}{R}$:

2) $I=\dfrac{\varepsilon}{r}$: 4) $I=\dfrac{U}{r}$:

1392. Փակ շղթան կազմված է իրար հաջորդաբար միացված հոսանքի աղբյուրից, շիկացման թելիկով լամպից և ռեոստատից: Վերջինի սողնակը շարժելիս լամպի պայծառությունը մեծանում է: Ինչպե՞ս է այդ դեպքում փոխվում ռեոստատի դիմադրությունը շղթայում:

1) Մեծանում է:

2) Փոքրանում է:

3) Չի փոխվում:

4) Պատասխանը կախված է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունից:

1393. Նկարում պատկերված շղթան պարունակում է ε ԷՇՈւ ունեցող հոսանքի աղբյուր և R արտաքին դիմադրություն: Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը, եթե շղթայում հոսանքը I է:

1) $\dfrac{\varepsilon}{I}-R$: 3) $\dfrac{\varepsilon}{I}$:

2) $\dfrac{\varepsilon}{I}+R$: 4) $R-\dfrac{\varepsilon}{I}$:



1394. ε ԷՇՈւ և r ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված է R դիմադրությամբ ռեոստատ: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում շղթայի արտաքին տեղամասում U լարման անկման կախումը R դիմադրությունից:



www.atc.am

1) a:
2) b:
3) c:
4) d:

1395. Ո՞ր բանաձևով են որոշում նկարում պատկերված շղթայի ՕԳԳ-ն:



1) $\eta = \frac{R}{r} \cdot 100\%$:
2) $\eta = \frac{r}{R} \cdot 100\%$:
3) $\eta = \frac{r}{R+r} \cdot 100\%$:
4) $\eta = \frac{R}{R+r} \cdot 100\%$:

1396. Ինչպե՞ս կփոխվի ամպերաչափի ցուցմունքը շղթայում, եթե K բանալին փակենք:



1) Չի փոխվի, քանի որ ԷլՇՈւ-ն մնում է նույնը:
2) Կաճի, քանի որ շղթայի դիմադրությունը փոքրանում է:
3) Կնվազի, քանի որ շղթայի դիմադրությունը մեծանում է:
4) Կնվազի, քանի որ շղթայի դիմադրությունը փոքրանում է:

1397. Ի՞նչ է արտահայտում $I\mathcal{E}$ մեծությունը նկարում պատկերված շղթայում:



1) Լարումը՝ հոսանքի աղբյուրի սեղմակներում:
2) Շղթայում անջատված լրիվ հզորությունը:
3) Շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը:
4) Շղթայի ներքին տեղամասում անջատված հզորությունը:

1398. 0,5 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի աղբյուրին միացված է ռեոստատ: Նկարում պատկերված է ռեոստատում հոսանքի ուժի՝ նրա դիմադրությունից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞րքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն:



1) 12 Վ:
2) 6 Վ:
3) 4 Վ:
4) 2 Վ:

www.atc.am

1399. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաստատուն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայում անջատված լրիվ հզորության կախումն արտաքին դիմադրությունից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1400. Նկարում պատկերված էլեկտրական շղթայում ռեոստատի սողնակը տեղափոխում են դեպի աջ: Ինչպե՞ս կփոխվեն այդ դեպքում իդեալական վոլտաչափի և ամպերաչափի ցուցմունքները:

1) Երկու սարքերի ցուցմունքները կաճեն:
2) Երկու սարքերի ցուցմունքները կնվազեն:
3) Ամպերաչափի ցուցմունքը կաճի, իսկ վոլտաչափինը՝ կնվազի:
4) Ամպերաչափի ցուցմունքը կնվազի, իսկ վոլտաչափինը՝ կաճի:



1401. Ի՞նչ լիցքակիրներով է պայմանավորված էլեկտրական հոսանքը մետաղներում:

1) Դրական իոններով:
2) Բացասական իոններով:
3) Ազատ էլեկտրոններով:
4) Պրոտոններով:

1402. Ինչպե՞ս է կախված հոսանքի ուժը մետաղում առկա ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայից:

1) Ուղիղ համեմատական է:
2) Հակադարձ համեմատական է:
3) Կախված է քառակուսային օրենքով:
4) Կախված չէ:

1403. Հոսանքի ո՞ր ազդեցությունն է ի հայտ գալիս մետաղե հաղորդալարով էլեկտրական հոսանք անցնելիս:

1) Միայն ջերմային:
2) Միայն մագնիսական:
3) Մագնիսական և ջերմային:

www.atc.am

4) Մագնիսական, ջերմային և քիմիական:

1404. Հաստատուն լայնական հատույթի մակերեսով համասեռ մետաղե երկար հաղորդիչը միացված է հոսանքի աղբյուրին: Ո՞ր կետում էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունն ունի ավելի փոքր արժեք:



1) ա կետում: 3) գ կետում:
2) բ կետում: 4) Բոլոր կետերում նույնն է:

1405. Ո՞ր լիցքակիրների ուղղորդված շարժմամբ է պայմանավորված էլեկտրական հոսանքը կիսահաղորդիչներում:

1) Միայն էլեկտրոնների: 3) Դրական և բացասական իոնների:
2) Էլեկտրոնների և խոռոչների: 4) Իոնների և էլեկտրոնների:

1406. Ինչպե՞ս են ուղղված խոռոչների և ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունները էլեկտրական դաշտում:

1) Խոռոչներինը՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, էլեկտրոններինը՝ լարվածությանը հակառակ:
2) Էլեկտրոններինը՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, խոռոչներինը՝ լարվածությանը հակառակ:
3) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ:
4) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածությանը հակառակ ուղղությամբ:

1407. Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս կիսահաղորդչի հաղորդականությունը մեծանում է:

1) Մեծանում է ազատ լիցքակիրների ուղղորդված շարժման միջին արագությունը:
2) Մեծանում է ազատ լիցքակիրների ջերմային շարժման միջին արագությունը:
3) Մեծանում է ազատ լիցքակիրների կոնցենտրացիան:
4) Մեծանում է կիսահաղորդչի դիմադրությունը:

1408. Ո՞ր գործոններից է կախված կիսահաղորդչի տեսակարար դիմադրությունը.

ա. լուսավորվածություն,
բ. խառնուրդների առկայություն,
գ. ջերմաստիճան:

1) Միայն ա: 3) Միայն գ:

www.etc.am

2) Միայն բ: 4) ա, բ և գ:

1409. Գերակշռող էլեկտրոնային հաղորդականությամբ օժտված կիսահաղորդիչներն ինչպիսի՞ խառնուրդներ են պարունակում:

1) Դոնորային:
2) Ակցեպտորային:
3) Խառնուրդներ չեն պարունակում:
4) Հավասար կոնցենտրացիաներով դոնորային և ակցեպտորային խառնուրդներ:

1410. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ակցեպտորային խառնուկները …

1) մեծացնում են ազատ էլեկտրոնների թիվը:
2) մեծացնում են խոռոչների թիվը:
3) կիսահաղորդչին հաղորդում են դրական լիցք:
4) կիսահաղորդչին հաղորդում են բացասական լիցք:

1411. Մետաղից (M) և կիսահաղորդչից (K) պատրաստված դիմադրատարերը շղթայում միացված են զուգահեռ: Ցանցի լարման որոշակի արժեքի դեպքում դիմադրատարերին հաջորդաբար միացված ամպերաչափերի ցուցմունքները նույն են: Ինչպե՞ս կփոխվեն ամպերաչափերի ցուցմունքները, եթե ցանցի լարումը մեծացնենք:



1) A_1-ի ցուցմունքը կաճի, A_2-ինը՝ կնվազի:
2) A_1-ի ցուցմունքը կնվազի, A_2-ինը՝ կաճի:
3) Երկու ամպերաչափերի ցուցմունքները կմնան նույնը:
4) Երկու ամպերաչափերն էլ կաճեն:

1412. Ի՞նչ նպատակով են օգտագործում կիսահաղորդչային դիոդը:

1) Հոսանքի ուժի մեծացման համար:
2) Լարման բարձրացման համար:
3) Հաստատուն հոսանքը փոփոխականի փոխակերպելու համար:
4) Փոփոխական հոսանքի ուղղման համար:

1413. Ո՞րն է տրանզիստորի պայմանական նշանը:

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:



www.otc.am

1414. Ո՞ր երևույթն է կոչվում էլեկտրոլիզ:

1) Էլեկտրոլիտում իոնների վերամիավորման երևույթը:
2) Էլեկտրոլիտում իոնների քաոսային շարժման երևույթը:
3) Էլեկտրոլիտում իոնների ուղղորդված շարժման երևույթը:
4) Էլեկտրոլիտում էլեկտրոդների վրա նյութի անջատման երևույթը:

1415. Ո՞ր մասնիկներով է պայմանավորված էլեկտրական հոսանքն էլեկտրոլիտներում:

1) Միայն դրական իոններով:
2) Միայն բացասական իոններով:
3) Միայն էլեկտրոններով:
4) Դրական և բացասական իոններով:

1416. Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:

1) Մեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
2) Աճում է դիսոցման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
3) Աճում է իոնների ջերմային շարժման միջին կինետիկ էներգան:
4) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:

1417. Ո՞ր բանաձևով չի կարելի արտահայտել Ֆարադեյի օրենքն էլեկտրոլիզի համար:

1) $m = kI\Delta t$:
2) $m = \frac{1}{F}\frac{M}{n}I\Delta t$:
3) $m = \frac{M}{nN_{\text{և}}e}I\Delta t$:
4) $m = kI$:

1418. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:
Նյութի էլեկտրաքիմիական համարժեքը…

1) ուղիղ համեմատական է քիմիական համարժեքին:
2) կախված չէ էլեկտրոդի վրա անջատված նյութի զանգվածից և էլեկտրոլիտով անցնող հոսանքի ուժից:
3) ուղիղ համեմատական է մոլային զանգվածին և հակադարձ համեմատական է իոնի լիցքին:
4) ուղիղ համեմատական է իոնի լիցքին և հակադարձ համեմատական է իոնի զանգվածին:

1419. Ո՞ր մեծությունը կարելի է հաշվել՝ իմանալով Ֆարադեյի և Ավոգադրոյի հաստատունները:

www.atc.am

1) Լույսի արագությունը վակուումում:
2) Պլանկի հաստատունը:
3) Տարրական լիցքի մեծությունը:
4) Էլեկտրոնի զանգվածը:

1420. Էլեկտրոդի վրա անջատվեց M մոլային զանգվածին թվապես հավասար զանգվածով նյութ: Ի՞նչ լիցք է անցել էլեկտրոլիտով:

1) $\frac{1}{k}$:
2) $\frac{M}{k}$:
3) $\frac{M}{nk}$:
4) $\frac{M}{n}$:

1421. Նկարում պատկերված է պղնձարջասպի ($CuSO_4$) լուծույթով լցված էլեկտրոլիտային գուռ: Ո՞ր էլեկտրոդի վրա կանջատվի պղինձ:



1) Ա էլեկտրոդի:
2) Կ էլեկտրոդի:
3) Ոչ մեկի:
4) Երկուսի վրա էլ կանջատվի հավասար քանակությամբ:

1422. HCl-ի, $NaCl$-ի և $CuCl_2$-ի ջրային լուծույթներ պարունակող երեք էլեկտրոլիտային գուռեր միացված են հաջորդաբար: Ո՞րն է էլեկտրոլիզի ժամանակ նրանցում անջատված քլորի m_1, m_2 և m_3 զանգվածների միջև ճիշտ առնչությունը:



1) $m_1 = m_2 = m_3$:
2) $m_1 = m_2 + m_3$:
3) $m_1 = m_2 = 0{,}5m_3$:
4) $m_1 = m_2 = 2m_3$:

1423. Ո՞ր երևույթում է առավել ընդգծված արտահայտվում լիցքի ընդհատությունը:

1) Էլեկտրոլիզի:

www.atc.am

2) Ինքնամակածման:
3) Էլեկտրամագնիսական մակածման:
4) Էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման:

1424. Ո՞ր արտահայտությամբ է որոշվում էլեկտրոլիզի ընթացքում էլեկտրոդի վրա անջատված նյութի ատոմների թիվը, եթե e-ն տարրական լիցքն է, n-ը՝ արժեքականությունը, I-ն՝ հոսանքի ուժը, t-ն՝ ժամանակը:

1) $\frac{It}{ne}$:
2) $\frac{en}{It}$:
3) $\frac{Itn}{e}$:
4) $\frac{I}{net}$:

1425. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ինքնուրույն պարպումը գազում այն հոսանքն է, որն ...

1) առաջանում է առանց լարման աղբյուրի:
2) առաջանում է առանց իոնարարի ազդեցության:
3) ընդհատվում է իոնարարը վերացնելիս:
4) առաջանում է բավականաչափ փոքր լարումների դեպքում:

1426. Էլեկտրաստատիկ դաշտի լարվածության ի՞նչ արժեքի դեպքում տեղի կունենա գազի ինքնուրույն պարպում, եթե մոլեկուլների իոնացման էներգիան W է, իսկ ազատ վազքի միջին երկարությունը՝ λ:

1) $\frac{eW}{\lambda}$:
2) $\frac{W}{e\lambda}$:
3) $\frac{\lambda}{eW}$:
4) $eW\lambda$:

1427. Նկարում պատկերված է գազային պարպման վոլտամպերային բնութագիծը: Գրաֆիկի ո՞ր հատվածն է համապատասխանում ինքնուրույն պարպմանը:



1) a-b տեղամասը:
2) b-c տեղամասը:
3) c-d տեղամասը:
4) a-c տեղամասը:

1428. Գազային պարպման վոլտամպերային բնութագծով որոշել լարման փոքրագույն արժեքը, որի դեպքում հոսանքը հագեցում է:



1) 300 Վ:
2) 200 Վ:
3) 100 Վ:
4) 0:

www.afc.am

10.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1429. Որքա՞ն լիցք կանցնի հաղորդալարի հատույթի մակերեսով 20 րոպեում, եթե հոսանքի ուժը շղթայում 0,5 Ա է:

1430. Հաղորդալարի լայնական հատույթով 2 վ-ում անցնում են $5 \cdot 10^{19}$ ազատ էլեկտրոններ: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում:

1431. Հաղորդչում հոսանքի ուժը 10 վ-ում հավասարաչափ աճում է զրոյից մինչև 5 Ա: Որքա՞ն լիցք է անցնում հաղորդչով այդ ընթացքում:

1432. Հաջորդաբար միացված երկու պղնձե հաղորդալարերով հոսանք է անցնում: Երկրորդ հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունը քանի՞ անգամ է մեծ առաջին հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունից, եթե երկրորդ հաղորդալարի տրամագիծը երկու անգամ փոքր է առաջին հաղորդալարի տրամագծից:

1433. Հաղորդչում հոսանքի ուժը 0,5 Ա է: Որքա՞ն կլինի հոսանքի ուժն այդ հաղորդչում, եթե լարումը մեծանա 4 անգամ:

1434. Որքա՞ն է լարումը շղթայի տեղամասում, եթե այդ տեղամասի դիմադրությունը 0,24 կՕմ է, իսկ հոսանքի ուժը՝ 100 մԱ:

1435. Որքա՞ն է 10 Օմ դիմադրությամբ հաղորդչի ծայրերին կիրառված լարումը, եթե 5 րոպեում նրա լայնական հատույթով անցնում է 120 Կլ լիցք:

1436. Որքա՞ն է 10 մ երկարությամբ և 0,5 մմ^2 հատույթի մակերեսով նիկելինե հաղորդալարի դիմադրությունը: Նիկելինի տեսակարար դիմադրությունը $4 \cdot 10^{-7}$ Օմ մ է:

1437. Ի՞նչ լարում է կիրառված 0,8 մմ տրամագծով պղնձե լարի ծայրերին, եթե այն պարունակում է 10^{25} ազատ էլեկտրոններ, որոնց ուղղորդված շարժման միջին արագությունը 3,14 մմ/վ է: Պղնձի տեսակարար դիմադրությունը $1{,}7 \cdot 10^{-8}$ Օմ մ է:

1438. Ալյումինե հաղորդալարի դիմադրությունը 0^0C-ում 40 Օմ է: Որքա՞ն կլինի այդ նույն հաղորդալարի դիմադրությունը $200\ ^0$C-ում: Ալյումինի դիմադրության ջերմաստիճանային գործակիցը 0,0045 աստ$^{-1}$ է:

www.atc.am

1439. Որքա՞ն է պղնձե լերկ հաղորդչի զանգվածը, եթե նրա դիմադրությունը 34 Օմ է, իսկ երկարությունը՝ 10 կմ: Պղնձի տեսակարար դիմադրությունը $1{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ է, իսկ խտությունը՝ $8{,}9\cdot10^{3}$ կգ/մ^3:

1440. Շղթայի AB տեղամասի ընդհանուր դիմադրությունը $10\,$Օմ է (նկ.45): Որքա՞ն է R_3 դիմադրությունը, եթե $R_1=2\,$Օմ, $R_2=5\,$Օմ:



Նկ. 45

1441. 46-րդ նկարում պատկերված շղթայում ամպերաչափը ցույց է տալիս 1,5 Ա, իսկ վոլտաչափը՝ 12 Վ: Որքա՞ն է R_2 դիմադրությունը, եթե $R_1=2\,$Օմ:



Նկ. 46

1442. 47-րդ նկարում պատկերված շղթայում ամպերաչափի ցուցմունքը 0,5 Ա է, իսկ վոլտաչափինը՝ 35 Վ: Որքա՞ն է լամպի դիմադրությունը, եթե $R_1=14$ Օմ, $R_2=36\,$Օմ:



Նկ. 47

1443. 10 Օմ և 15 Օմ դիմադրություններով երկու հաղորդիչներ միացված են իրար հաջորդաբար: Որքա՞ն է հաղորդիչների ընդհանուր դիմադրությունը:

1444. 220 Վ լարման ցանցին իրար հաջորդաբար միացրին 20 Օմ և 30 Օմ դիմադրություններով երկու լամպեր: Որքա՞ն է լարումը երկրորդ լամպի սեղմակներին:

1445. Էլեկտրական շղթայում իրար հաջորդաբար միացվել են $R_1=13\,$Օմ, $R_2=3\,$Օմ և $R_3=2\,$Օմ դիմադրություններով հաղորդիչներ: Շղթայում ընդհանուր լարումը 36 Վ է: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

1446. 10 Օմ և 15 Օմ դիմադրություններով երկու հաղորդիչներ միացված են իրար զուգահեռ: Որքա՞ն է հաղորդիչների ընդհանուր դիմադրությունը:

1447. Շղթայում իրար զուգահեռ միացված են լամպը և ռեոստատը: Հոսանքի ուժը լամպում 0,5 Ա է, իսկ ռեոստատում՝ 1,5 Ա: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայի չճուղավորված մասում:

www.atc.am

1448. Հաջորդաբար միացված երկու հաղորդիչներից մեկի դիմադրությունը 4 անգամ մեծ է մյուսի դիմադրությունից: Քանի՞ անգամ կմեծանա հոսանքը, եթե հաղորդիչները միացվեն զուգահեռ: Լարումը երկու դեպքում էլ նույնն է: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1449. 200 Օմ դիմադրությամբ համասեռ հաղորդալարը բաժանեցին հավասար մասերի: Երբ դրանք միացրին իրար զուգահեռ, ընդհանուր դիմադրությունը հավասարվեց 2 Օմ-ի: Քանի՞ մասի էին բաժանել հաղորդալարը:

1450. Որքա՞ն է 48-րդ նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե $R_1 = 2$ Օմ, $R_2 = 6$ Օմ, $R_3 = 8$ Օմ:



Նկ. 48

1451. Որքա՞ն է 49-րդ նկարում պատկերված շղթայի AB տեղամասի ընդհանուր դիմադրությունը, եթե $R = 2$ Օմ:



Նկ. 49

1452. Որքա՞ն է նկ. 50-ում ամպերաչափի ցուցմունքը, եթե $R = 3$ Օմ, իսկ վոլտաչափի ցուցմունքը՝ $U = 20$ Վ:



Նկ. 50

1453. Էլեկտրական շղթայի տեղամասով տեղափոխվեց 240 Կլ լիցք, և այդ դեպքում էլեկտրական դաշտը կատարեց 1200 Ջ աշխատանք: Որքա՞ն է լարումն այդ տեղամասում:

1454. Որքա՞ն է մեկ րոպեում 15 Օմ դիմադրությամբ հաղորդչում անջատված ջերմաքանակը, եթե այդ ժամանակամիջոցում նրա միջով անցել է 10 Կլ լիցք:

1455. Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի 10 րոպեում 60 Օմ դիմադրությամբ հաղորդչում 30 Վ լարման դեպքում:

1456. 4 Օմ դիմադրությամբ հաղորդչում հոսանքի ուժը 2 Ա է: Որքա՞ն աշխատանք է կատարում հոսանքը 10 վ-ում:

www.atc.am

1457. Որքա՞ն է 484 Օմ դիմադրությամբ լամպի հզորությունը, որը նախատեսված է 220 Վ լարման համար:

1458. Էլեկտրասալիկը 5 Ա հոսանքի ուժի դեպքում 30 րոպեում սպառում է 1080 կՋ էներգիա: Որքա՞ն է էլեկտրասալիկի դիմադրությունը:

1459. 60 Վտ հզորությամբ լամպն օրական միացնում են 5 ժ: Քանի՞ դրամ պետք է վճարել մեկ շաբաթվա (7 օր) էլեկտրաէներգիայի ծախսի համար, եթե 1 կՎտ·ժ-ն արժե 30 դրամ:

1460. Բնակարանը լուսավորվում է երեք լամպով՝ երկուսը՝ 75 Վտ հզորությամբ, իսկ մեկը՝ 150 Վտ: Օրվա ընթացքում յուրաքանչյուր լամպ հոսանքին միացված է լինում 4 ժամ: Որքա՞ն է լամպերի սպառած էլեկտրաէներգիայի ծախսը մեկ ամսում (30 օր), եթե մեկ կիլովատ-ժամի սակագինը 30 դրամ է:

1461. Քանի՞ վայրկյանում կեռա 220 գ զանգվածով ջուրը, եթե ջրի սկզբնական ջերմաստիճանը $20\ ^0C$ է: Ջեռուցչում հոսանքի ուժը 0,5 Ա է, իսկ ցանցի լարումը՝ 220 Վ: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է: Ջուրը եռում է $100\ ^0C$-ում:

1462. Հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն 6 Վ է: Աղբյուրի ներսում մի բևեռից մյուսը 25 Կլ լիցք տեղափոխելիս որքա՞ն աշխատանք են կատարում կողմնակի ուժերը:

1463. 220 Վ ԷլՇՈւ և 2 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրը փակված է 108 Օմ դիմադրությամբ հաղորդչով: Որքա՞ն է լարման անկումն աղբյուրի ներքին դիմադրության վրա:

1464. Որքա՞ն է հոսանքի ուժը 4 Վ ԷլՇՈւ և 0,5 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի աղբյուր ունեցող հաստատուն հոսանքի շղթայում, եթե արտաքին տեղամասում լարման անկումը 2 Վ-ով մեծ է հոսանքի աղբյուրում լարման անկումից:

1465. Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն, եթե 14 Օմ դիմադրությամբ հաղորդչով այն փակելիս լարումն աղբյուրի սեմակներին 28 Վ է, իսկ 29 Օմ դիմադրությամբ հաղորդչով փակելիս՝ 29 Վ:

1466. 120 Վ ԷլՇՈւ և 5 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված վոլտաչափը ցույց է տալիս 118 Վ: Որքա՞ն է վոլտաչափի դիմադրությունը:

www.atc.am

1467. 4,5 Վ ԷՇՈւ ունեցող հոսանքի աղբյուրին միացված 7,5 Օմ դիմադրությամբ հաղորդչով անցնում է 0,5 Ա հոսանք: Որքա՞ն է հոսանքի ուժը հոսանքի աղբյուրի կարճ միացման ժամանակ:

1468. Որքա՞ն է 1 Օմ ներքին դիմադրություն ունեցող հաստատուն հոսանքի աղբյուրի ԷՇՈւ-ն, եթե շղթայի 4 Օմ դիմադրությամբ արտաքին տեղամասում անջատվում է 23,04 Վտ հզորություն:

1469. 4,5 Վ ԷՇՈւ և 0,9 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրը շղթայում ստեղծում է 1 Ա հոսանք: Որքա՞ն է շղթայի ՕԳԳ-ն՝ տոկոսներով:

1470. Գրպանի լապտերի մարտկոցի ԷՇՈւ-ն 4,5 Վ է: Շղթայի արտաքին տեղամասի 12 Օմ դիմադրության դեպքում հոսանքի ուժը 0,3 Ա է: Որքա՞ն է մարտկոցի ներքին դիմադրությունը:

1471. Որքա՞ն է շղթայի ՕԳԳ-ն՝ տոկոսներով, եթե հոսանքի աղբյուրի ներքին դիմադրության վրա լարման անկումը 4 անգամ փոքր է շղթայի արտաքին տեղամասում լարման անկումից:

1472. Որքա՞ն լիցք պետք է անցնի ծծմբաթթվային պղնձի լուծույթով, որպեսզի կաթոդի վրա անջատվի 0,6588 գ պղինձ: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը $3,294\cdot10^{-7}$ կգ/Կլ է:

1473. Էլեկտրոլիզի հետևանքում 10 Վ լարման տակ $CuSO_4$-ի լուծույթից անջատվում է պղինձ: Որքա՞ն էներգիա է անհրաժեշտ ծախսել 0,987 կգ պղինձ ստանալու համար: Կորուստները անտեսել: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը $3,29\cdot10^{-7}$ կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^{-7}-ով:

1474. Որքա՞ն պետք է լինի հոսանքի ուժը $ZnSO_4$-ի լուծույթում, որպեսզի 5 ժամում կաթոդի վրա անջատվի $306\cdot10^{-4}$ կգ ցինկ: Ցինկի էլեկտրաքիմիական համարժեքը $34\cdot10^{-8}$ կգ/Կլ է:

1475. Որքա՞ն ալյումին կանջատվի 1կՎտ·ժ էլեկտրաէներգիայի ծախսի դեպքում, եթե էլեկտրոլիզը տեղի է ունենում 2,796 Վ լարման պայմաններում, իսկ ողջ կայանքի ՕԳԳ-ն 75% է: Ալյումինի էլեկտրաքիմիական համարժեքը $9,32\cdot10^{-8}$ կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.afo.am

10.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1476. Հաղորդչում հոսանքի ուժը 9,6 Ա է:

1) Քանի՞ էլեկտրոն է անցնում հաղորդչի կտրվածքով 1 ժամում: Պատասխանը բազմապատկել 10^{-21}-ով:
2) Որքա՞ն զանգված է անցնում հաղորդչի կտրվածքով 1 ժամում: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:

1477. Ալյումինե և պղնձե հաղորդալարերն ունեն նույն զանգվածն ու լայնական կտրվածքի նույն մակերեսը: Ալյումինի խտությունը $2{,}9\cdot10^3$ կգ/մ^3 է, իսկ պղնձինը՝ $8{,}7\cdot10^3$ կգ/մ^3, ալյումինի տեսակարար դիմադրությունը $2{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ է, իսկ պղնձինը՝ $1{,}8\cdot10^{-8}$ Օմ·մ:

1) Ալյումինե հաղորդալարի երկարությունը քանի՞ անգամ է մեծ պղնձե հաղորդալարի երկարությունից:
2) Ալյումինե հաղորդալարի դիմադրությունը քանի՞ անգամ է մեծ պղնձե հաղորդալարի դիմադրությունից: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1478. 20 մեկուսացված պղնձե բարակ լարերից կազմված մալուխի երկարությունը 3 մ է: Յուրաքանչյուր լարի կտրվածքի մակերեսը 0,05 մմ^2 է: Պղնձի տեսակարար դիմադրությունը $1{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ է:

1) Որքա՞ն է յուրաքանչյուր լարի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է մալուխի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1479. Երկու դիմադրություններ հաջորդաբար միացնելիս ստացվում է 5 Օմ դիմադրություն, իսկ զուգահեռ միացնելիս՝ 1,2 Օմ:

1) Որքա՞ն է մեծ դիմադրությունը:
2) Որքա՞ն է փոքր դիմադրությունը:

1480. Շղթայի տեղամասը կազմված է 2 մ երկարությամբ և 0,048 մմ^2 կտրվածքի մակերեսով պողպատե հաղորդալարից և նրան հաջորդաբար միացված 1 մ երկարությամբ, 0,021 մմ^2 կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալարից: Պողպատի տեսակարար դիմադրությունը $12{,}1\cdot10^{-8}$ Օմ·մ է, իսկ նիկելինինը՝ $42\cdot10^{-8}$ Օմ·մ:

1) Որքա՞ն է տեղամասի ընդհանուր դիմադրությունը:
2) Որքա՞ն լարում է անհրաժեշտ կիրառել տեղամասի ծայրերին՝ 0,6 Ա հոսանք ստանալու համար:

www.atc.am

1481. Շղթան կազմված է $R_1 = 5,4$ Օմ, $R_2 = 0,6$ Օմ և $R_3 = 12$ Օմ երեք հաջորդաբար միացված դիմադրություններից (նկ. 51): Շղթայում միացված վոլտաչափի ցուցմունքը՝ $U = 1,2$ Վ:



Նկ. 51

1) Որքա՞ն է ամպերաչափի ցուցմունքը:
2) Որքա՞ն է լարման անկումը A և B կետերի միջև:

1482. 52-րդ նկարում պատկերված շղթայում $R_1 = 2$ Օմ, $R_2 = 1$ Օմ, $R_3 = 2$ Օմ, իսկ $U = 24$ Վ:



Նկ. 52

1) Որքա՞ն է շղթայի ընդհանուր հոսանքը:
2) Որքա՞ն է R_3 դիմադրությունով անցնող հոսանքը:

1483. $R_1 = 2$ Օմ և $R_2 = 6$ Օմ դիմադրությամբ երկու հաղորդիչ միացվում են ցանցին՝ նախ միմյանց զուգահեռ, ապա հաջորդաբար:

1) Ի՞նչ ջերմաքանակ է անջատվում առաջին դեպքում R_2 դիմադրությամբ հաղորդչում այն ժամանակում, որի ընթացքում R_1 դիմադրությամբ հաղորդչում անջատվում է 630 Ջ ջերմաքանակ:
2) Ի՞նչ ջերմաքանակ է անջատվում երկրորդ դեպքում R_2 դիմադրությամբ հաղորդչում այն ժամանակում, որի ընթացքում R_1 դիմադրությամբ հաղորդչում անջատվում է 630 Ջ ջերմաքանակ:

1484. Լամպը 1,5 Վ ԷլՇՈւ ունեցող աղբյուրից սնելիս շղթայով անցնում է 0,2 Ա հոսանք:

1) Որքա՞ն լիցք է տեղափոխվում շղթայով 1 ր-ում:
2) Որքա՞ն աշխատանք են կատարում կողմնակի ուժերն աղբյուրի ներսում այդ լիցքը մի բևեռից մյուս տեղափոխելիս:

1485. Լամպը 4,5 Վ ԷլՇՈւ-ով աղբյուրին միացնելիս նրա վրա լարումը 4 Վ է, իսկ հոսանքը՝ 0,25 Ա:

1) Որքա՞ն է լամպի դիմադրությունը:
2) Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:

1486. Ջրի էլեկտրոլիզի ժամանակ գումով անցավ 5000 Կլ լիցք:

1) Որքա՞ն թթվածին անջատվեց: Թթվածնի էլեկտրաքիմիական համարժեքը $829 \cdot 10^{-10}$ կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Որքա՞ն է անջատված թթվածնի ջերմաստիճանը (ըստ Կելվինի), եթե $2,0725 \cdot 10^5$ Պա ճնշման տակ այն զբաղեցնում է $3,32 \cdot 10^{-4}$ մ^3 ծավալ: Թթվածնի մոլային զանգվածը $32 \cdot 10^{-3}$ կգ/մոլ է:

www.atc.am

10.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1487. Շղթան կազմված է հաջորդաբար միացված երեք հաղորդչից, որոնք միացված են 24 Վ լարման աղբյուրին: Առաջին հաղորդչի դիմադրությունը 4 Օմ է, երկրորդինը՝ 6 Օմ, իսկ երրորդի վրա լարման անկումը 4 Վ է:

1) Որքա՞ն է առաջին երկու դիմադրությունների վրա լարման անկումը:
2) Որքա՞ն է շղթայով անցնող հոսանքը:
3) Որքա՞ն է երրորդ հաղորդչի դիմադրությունը:

1488. 200 Վ լարման աղբյուրին հաջորդաբար միացրել են $R_1 = 200$ Օմ և $R_2 = 1000$ Օմ դիմադրություններ: R_2 դիմադրության ծայրերին միացված վոլտաչափը ցույց է տալիս 160 Վ լարում:

1) Որքա՞ն է R_1 դիմադրության վրա լարման անկումը:
2) Որքա՞ն է ընդհանուր հոսանքի ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է վոլտաչափի դիմադրությունը:

1489. Երկու էլեկտրական ջեռուցիչ ունեն 200-ական Վտ հզորություն և 85 % ՕԳԳ: Անհրաժեշտ է 400 գ ջուրը 15 °C-ից տաքացնել մինչև եռման ջերմաստիճան (100 °C): Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է:

1) Որքա՞ն ժամանակ կպահանջի 1 ջեռուցիչ օգտագործելիս:
2) Որքա՞ն ժամանակ կպահանջի զուգահեռ միացված 2 ջեռուցիչ օգտագործելիս:
3) Որքա՞ն ժամանակ կպահանջի հաջորդաբար միացված 2 ջեռուցիչ օգտագործելիս:

1490. Մարտկոցի ԷՇՈւ-ն 12 Վ է, իսկ ներքին դիմադրությունը՝ 1 Օմ: Շղթան փակված է 11 Օմ արտաքին դիմադրությամբ:

1) Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:
2) Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասում լարման անկումը:
3) Որքա՞ն է ներքին դիմադրության վրա լարման անկումը:

www.atc.am

1491. 53-րդ նկարում պատկերված գուռում ա, բ, գ կաթոդների՝ դեպի անոդն ուղղված կողի մակերեսները հավասար են 10 սմ^2: Նրանց հեռավորություններն անոդից՝ համապատասխանաբար՝ 5 սմ, 10 սմ, և 15 սմ են, իսկ կիրառված լարումը՝ 1,5 Վ: Գուռը լցված է պղնձարջասպի լուծույթով: Լուծույթի տեսակարար դիմադրությունն ընդունել 20 Օմ·սմ, իսկ պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը՝ $0{,}33\cdot10^{-6}$ կգ/Կլ:



Նկ. 53

1) Որքա՞ն է ա կաթոդի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել 10^7- ով:
2) Որքա՞ն է բ կաթոդի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել 10^7- ով:
3) Որքա՞ն է գ կաթոդի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել 10^7- ով:

www.atc.am

10.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1492. 54-րդ նկարում բերված շղթայի A և B սեղմակների միջև 100 Վ լարում կիրառելիս, C և D սեղմակների միջև լարումը 40 Վ է, իսկ R_2 դիմադրությամբ հաղորդչում հոսանքի ուժը՝ 1 Ա: C և D սեղմակների միջև 60 Վ լարում կիրառելիս A և B սեղմակների միջև լարումը 15 Վ է:

1) Որքա՞ն է լարման անկումը R_2 դիմադրության վրա A և B սեղմակների միջև 100 Վ լարում կիրառելիս:
2) Որքա՞ն է R_2 հաղորդչի դիմադրությունը:
3) Որքա՞ն է R_3 հաղորդչի դիմադրությունը:
4) Որքա՞ն է R_1 հաղորդչի դիմադրությունը:



Նկ. 54

1493. Հարթ էլեկտրոդներով երկէլեկտրոդ էլեկտրոնային լամպում լարումը $22 \cdot 10^3$ Վ է: Լամպով անցնում է $2 \cdot 10^{-3}$ Ա հոսանք: Էլեկտրոնի լիցքի և զանգվածի հարաբերությունն ընդունել $1{,}76 \cdot 10^{11}$ Կլ/կգ:

1) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը լամպի անոդին հասնելիս: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
2) Որքա՞ն է էլեկտրոնի իմպուլսի փոփոխության մոդուլը անոդին բախվելիս: Պատասխանը բազմապատկել 10^{25}-ով:
3) Քանի՞ էլեկտրոն է հասնում անոդին 1 վ-ում: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:
4) Որքա՞ն է էլեկտրոնների հարվածներով պայմանավորված ուժը, որն ազդում է անոդի վրա: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1494. 55-րդ նկարում պատկերված շղթայում հոսանքի աղբյուրի ԷՇՈւ-ն E = 12 Վ է, ներքին դիմադրությունը՝ r = 1 Օմ: Շղթայի արտաքին տեղամասի պարամետրերն են՝ $R_1 = 2$ Օմ, $R_2 = 3$ Օմ, $C = 2 \cdot 10^{-6}$ Ֆ: Շղթայի բանալին փակ է:

1) Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասի ակտիվ դիմադրությունը:
2) Որքա՞ն է շղթայում հոսանքի ուժը:
3) Որքա՞ն է կոնդենսատորի լարումը:
4) Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի շղթայում բանալին անջատելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:



Նկ. 55

www.atc.am

11. ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ

11.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1495. Ինչպե՞ս է իրականացվում երկու հոսանքակիր հաղորդիչների մագնիսական փոխազդեցությունը:

1) Էլեկտրական հոսանքները չեն փոխազդում:
2) Էլեկտրական հոսանքները փոխազդեցությունը պայմանավորված է իրենց ստեղծած էլեկտրական դաշտերով:
3) Հեռավորության վրա էլեկտրական հոսանքները փոխազդեցում են նրանց ստեղծած մագնիսական դաշտերի միջոցով:
4) Մի հոսանքակիր հաղորդչի ստեղծած մագնիսական դաշտն ազդում է մյուս հոսանքակիր հաղորդչի վրա և հակառակը:

1496. Ապակե խողովակում առկա է հաստատուն արագությամբ շարժվող էլեկտրոնների հոսք: Ի՞նչ դաշտ կարելի է հայտնաբերել նրա մերձակա A կետում:



1) Միայն էլեկտրական:
2) Միայն մագնիսական:
3) Միաժամանակ և՛ էլեկտրական, և՛ մագնիսական:
4) Ո՛չ էլեկտրական, ո՛չ մագնիսական:

1497. Ո՞ր միջավայրերում է դրսևորվում հոսանքի մագնիսական ազդեցությունը:

1) Միայն վակուումում:
2) Միայն մետաղներում:
3) Մետաղներում և էլեկտրոլիտներում:
4) Կամայական միջավայրում:

1498. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Այն մեծությունը, որը հավասար է մագնիսական դաշտի տվյալ կետում տեղադրված հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր տեղամասի վրա ազդող առավելագույն ուժի մոդուլի հարաբերությանը հոսանքի ուժի և այդ տեղամասի երկարության արտադրյալին, կոչվում է մագնիսական դաշտի…

1) ինդուկցիայի վեկտորի մոդուլ:
2) լարվածության վեկտորի մոդուլ:
3) պոտենցիալ:
4) հզորություն:

www.atc.am

1499. Ինչպե՞ս է կոչվում 1 $\frac{\text{Ն}}{\text{Ա մ}}$ միավորը:

1) 1 վեբեր:
2) 1 օհմ:
3) 1 տեսլա:
4) 1 վոլտ:

1500. Նկարում պատկերված մագնիսը բաժանված է երեք կտորի: Ի՞նչ բևեռներ են առաջանում միջին կտորի ծայրերին:



1) a ծայրին՝ հյուսիսային, b ծայրին՝ հարավային:
2) a ծայրին՝ հարավային, b ծայրին՝ հյուսիսային:
3) Երկու ծայրերին էլ՝ հյուսիսային:
4) Երկու ծայրերին էլ՝ հարավային:

1501. Ինչպե՞ս են փոխազդում երկու զուգահեռ հոսանքակիր հաղորդիչները, երբ նրանց միջով անցնող հոսանքներն ունեն հակադիր ուղղություններ:

1) Փոխազդեցության ուժը զրո է:
2) Հաղորդիչներն իրար ձգում են:
3) Հաղորդիչներն իրար վանում են:
4) Կախված հոսանքի մեծությունից՝ հաղորդիչները կձգեն կամ կվանեն իրար:

1502. Ո՞րն է սխալ պնդումը:

1) Էլեկտրական լիցքերի այն փոխազդեցությունը, որը ծագում է նրանց շարժման ժամանակ, կոչվում է մագնիսական փոխազդեցություն:
2) Մագնիսական դաշտի գլխավոր հատկությունն այն է, որ նա ազդում է դաշտում տեղադրված հոսանքակիր հաղորդչի կամ շարժվող լիցքի վրա:
3) Մագնիսական դաշտը մրրկային դաշտ է:
4) Ի տարբերություն էլեկտրական դաշտի ուժագծերի՝ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերը հատվում են:

1503. Ո՞րն է ուղղագիծ հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերի ճիշտ պատկերը, եթե հոսանքն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը:



1) ա:
2) գ:
3) բ:
4) դ:

www.etc.am

1504. **Ինչպե՞ս է ուղղված նկարում պատկերված երկու անվերջ երկար, ուղիղ, իրար զուգահեռ հոսանքակիր հաղորդալարերի արդյունարար մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը հավասարահեռ A կետում: Հաղորդալարերում հոսանքի ուժը նույնն է $(I_1 = I_2)$:**



1) Ուղղված է դեպի վերև:
2) Զրո է:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:
4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:

1505. **Նկարում տրված է հոսանքատար հաղորդչի լայնական հատույթը A կետում: Էլեկտրական հոսանքն ուղղված է դիտորդից դեպի գծագրի հարթություն: Ի՞նչ ուղղություն ունի մագնիսական դաշտի ինդուկցիան C կետում:**



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1506. **Երկու միատեսակ մետաղական օղակներով հոսում է նույն հոսանքը: Մի օղակը տեղադրված է ուղղաձիգ հարթության մեջ, իսկ մյուսը հորիզոնական: Ի՞նչ ուղղություն ունի մագնիսական ինդուկցիայի վեկտորը օղակների ընդհանուր կենտրոնում:**



1) ա: 3) բ:
2) գ: 4) դ:

1507. **Ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Մագնիսական դաշտի կողմից այդ դաշտում տեղակայված հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր երկարությամբ տեղամասի վրա ազդող ուժը կախված է այդ տեղամասի երկարությունից:
2) Մագնիսական դաշտի կողմից այդ դաշտում տեղակայված հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր երկարությամբ տեղամասի վրա ազդող ուժը կախված է նրանում հոսանքի ուժից:
3) Մագնիսական դաշտերի համար ճիշտ է վերադրման սկզբունքը:
4) Մագնիսական դաշտի կողմից հոսանքակիր հաղորդչի վրա ազդող ուժը կախված չէ տարածության մեջ նրա կողմնորոշումից:

www.atc.am

1508. **Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր տեղամասի վրա մագնիսական դաշտի ազդող առավելագույն ուժի կախումը՝ նրանով անցնող հոսանքի ուժից:**



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1509. **$\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում տեղադրված է l երկարությամբ ուղղագիծ հաղորդալար, որով անցնող հոսանքի ուժը I է: Էլ ո՞ր մեծությունը պետք է հայտնի լինի հաղորդչի վրա մագնիսական դաշտի կողմից ազդող ուժը որոշելու համար:**

1) Հաղորդչի լայնական հատույթի մակերեսը:
2) Հաղորդչի զանգվածը:
3) $\vec{B}$ վեկտորի և հաղորդչով անցնող հոսանքի ուղղության կազմած անկյունը:
4) Հաղորդչի դիմադրությունը:

1510. **Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի լայնական հատույթը համասեռ մագնիսական դաշտում: $\otimes$ նշանը ցույց է տալիս, որ հոսանքի ուղղությունն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի նկարը: Ո՞րն է Ամպերի ուժի ուղղությունը:**



1) $\rightarrow$: 3) $\leftarrow$:
2) $\uparrow$: 4) $\downarrow$:

1511. **Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի դիրքը մագնիսական դաշտում: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտորդը: Ի՞նչ ուղղություն ունի հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը:**



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1512. **Ինչպե՞ս է ուղղված նկարում պատկերված համասեռ մագնիսական դաշտում**



www.atc.am

տեղադրված հոսանքակիր շրջանակի վերին կողմի վրա ազդող Ամպերի ուժը:

1) Դեպի ներքև:
2) Դեպի վերև:
3) Նկարի հարթությունից դեպի դիտողը:
4) Դիտողից դեպի նկարի հարթությունը:

1513. Նկարում պատկերված են AB և CD հոսանքակիր հաղորդիչների մագնիսական դաշտերի ինդուկցիայի գծերը: Ինչպե՞ս են ուղղված հոսանքները հաղորդիչներում, և ինչպե՞ս են դրանք փոխազդում:



1) A-ից B, C-ից D, ձգում են:
2) A-ից B, C-ից D, վանում են:
3) B-ից A, D- ից C, ձգում են:
4) B-ից A, D- ից C, վանում են:

1514. Օդում հորիզոնական դիրքով անշարժ վիճակում հոսանքակիր հաղորդչի հատվածը տեղադրված է հաղորդչին ուղղահայաց $\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Ի՞նչ ուղղություն ունեն հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը և հոսանքը հաղորդչում:



1) Ամպերի ուժը՝ վերև, հոսանքը՝ ա-ից բ:
2) Ամպերի ուժը՝ ներքև, հոսանքը՝ ա-ից բ:
3) Ամպերի ուժը՝ վերև, հոսանքը՝ բ-ից ա:
4) Ամպերի ուժը՝ ներքև, հոսանքը՝ բ-ից ա:

1515. Նկարում պատկերված երեք հոսանքակիր հաղորդիչները զուգահեռ են իրար և գտնվում են ուղղաձիգ հարթության մեջ: Ինչպե՞ս է ուղղված 1-ին հաղորդչի վրա մյուս երկուսի կողմից ազդող Ամպերի ուժը:



1) Դեպի վեր:
2) Դեպի ներքև:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:
4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:

www.atc.am

1516. Հորիզոնական ողորկ մակերևույթի վրա տեղադրված է շատ փափուկ հաղորդալարից պատրաստված քառակուսաձև հաղորդիչ: Ինչպե՞ս կփոխվի հաղորդչի ձևը, եթե նրա միջով բաց թողնենք հաստատուն հոսանք:

1) Չի փոխվի:
2) Կընդունի շեղանկյան տեսք:
3) Կընդունի շրջանագծի տեսք:
4) Սեղմվելով կընդունի գծի տեսք:

1517. Նեյտրոնը և պրոտոնը նույն արագությամբ մտնում են համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է նրանց վրա ազդող Լորենցի ուժերի F_n / F_p հարաբերությունը:

1) 0:
2) 1:
3) 2000:
4) $\frac{1}{2000}$:

1518. Ո՞ր հատկությամբ օժտված չէ Լորենցի ուժը:

1) Լիցավորված մասնիկին հաղորդում է արագացում:
2) Կատարում է աշխատանք:
3) Փոխում է լիցքավորված մասնիկի արագության վեկտորի ուղղությունը:
4) Փոխում է լիցքավորված մասնիկի շարժման հետագիծը:

1519. Էլեկտրոնը համասեռ մագնիսական դաշտում շարժվում է նկարում պատկերված հետագծով: Ինչպե՞ս է ուղղված մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը:



1) Դեպի վերև՝ $\uparrow$:
2) Դեպի ներքև՝ $\downarrow$:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը՝ $\odot$:
4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը՝ $\otimes$:

1520. Էլեկտրոնը $\vec{v}$ արագությամբ մտնում է մի տիրույթ, որտեղ առկա են համասեռ մագնիսական և էլեկտրական դաշտեր, որոնց $\vec{E}$ և $\vec{B}$ վեկտորներն ուղղված են հակա-



www.atc.am

ռակ: Ինչպիսի՞ շարժում կկատարի էլեկտրոնը, եթե նրա արագությունն ուղղահայաց է $\vec{E}$ և $\vec{B}$ վեկտորներին:

1) Շրջանագծային շարժում, որի ընթացքում արագության մոդուլն աճում է:
2) Ուղղագիծ հավասարաչափ շարժում:
3) Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում:
4) Կշարժվի պարուրագծով, որի քայլը ժամանակի ընթացքում աճում է:

1521. Ինչպե՞ս և դեպի ո՞ր կողմ կշարժվի էլեկտրոնը դադարի վիճակից, եթե այն տեղադրված է ժամանակի ընթացքում չփոփոխվող համասեռ մագնիսական դաշտում:



1) Հավասարաչափ արագացումով, աջ:
2) Շրջանագծով, ժամսլաքի պտտման ուղղությամբ:
3) Շրջանագծով, ժամսլաքի պտտմանը հակառակ ուղղությամբ:
4) Կմնա անշարժ:

1522. Լիցքավորված մասնիկը հաստատուն $\vec{v}$ արագությամբ շարժվում է $\vec{E}$ լարվածությամբ էլեկտրական և $\vec{B}$ ինդուկցիայով մագնիսական համասեռ դաշտերում: $\vec{E}$ և $\vec{B}$ վեկտորները փոխուղղահայաց են: Ի՞նչ պայմանի դեպքում դա տեղի ունի:

1) $v = \dfrac{B}{E}$:
2) $v = \dfrac{B}{\sqrt{E^2 + B^2}}$:
3) $v = \dfrac{E}{B}$
4) $v = \dfrac{E}{\sqrt{E^2 + B^2}}$

1523. Ինդուկցիայի վեկտորի հետ մասնիկի սկզբնական արագության վեկտորի կազմած ի՞նչ անկյան դեպքում մասնիկը համասեռ մագնիսական դաշտում կկատարի ուղղագիծ հավասարաչափ շարժում:

1) $\alpha = 90^0$:
2) $0^0 < \alpha < 90^0$:
3) $\alpha = 0^0$ կամ $\alpha = 180^0$:
4) $90^0 < \alpha < 180^0$:

1524. Ինչպե՞ս կշարժվի լիցքավորված մասնիկը համասեռ մագնիսական դաշտում, եթե նրա սկզբնական արագությունը սուր անկյուն է կազմում մագնիսական ինդուկցիայի վեկտորի հետ:

1) Շրջանագծով:
3) Ուղիղ գծով:

www.atc.am

2) Պարաբոլով: 4) Պարուրագծով:

1525. **Նկարում q լիցքի արագությունն ուղղահայաց է հոսանքակիր հարթ շրջանակի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ինչպե՞ս է ուղղված լիցքի վրա շրջանակի ազդող ուժն այն պահին, երբ լիցքը հատում է շրջանակի հարթությունը նրա կենտրոնում:**



1) Դեպի աջ: 3) Դեպի վերև:
2) Դեպի ձախ: 4) Ուժը զրո է:

1526. **Լիցքավորված մասնիկը $\vec{E}$ լարվածությամբ էլեկտրական և $\vec{B}$ ինդուկցիայով մագնիսական փոխուղղահայաց համասեռ դաշտերում $\left(\vec{E} \perp \vec{B}\right)$ շարժվում է հաստատուն $\vec{v}$ արագությամբ: Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) $\vec{E}$ և $\vec{B}$ վեկտորների մոդուլները հավասար են:
2) $\vec{E}$ -ի մոդուլը մեծ է $\vec{B}$ -ի մոդուլից v անգամ:
3) $\vec{E}$ -ի մոդուլը փոքր է $\vec{B}$ -ի մոդուլից v անգամ:
4) $\vec{E}$ -ի մոդուլը շատ փոքր է $\vec{B}$ -ի մոդուլից:

1527. **m զանգվածով և q լիցքով մասնիկը B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում կատարում է հավասարաչափ շրջանագծային շարժում: Ո՞ր արտահայտությամբ է որոշվում մասնիկի անկյունային արագությունը:**

1) $\frac{m}{qB}$: 3) qmB:
2) $\frac{qm}{B}$: 4) $\frac{qB}{m}$:

1528. **Լիցքավորված մասնիկը շրջանագծային ուղեծրով պտտվում է համասեռ մագնիսական դաշտում: Ինչպե՞ս կփոխվի մասնիկի պտտման պարբերությունը, եթե նրա արագության մոդուլը փոքրացնենք երկու անգամ:**

1) Կմեծանա 2 անգամ: 3) Կմնա նույնը:
2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1529. **q լիցքով մասնիկը B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվում է R շառավղով շրջանագծով: Որքա՞ն է մասնիկի իմպուլսը:**

www.atc.am

1) qBR:
2) qBR^2:
3) $2\pi RqB$:
4) $qB\pi R^2$:

1530. Ինչպե՞ս կփոխվի համասեռ մագնիսական դաշտում ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց մտնող լիցքավորված մասնիկի հետագծի շառավիղը, եթե նրա կինետիկ էներգիան փոքրացնենք 4 անգամ:

1) Կփոքրանա 4 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 2 անգամ:
4) Չի փոխվի:

1531. Միևնույն կինետիկ էներգիայով երկու մասնիկներ, որոնց լիցքերի հարաբերությունը՝ $q_2/q_1 = 2$, մտնում են համասեռ մագնիսական դաշտ նրա ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է մասնիկների զանգվածների m_2/m_1 հարաբերությունը, եթե նրանց հետագծերի շառավիղների հարաբերությունը՝ $R_2/R_1 = 1/2$:

1) 1:
2) 2:
3) 8:
4) 4:

1532. m զանգվածով և q լիցքով մասնիկը v արագությամբ մտնում է համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ α անկյան տակ: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, եթե պարուրագծի շառավիղը, որով շարժվում է մասնիկը, R է:

1) $\frac{mv\cos\alpha}{qR}$:
2) $\frac{mv\sin\alpha}{qR}$:
3) $\frac{mv}{qR\sin\alpha}$:
4) $\frac{mv}{qR}$:

1533. Երկու էլեկտրոններ դաղարի վիճակում են: Նրանց վրա կիրառվում է համապատասխանաբար U և $2U$ պոտենցյալների տարբերություն: Արագացում ձեռք բերած էլեկտրոնները մտնում են համասեռ մագնիսական դաշտ, որի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նրանց արագության վեկտորներին: Որքա՞ն է երկրորդ և առաջին էլեկտրոնների հետագծերի կորության շառավիղների հարաբերությունը:

1) $\frac{1}{4}$:
2) $\frac{1}{2}$:
3) $\frac{\sqrt{3}}{2}$:
4) $\sqrt{2}$:

www.atc.am

1534. Ո՞ր պնդումն է սխալ:

1) Մագնիսը հաղորդիչ փակ շրջանակի մեջ մտցնելիս շրջանակում մակածվում է էլեկտրական հոսանք:
2) Կոճը հոսանքի աղբյուրից անջատելիս նրանում մակածվում է ԷլՇՈւ:
3) Կոճում տեղադրված հաստատուն մագնիսը կոճում մակածում է էլեկտրական հոսանք:
4) Ժամանակի ընթացքում փոփոխվող մագնիսական դաշտը փակ հաղորդիչ շրջանակում մակածում է էլեկտրական հոսանք:

1535. Առաջին երկու վայրկյանում մագնիսը մոտեցնում են մետաղե շրջանակին, հաջորդ երկու վայրկյանին մագնիսն անշարժ պահում են շրջանակի ներսում, իսկ վերջին երկու վայրկյանի ընթացքում այն հեռացնում են շրջանակից: Ո՞ր դեպքում է շրջանակում մակածվում ԷլՇՈւ:



1) Միայն մագնիսը մոտեցնելիս:
2) Միայն մագնիսը հեռացնելիս:
3) Շրջանակի ներսում մագնիսն անշարժ պահելիս:
4) Մոտեցնելիս և հեռացնելիս:

1536. Պղնձե օղակի մոտ, նրա մակերևույթին ուղղահայաց տեղադրված է հաստատուն մագնիս, ինչպես ցույց է տրված նկարում: Առաջին դեպքում օղակը շարժում են դեպի ներքև, իսկ երկրորդ դեպքում՝ դեպի աջ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:



1) Միայն առաջին դեպքում: 3) Երկու դեպքում էլ:
2) Միայն երկրորդ դեպքում: 4) Ոչ մի դեպքում:

1537. Նկարում պատկերված մետաղե հարթ շրջանակը համասեռ մագնիսական դաշտում տեղադրված է այնպես, որ նրա ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակի հարթությանը և ուղղված է դեպի նկարը: Շրջանակում կմակածվի՞ արդյոք հոսանք, եթե այն համընթաց շարժենք մագնիսական դաշտում:



1) Այո:
2) Չի մակածվի:
3) Այո, եթե արագության մոդուլն աճի:
4) Այո, եթե արագության մոդուլը նվազի:

www.aic.am

1538. Երկաթե միջուկի վրա տեղակայված է երկու կոճ: Աջ կոճում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքերում ամպերաչափը ձախ կոճում հոսանք ցույց կտա:



1) 4 -5 վայրկյանի ընթացքում:
2) 0-2 և 4 -5 վայրկյանի ընթացքում:
3) 2-4 և 5-9 վայրկյանի ընթացքում:
4) 0- 2 վայրկյանի ընթացքում:

1539. Ինչպե՞ս է կոչվում այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է ինդուկցիայի $\vec{B}$ վեկտորի մոդուլի և այդ դաշտում կոնտուրի մակերևույթի S մակերեսի և ինդուկցիայի վեկտորի ու մակերևույթի նորմալի կազմած անկյան կոսինուսի արտադրյալին:

1) Ինդուկտիվություն:
2) Մագնիսական հոսք:
3) Մագնիսական ինդուկցիա:
4) Մագնիսական դաշտի էներգիա:

1540. Ինչպե՞ս կփոխվի մագնիսական հոսքը փակ կոնտուրով, եթե նրա մակերեսը մեծացնենք 2 անգամ, իսկ կոնտուրի մակերևույթի նորմալով ուղղված մագնիսական դաշտի ինդուկցիան մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Փոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրացման 4 անգամ:

1541. Հարթ շրջանակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում: Շրջանակի հարթության նորմալի և մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի կազմած ի՞նչ անկյան դեպքում է մագնիսական հոսքը շրջանակով դառնում զրո:

1) 0^0:
2) 45^0:
3) 60^0:
4) 90^0:

1542. Նկարում պատկերված I հոսանքի մագնիսական դաշտում տեղադրված ո՞ր կոնտուր թափանցող մագնիսական հոսքն է ավելի մեծ:



www.atc.am

1) $\Phi_1 = \Phi_2 \neq 0$:
2) $\Phi_1 > \Phi_2$:
3) $\Phi_1 = \Phi_2 = 0$:
4) $\Phi_1 < \Phi_2$:

1543. Ո՞րն է կոճով անցնող հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի Φ հոսքի կախումը նրանով անցնող I հոսանքից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1544. Մագնիսը մետաղե օղակից հավասարաչափ հեռացնելիս նրանում մակածված հոսանքի ուղղությունը պատկերված է նկարում: Մագնիսի ո՞ր բևեռն է ավելի մոտ օղակին:



1) Հյուսիսային:
2) Հարավային:
3) Մեծ արագության դեպքում՝ հյուսիսային:
4) Մեծ արագության դեպքում՝ հարավային:

1545. Օղակաձև հաղորդիչը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում (տես նկարը), որի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են շրջանակի հարթությանը և ուղղված են նկարից դեպի դիտողը: Մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը ժամանակից կախված աճում է: Ի՞նչ ուղղություն ունի հաղորդչում մակածված հոսանքը:



1) Ժամսլաքի պտտման ուղղությունը:
2) Ժամսլաքի պտտմանը հակառակ ուղղությունը:
3) Հոսանք չի մակածվի:
4) Մակածված հոսանքի ուղղությունը կախված է մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլի աճման արագությունից:

1546. Շրջանակում մակածվում է հաստատուն ԷՇՈւ: Ժամանակից կախված՝ ի՞նչ օրենքով է նրա մեջ փոխվում մագնիսական հոսքը:

1) Սինուսի կամ կոսինուսի օրենքով:
2) Գծային օրենքով:
3) Քառակուսային օրենքով:
4) Չի փոխվում:

1547. Ինչի՞ց է կախված անշարժ հաղորդիչ շրջանակում մակածված ԷՇՈւ-ի մոդուլը:

1) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի ուղղությունից:
2) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի մոդուլից:

www.atc.am

3) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի հոսքի մեծությունից:
4) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի հոսքի փոփոխման արագությունից:

1548. Հաղորդիչ շրջանակում մագնիսական հոսքը հավասարաչափ աճում է 0-ից մինչև Φ_0 արժեքը՝ առաջին դեպքում՝ t ժամանակում, իսկ երկրորդ դեպքում՝ $2t$: Ո՞ր դեպքում շրջանակում կմակածվի մոդուլով ավելի մեծ ԷլՇՈւ:

1) Առաջին դեպքում, 4 անգամ մեծ:
2) Երկրորդ դեպքում, 4 անգամ մեծ:
3) Առաջին դեպքում, 2 անգամ մեծ:
4) Երկրորդ դեպքում, 2 անգամ մեծ:

1549. Մետաղե շրջանակում մագնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքում է մակածվում մոդուլով ամենամեծ ԷլՇՈւ-ն:



1) a միջակայքում:
2) b միջակայքում:
3) c միջակայքում:
4) Բոլոր միջակայքերում ԷլՇՈւ-ն ունի միևնույն արժեքը:

1550. Նկարում պատկերված է 100 Օմ դիմադրությամբ փակ շրջանակ թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է շրջանակում մակածված հոսանքի ուժը 2-4 վայրկյան միջակայքում:



1) 0,1 Ա: 3) 0,4 Ա:
2) 0,2 Ա: 4) 2 Ա:

1551. Հավասարաչափ նվազող ինդուկցիայով մագնիսական դաշտում R դիմադրությամբ հաղորդիչ օղակում մակածվում է I հոսանք: Որքա՞ն է մեկ վայրկյանում մագնիսական հոսքի փոփոխությունը կոնտուրում:

1) IR: 3) IR^2:
2) I^2R: 4) 0:

www.ato.am

1552. Ո՞րն է $\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում $\vec{v}$ արագությամբ շարժվող l երկարությամբ ուղիղ հաղորդչում մակածման ԷլՇՈւ-ի բանաձևը:

1) $vBl\sin\alpha$:
2) $IBl\sin\alpha$:
3) $qvB\sin\alpha$:
4) $vBl\cos\alpha$:

1553. Մագնիսական ինդուկցիայի $\vec{B}$ վեկտորին ուղղահայաց ուղղությամբ ի՞նչ արագությամբ պետք է շարժվի l երկարությամբ ուղիղ հաղորդիչը, որպեսզի նրա մեջ մակածվի ε ԷլՇՈւ: Հաղորդիչն ուղղահայաց է $\vec{B}$ և $\vec{v}$ վեկտորներին:

1) $\dfrac{\varepsilon}{Bl}$:
2) $\dfrac{\varepsilon l}{B}$:
3) $\dfrac{\varepsilon B}{l}$:
4) $\dfrac{2\varepsilon}{Bl}$:

1554. Ի՞նչ ուժերի ազդեցությամբ է փոփոխական մագնիսական դաշտում տեղադրված անշարժ մետաղական հաղորդչում առաջանում մակածման հոսանք:

1) Էլեկտրաստատիկ ուժերի:
2) Մագնիսական ուժերի:
3) Մրրկային էլեկտրական դաշտի կողմից ազդող ուժերի:
4) Բյուրեղային ցանցի իոնների կողմից ազդող ուժերի:

1555. ABCD ուղղանկյունաձև շրջանակը $\vec{v}$ արագությամբ համընթաց շարժվում է I հոսանքի մագնիսական դաշտում: Ինչպե՞ս է ուղղված շրջանակում մակածված հոսանքը:



1) Ժամսլաքի պտտման ուղղությամբ:
2) Ժամսլաքի պտտմանը հակառակ ուղղությամբ:
3) Շրջանակում հոսանքը բացակայում է:
4) Հոսանքի ուղղությունը կախված է արագության մոդուլից:

1556. Ի՞նչ միավորով է չափվում ինդուկտիվությունը միավորների ՄՀ-ում:

1) 1 Հն:
2) 1 Ֆ:
3) 1 Տլ:
4) 1 Վբ:

www.atc.am

1557. Ո՞րն է առանց միջուկի կոճով անցնող I հոսանքից L ինդուկտիվության կախումն արտահայտող գրաֆիկը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1558. Ո՞ր բանաձևով է որոշվում ինքնամակածման ԷՇՈւ-ի և կոճով հոսող հոսանքի ուժի փոփոխության արագության միջև կապը:

1) $\varepsilon = -N\dfrac{\Delta\Phi}{\Delta t}$:
2) $\varepsilon = -\dfrac{\Delta\Phi}{\Delta t}$:
3) $\varepsilon = LI$:
4) $\varepsilon = -L\dfrac{\Delta I}{\Delta t}$:

1559. Կոճի ինդուկտիվությունը մեծացրին 2 անգամ, իսկ հոսանքի ուժը նրա մեջ փոքրացրին 2 անգամ; Ինչպե՞ս փոխվեց այդ դեպքում կոճի մագնիսական դաշտի էներգիան:

1) Մեծացավ 8 անգամ:
2) Փոքրացավ 2 անգամ:
3) Փոքրացավ 4 անգամ:
4) Փոքրացավ 8 անգամ:

1560. Նկարում պատկերված շղթան հոսանքի աղբյուրից անջատելուց հետո որոշ ժամանակ լամպը շարունակում է լուսարձակել: Որքա՞ն է այդ ընթացքում անջատված էներգիան, եթե մինչ անջատելը հոսանքի ուժը շղթայում I է, լամպի դիմադրությունը՝ R, իսկ կոճի ինդուկտիվությունը՝ L:



1) I^2R:
2) LI^2:
3) $\dfrac{LI^2}{2}$:
4) $\dfrac{I^2R}{2}$:

1561. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Տատանողական կոնտուրը էլեկտրական շղթա է, որը կազմված է...

1) հոսանքի աղբյուրից և կոնդենսատորից:
2) հոսանքի աղբյուրից և ինդուկտիվության կոճից:
3) կոնդենսատորից և ինդուկտիվության կոճից:
4) կոնդենսատորից, ակտիվ դիմադրությունից և հոսանքի աղբյուրից:

1562. Ժամանակի սկզբնապահին տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարումը առավելագույնն է: Էլեկտրամագնիսական տատանում-

www.aic.am

ների պարբերությունը T է: Որքա՞ն ժամանակ հետո կոնդենսատորի լարումը կհավասարվի զրոյի:

1) $\frac{T}{4}$:
2) $\frac{T}{2}$:
3) $\frac{3}{4}T$:
4) T:

1563. Լիցքավորված կոնդենսատորը միացնում են կոճին: Ո՞ր հավասարումն է նկարագրում շղթայով անցնող հոսանքի ուժի կախումը ժամանակից: Որպես ժամանակի հաշվարկման սկիզբ համարել միացման պահը:

1) $i(t) = -I_0 \sin \omega t$:
2) $i(t) = -I_0 \cos \omega t$:
3) $i(t) = I_0 \sin 2\omega t$:
4) $i(t) = -I_0(1 + \cos \omega t)$:

1564. Ունենք $C_1 = 10$ պՖ, $C_2 = 40$ պՖ ունակությամբ երկու կոնդենսատորների և $L_1 = 5$ մՀն, $L_2 = 0{,}1$ մՀն ինդուկտիվությամբ երկու կոճերի հավաքածու: Ո՞ր զույգի դեպքում նրանցից կազմված տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը կլինի ավելի մեծ:

1) L_1C_1:
2) L_2C_2:
3) L_1C_2:
4) L_2C_1:

1565. Ինչպե՞ս կփոխվի կոնտուրում սեփական էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը, երբ բանալին ա դիրքից տեղափոխենք բ դիրք:



1) Չի փոխվի:
2) Կմեծանա 2 անգամ:
3) Կփոքրանա 2 անգամ:
4) Կփոքրանա 4 անգամ:

1566. Կոճում մագնիսական հոսքի փոփոխման արագությունը ժամանակի տվյալ պահին $\Phi'(t)$ է: Որքա՞ն է կոնդենսատորի լիցքն այդ պահին:



1) $q = \Phi'(t)$:
2) $q = C\left|\Phi'(t)\right|$:
3) $q = LC\left|\Phi'(t)\right|$:
4) $q = L\left|\Phi'(t)\right|$:

www.atc.am

1567. Ի՞նչ էներգիայով է օժտված տատանողական կոնտուրն այն պահին, երբ կոնդենսատորի լիցքն առավելագույնն է:

1) Միայն էլեկտրական դաշտի էներգիայով:
2) Միայն մագնիսական դաշտի էներգիայով:
3) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգիաներով:
4) Էներգիայով օժտված չէ:

1568. Նկարում պատկերված է տատանողական կոնտուրում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից հաշված՝ 6 մկվ-ի ընթացքում կոճի մագնիսական դաշտի էներգիան քանի՞ անգամ է ընդունում իր առավելագույն արժեքը:



1) 1:
2) 2:
3) 3:
4) 4:

1569. Որքա՞ն է նկարում պատկերված փոփոխական լարման տատանումների պարբերությունը:



1) 1 վ:
2) 2 վ:
3) 3 վ:
4) 5 վ:

1570. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը տատանողական կոնտուրում, եթե մեծացնենք կոնդենսատորի շրջադիրների միջև հեռավորությունը:

1) Չի փոխվի:
2) Կփոքրանա:
3) Կմեծանա:
4) Հարցին միարժեք պատասխանելու համար տվյալները բավարար չեն:

1571. Տատանողական կոնտուրի օդային կոնդենսատորի թիթեղների հեռավորությունը փոքրացրին 2 անգամ և դրանց միջև տեղադրեցին $\varepsilon = 2$ դիէլեկտրական թափանցելիություն ունեցող կոշտ դիէլեկտրիկ: Ինչպե՞ս փոխվեց կոնտուրում սեփական տատանումների պարբերությունը:

www.atc.am

1) Մեծացավ 2 անգամ: 3) Մեծացավ 4 անգամ:
2) Փոքրացավ 2 անգամ: 4) Փոքրացավ 4 անգամ:

1572. Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Ինչպե՞ս փոխվեց կոճի մագնիսական դաշտի առավելագույն էներգիան:

1) Մեծացավ 3 անգամ: 3) Մեծացավ 9 անգամ:
2) Մեծացավ 6 անգամ: 4) Չփոխվեց:

1573. Կոնդենսատորը լիցքավորում են և միացնում կոճին: Ստեղծված տատանողական կոնտուրում առաջանում են T պարբերությամբ ներդաշնակ էլեկտրամագնիսական տատանումներ: Ինչպիսի՞ն է էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգիաների հարաբերակցությունը $t = T/2$ պահին:

1) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգաները հավասար են զրոյի:
2) Էլեկտրական դաշտի էներգիան զրո է, մագնիսական դաշտի էներգիան ընդունել է առավելագույն արժեքը:
3) Մագնիսական դաշտի էներգիան զրո է, էլեկտրական դաշտի էներգիան ընդունել է առավելագույն արժեքը:
4) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգաներն ընդունել են իրենց առավելագույն արժեքները:

1574. Լիցքավորված կոնդենսատորը ինդուկտիվության կոճին միացնելուց որքա՞ն ժամանակ անց կոնդենսատորի և կոճի էներգիաները կհավասարվեն:

1) $\frac{T}{2}$: 3) $\frac{T}{6}$:
2) $\frac{T}{4}$: 4) $\frac{T}{8}$:

1575. Փոփոխական հոսանքի շղթայում հոսանքը փոխվում է $i(t) = 2\cos(100\pi t)$ օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը:

1) 2 Ա: 3) $200\,\pi$ Ա:
2) 100 Ա: 4) 200 Ա:

1576. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Փոփոխական սինուսոիդական հոսանքի ուժի գործող արժեքը ...

www.atc.am

1) $\sqrt{2}$ անգամ փոքր է հոսանքի ուժի լայնութային արժեքից:

2) $\sqrt{2}$ անգամ մեծ է հոսանքի ուժի լայնութային արժեքից:

3) Հավասար է հոսանքի ուժի լայնութային արժեքին:

4) Զրո է:

1577. Ո՞րն է ճախադասության ճիշտ շարունակությունը:
Փոփոխական հոսանքի ուժի գործող արժեքը...

1) միշտ մեծ է հոսանքի ակնթարթային արժեքից:

2) միշտ փոքր է հոսանքի ակնթարթային արժեքից:

3) միշտ հավասար է հոսանքի ակնթարթային արժեքին:

4) կարող է մեծ, փոքր կամ հավասար լինել հոսանքի ակնթարթային արժեքին:

1578. R դիմադրությունով անցնող փոփոխական հոսանքի լայնութային արժեքը I_0 է, իսկ նրա ծայրերին կիրառված լարման լայնութային արժեքը՝ U_0: Որքա՞ն է նրա վրա անջատված միջին հզորությունը:

1) I_0U_0:

2) $2I_0U_0$:

3) $\frac{I_0U_0}{2}$:

4) $\frac{I_0}{\sqrt{2}}U_0$:

1579. R դիմադրությամբ արդուկում լարումը փոփոխվում է $u = U_0\cos\omega t$ օրենքով: Որքա՞ն է արդուկի միջին հզորությունը:

1) $\frac{U_0^2}{2R}$:

2) $\frac{U_0^2}{R}$:

3) $\frac{U_0^2}{\omega R}$:

4) $\frac{U_0^2}{4R}$:

1580. Հաղորդիչ կոնտուրը υ հաճախությամբ պտտվում է $\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում, որի ընթացքում նրա S մակերեսով մագնիսական հոսքը փոխվում է $\phi = BS\cos(2\pi\upsilon t)$ օրենքով: Ո՞ր արտահայտությամբ է որոշվում կոնտուրում մակածված ԷլՇու-ն:

1) $BS\cos(2\pi\upsilon t)$:

2) $BS\sin(2\pi\upsilon t)$:

3) $2\pi\upsilon BS\cos(2\pi\upsilon t)$:

4) $2\pi\upsilon BS\sin(2\pi\upsilon t)$:

1581. Ո՞ր սարքում է մեխանիկական էներգիան փոխակերպվում էլեկտրական էներգիայի:

www.ato.am

1) Գալվանական էլեմենտում:
2) Էլեկտրաշարժիչում:
3) Արեգակնային մարտկոցում:
4) Էլեկտրական հոսանքի գեներատորում:

1582. Ի՞նչ նպատակով է օգտագործվում տրանսֆորմատորը:

1) Հաստատուն հոսանքի աղբյուրի լարումը փոխելու համար:
2) Հաճախությունը պահելով նույնը՝ փոփոխական լարման լայնույթը փոխելու համար:
3) Փոփոխական հոսանքի հաճախությունը մեծացնելու համար:
4) Փոփոխական լարման հաճախությունը մեծացնելու համար:

1583. Ինչպե՞ս են հարաբերում բարձրացնող տրանսֆորմատորի առաջնային և երկրորդային փաթույթների գալարների N_1 և N_2 թվերը:

1) $N_1 > N_2$:
2) $N_1 < N_2$:
3) $N_1 = N_2$:
4) $N_1 \geq N_2$:

1584. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը՝ $U_1 = 250$ Վ: Ո՞րքա՞ն է U_2 լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 10 է:

1) $U_2 = 2{,}5$ Վ:
2) $U_2 = 25$ Վ:
3) $U_2 = 250$ Վ:
4) $U_2 = 2500$ Վ:

1585. Ի՞նչ երևույթի վրա է հիմնված տրանսֆորմատորի աշխատանքը:

1) Հոսանքի մագնիսական ազդեցության:
2) Հոսանքի ջերմային ազդեցության:
3) Էլեկտրամագնիսական մակածման:
4) Էլեկտրաստատիկ մակածման:

1586. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը U_1 է, հոսանքը՝ I_1, իսկ երկրորդային փաթույթում՝ համապատասխանաբար U_2 և I_2: Ո՞րքա՞ն է տրանսֆորմատորի ՕԳԳ-ն:

1) $\frac{I_2U_2}{I_1U_1}$:
2) $\frac{I_2^2U_2}{I_1^2U_1}$:
3) $\frac{I_1U_1}{I_2U_2}$:
4) $\frac{I_1^2U_1}{I_2^2U_2}$:

www.aic.am

1587. Էլեկտրամագնիսական ալիքներ ստանալու համար ի՞նչ կոնտուր կարելի է օգտագործել:

1) Բաց տատանողական կոնտուր:
2) Փակ տատանողական կոնտուր:
3) Կամայական տատանողական կոնտուր:
4) Նշվածներից ոչ մեկը:

1588. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Միավոր ժամանակում ճառագայթված էլեկտրամագնիսական ալիքի էներգիան ուղիղ համեմատական է ...

1) ալիքի հաճախությանը:
2) ալիքի հաճախության քառակուսուն:
3) ալիքի հաճախության խորանարդին:
4) ալիքի հաճախության չորրորդ աստիճանին:

1589. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Էլեկտրամագնիսական ալիքների տարածման արագությունը...

1) ամենամեծ արժեքն ունի վակուումում:
2) ամենամեծ արժեքն ունի դիէլեկտրիկում:
3) ամենամեծ արժեքն ունի մետաղներում:
4) նույնն է բոլոր միջավայրերում:

1590. Ռադիոընդունիչը համալարված է 100 մ երկարության ալիքի համար: Ռադիոընդունիչի կոնտուրի ինդուկտիվությունը չփոխելով, ինչպե՞ս պետք է փոխել կոնտուրի կոնդենսատորի ունակությունը, որպեսզի ընդունիչն ընդունի 25 մ երկարությամբ ռադիոալիքներ:

1) Մեծացնել 4 անգամ:
2) Մեծացնել 16 անգամ:
3) Փոքրացնել 4 անգամ:
4) Փոքրացնել 16 անգամ:

1591. Ինչպիսի՞ շարժման դեպքում լիցքավորված մասնիկը կճառագայթի էլեկտրամագնիսական ալիք:

1) Կամայական շարժման դեպքում:
2) Միայն ներդաշնակ տատանումների դեպքում:
3) Միայն շրջանագծային շարժման դեպքում:
4) Կամայական արագացմամբ շարժման դեպքում:

1592. Ո՞ր դեպքում է ճառագայթվում էլեկտրամագնիսական ալիք.
ա. էլեկտրոնները ալեցրում կատարում են տատանողական շարժում,
բ. էլեկտրոնները արագացվում են արագարարում:

1) Միայն ա դեպքում:
3) Երկու դեպքում էլ:

www.atc.am

2) Միայն բ դեպքում: 4) Ոչ մի դեպքում:

1593. Ինչպե՞ս են ուղղված էլեկտրամագնիսական ալիքի լարվածության $\vec{E}$ և մագնիսական ինդուկցիայի $\vec{B}$ վեկտորները:

1) $\vec{E} \uparrow\uparrow \vec{B}$: 3) $\vec{E} \perp \vec{B}$:

2) $\vec{E} \uparrow\downarrow \vec{B}$: 4) Հնարավոր է՝ ուղղված լինեն կամայական ձևով:

1594. Դիտարկենք վակուումում էլեկտրոնի երկու տիպի շարժում.
ա. էլեկտրոնը կատարում է տատանողական շարժում,
բ. էլեկտրոնը հավասարաչափ պտտվում է շրջանագծով:
Ո՞ր դեպքում է այն ճառագայթում:

1) Միայն ա: 3) ա և բ դեպքերում:

2) Միայն բ: 4) Երկու դեպքում էլ չի ճառագայթում:

1595. Ինչպե՞ս է կախված տատանվող լիցքի առաքած էլեկտրամագնիսական ալիքի էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը տատանումների ν հաճախությունից:

1) Ուղիղ համեմատական է ν-ին:

2) Ուղիղ համեմատական է ν^2-ին:

3) Ուղիղ համեմատական է ν^3-ին:

4) Ուղիղ համեմատական է ν^4-ին:

1596. Ինչպե՞ս պետք է փոխել տատանողական կոնտուրի ունակությունը, որպեսզի նրա առաքած էլեկտրամագնիսական ալիքների երկարությունը մեծանա 2 անգամ:

1) Մեծացնել 4 անգամ: 3) Փոքրացնել 2 անգամ:

2) Մեծացնել 2 անգամ: 4) Փոքրացնել 4 անգամ:

1597. Ինչպե՞ս են ուղղված էլեկտրամագնիսական ալիքի էլեկտրական դաշտի $\vec{E}$ լարվածության, մագնիսական դաշտի $\vec{B}$ ինդուկցիայի և ալիքի տարածման $\vec{v}$ արագության վեկտորները:

1) $\vec{E} \perp \vec{B}$, $\vec{E} \parallel \vec{v}$, $\vec{B} \parallel \vec{v}$: 3) $\vec{E} \parallel \vec{B}$, $\vec{E} \perp \vec{v}$, $\vec{B} \perp \vec{v}$

2) $\vec{E} \perp \vec{B}$, $\vec{E} \perp \vec{v}$, $\vec{B} \perp \vec{v}$: 4) $\vec{E} \parallel \vec{B}$, $\vec{E} \parallel \vec{v}$, $\vec{B} \parallel \vec{v}$:

www.atc.am

11.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1598. Ուղղագիծ հաղորդիչը, որի երկարությունը 0,8 մ է, տեղավորված է համասեռ մագնիսական դաշտում՝ ուղղահայաց նրա ինդուկցիայի վեկտորին, որի մոդուլը 20 Տլ է: Որքա՞ն է հաղորդչով անցնող հոսանքի ուժը, եթե նրա վրա մագնիսական դաշտի ազդող ուժը 48 Ն է:

1599. Ուղղագիծ հաղորդիչը տեղավորված է 5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է հաղորդչի տեղամասի երկարությունը, եթե մագնիսական դաշտը նրա վրա ազդում է 20 Ն ուժով, երբ նրա մեջ հոսանքի ուժը 1 Ա է:

1600. 0,2 մ երկարությամբ ուղղագիծ հաղորդիչը տեղադրված է 4 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Որքա՞ն է այն ուժը, որով մագնիսական դաշտն ազդում է հաղորդչի վրա, եթե նրանում հոսանքի ուժը 5 Ա է, և այն մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերի հետ կազմում է 30^0 անկյուն:

1601. Ի՞նչ անկյուն է կազմում ուղղագիծ հաղորդիչը 20 Տլ ինդուկցիա ունեցող համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերի հետ, եթե յուրաքանչյուր 0,2 մ երկարությամբ տեղամասի վրա ազդում է 4 Ն ուժ, երբ նրա մեջ հոսանքի ուժը 2 Ա է:

1602. Հորիզոնական դիրքում գտնող 2 մ երկարությամբ և 4 կգ զանգվածով ուղիղ հոսանքակիր հաղորդալարով անցնում է 2 Ա հոսանք: Հաղորդալարը տեղադրված է հորիզոնական ուղղությամբ համասեռ մագնիսական դաշտում, որի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են հաղորդալարին: Որքա՞ն պետք է լինի մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, որպեսզի հաղորդալարը գտնվի կախված վիճակում:

1603. 0,4 մ երկարությամբ և 1 կգ զանգվածով հաղորդիչ ձողը դրված է իդեալական ողորկ հորիզոնական մակերևույթի վրա՝ 0,5 Տլ ինդուկցիայով ուղղածիգ համասեռ մագնիսական դաշտում: Ի՞նչ ուժի հոսանք պետք է անցնի ձողով, որպեսզի այն սկսի շարժվել 2 մ/վ^2 արագացումով:

1604. 1 մ երկարությամբ հաղորդիչը, որի միջով անցնում է 5 Ա հոսանք, տեղադրված է 10 Տլ ինդուկցիա ունեցող համասեռ մագնիսական դաշտում՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին: Որքա՞ն աշխատանք է կա-

www.atc.am

տարել Ամպերի ուժն իր ազդման ուղղությամբ հաղորդիչը 0,2 մ տեղափոխելու համար:

1605. 10^7 մ/վ արագությամբ շարժվող լիցքավորված մասնիկը մտնում է 20 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին: Որքա՞ն է մասնիկի վրա մագնիսական դաշտի ազդող ուժի մեծությունը, եթե նրա լիցքը $3,2 \cdot 10^{-7}$ Կլ է:

1606. 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտի ուժագծերի նկատմամբ ի՞նչ անկյան տակ է մտել 10^7 մ/վ արագությամբ շարժվող էլեկտրոնը, եթե նրա վրա մագնիսական դաշտի ազդող ուժը $0,8 \cdot 10^{-13}$ Ն է:

1607. Էլեկտրոնը մտնում է $9 \cdot 10^{-3}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին, և շարժվում է 10^{-2} մ շառավղով շրջանագծով: Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1608. Էլեկտրոնը $5,625 \cdot 10^6$ մ/վ արագությամբ շարժվում է 0,01 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է էլեկտրոնի շարժման արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^{-16}-ով:

1609. Պրոտոնը և α-մասնիկը համասեռ մագնիսական դաշտ են թափանցում նույն արագությամբ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է պրոտոնի և α-մասնիկի արագացումների հարաբերությունը, եթե $q_\alpha = 2q_p$, և $m_\alpha = 4m_p$:

1610. Պրոտոնը շարժվում է համասեռ մագնիսական դաշտում 0,5 մ շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նույն մագնիսական դաշտում այն շրջանագծի շառավիղը, որով կշտտվի α-մասնիկը, եթե ունենա նույն արագությունը: $q_\alpha = 2q_p$ և $m_\alpha = 4m_p$:

1611. Լիցքավորված մասնիկի վրա էլեկտրական դաշտի ազդող ուժը քանի՞ անգամ է մեծ մագնիսական դաշտի ազդող ուժից, եթե էլեկտրական դաշտի լարվածությունը $1,5 \cdot 10^3$ Վ/մ է, իսկ մագնիսական դաշտի ինդուկցիան 0,1 Տլ: Լիցքավորված մասնիկի շարժման արագությունը 200 մ/վ է և ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերին:

www.ato.am

1612. Ինդուկցիայի գծերին ուղղահայաց համասեռ մագնիսական դաշտ են մտնում պրոտոնը և α-մասնիկը: Քանի՞ անգամ է α-մասնիկի շարժման արագությունը մեծ պրոտոնի շարժման արագությունից, եթե α-մասնիկի վրա մագնիսական դաշտի ազդող ուժը 8 անգամ մեծ է պրոտոնի վրա ազդող ուժից: α-մասնիկի լիցքը $3,2\cdot10^{-19}$ Կլ է:

1613. $4\cdot10^{6}$ մ/վ արագությամբ շարժվող լիցքավորված մասնիկը մտնում է համասեռ մագնիսական դաշտ, նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ 60^{0} անկյան տակ և սկսում է պտտվել $2\cdot10^{6}$ $վ^{-1}$ հաճախությամբ: Որքա՞ն է գալարագծի քայլը, որով շարժվում է մասնիկը:

1614. Էլեկտրոնը մտնում է $5\cdot10^{-3}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերին ուղղահայաց, և դաշտի ազդեցությամբ շարժվում է 0,1 մ շառավղով շրջանագծով: Որքա՞ն է էլեկտրոնի իմպուլսի մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^{23}-ով:

1615. $4\cdot10^{-5}$ Կլ լիցք և 10^{-9} կգ զանգված ունեցող մասնիկը մտնում է 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ 30^{0} անկյան տակ, և շարժվում է 0,4 մ շառավիղ ունեցող գալարագծով: Որքա՞ն է մասնիկի շարժման արագությունը:

1616. 10 սմ կողմով քառակուսի շրջանակը տեղադրված է 2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին: Ի՞նչ անկյունով պետք է պտտել շրջանակը, որպեսզի շրջանակով սահմանափակված մակերևույթով թափանցող մագնիսական հոսքը փոխվի 10^{-2}Վբ-ով:

1617. 0,5 $մ^{2}$ մակերեսով հարթ շրջանակը տեղադրված է 4 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակի հարթությանը: Որքա՞ն է մագնիսական դաշտի հոսքը շրջանակով սահմանափակված մակերևույթով:

1618. 50 սմ կողմով քառակուսի կոնտուրը տեղադրված է 40 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ կոնտուրի նորմալը ինդուկցիայի վեկտորի հետ կազմում է 60^{0} անկյուն: Որքա՞ն է մագնիսական հոսքը կոնտուրով սահմանափակված հարթ մակերևույթով:

www.aic.am

1619. Հարթ հաղորդիչ կոնտուր թափանցող մագնիսական հոսքը 0,15 վ-ում նվազում է 0,75 Վբ-ից մինչև 0,15 Վբ: Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ն:

1620. 10^{-3} մ^2 մակերես ունեցող հարթ հաղորդիչ կոնտուրը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի բացարձակ արժեքը, եթե մագնիսական ինդուկցիան կոնտուրում $4\cdot10^{-4}$ վ-ում հավասարաչափ նվազում է 0,5 Տլ-ից մինչև 0,1 Տլ:

1621. Հաղորդալարի քանի՞ գալարից պետք է բաղկացած լինի 0,005 մ^2 լայնական հատույթի մակերեսով փաթույթը, որպեսզի նրա մեջ մագնիսական ինդուկցիան 0,005 վ-ի ընթացքում 0,1 Տլ-ից մինչև 1,1 Տլ փոխվելիս մակածվի 100 Վ ԷլՇՈւ:

1622. Հաղորդալարի $2\cdot10^{-3}$ մ^2 մակերեսով շրջանակը տեղադրված է 5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Ինդուկցիայի վեկտորը ուղղահայաց է շրջանակի հարթությանը: Շրջանակը 0,5 վ-ի ընթացքում պտտում են 180^0-ով: Որքա՞ն կլինի կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1623. Կոճն ունի 200 գալար: Կոճ թափանցող մագնիսական հոսքի արժեքը 0,2 վ-ում հավասարաչափ նվազեց $1,5\cdot10^{-2}$ Վբ-ից մինչև 0: Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ն:

1624. Որքա՞ն է հաղորդիչ կոնտուր ներթափանցող մագնիսական հոսքի փոփոխման արագությունը, եթե կոնտուրում մակածված է 6 Վ ԷլՇՈւ:

1625. Որքա՞ն է մակածման ԷլՇՈւ-ն 0,4 մ երկարությամբ ուղիղ հաղորդալարում, որը 5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվում է 3 մ/վ արագությամբ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ:

1626. 0,5 մ երկարությամբ ուղիղ հաղորդալարը համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ շարժվում է 2 մ/վ արագությամբ: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիայի մեծությունը, եթե հաղորդալարում մակածվում է 4 Վ ԷլՇՈւ:

1627. Ուղիղ հաղորդիչը շարժվում է 25 մ/վ արագությամբ $15,2\cdot10^{-3}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին

www.atc.am

ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է հաղորդալարի երկարությունը, եթե նրա ծայրերին առաջացել է 380 մՎ լարում:

1628. Ինդուկցիայի գծերի նկատմամբ ի՞նչ անկյան տակ պետք է 10 մ/վ արագությամբ շարժվի 0,4 մ երկարությամբ հաղորդիչը, որպեսզի նրա մեջ մակածվի 2 Վ էլՇՈւ: Մագնիսական դաշտի ինդուկցիան 0,5 Տլ է:

1629. Ինքնաթիռը թռչում է հորիզոնական ուղղությամբ՝ 300 մ/վ արագությամբ: Որքա՞ն է նրա թևերի ծայրերի միջև մակածված էլՇՈւ-ն, եթե Երկրի մագնիսական դաշտի ինդուկցիայի ուղղահայաց բաղադրիչը $5\cdot10^{-4}$ Տլ է, իսկ հեռավորությունը թևերի ծայրակետերի միջև՝ 20 մ:

1630. Ինչքա՞ն պետք է լինի հոսանքի ուժը 0,5 Հն ինդուկտիվություն ունեցող կոճի փաթույթում, որպեսզի կոճի մագնիսական դաշտի էներգիան լինի 1 Ջ:

1631. 0,4 Հն ինդուկտիվությամբ կոճում հոսանքի ուժը 20 Ա է: Որքա՞ն է այդ կոճի մագնիսական դաշտի էներգիան:

1632. Որքա՞ն է 0,25 Հն ինդուկտիվությամբ կոճով անցնող հոսանքի ուժը, եթե կոճի մագնիսական դաշտն օժտված է 18 Ջ էներգիայով:

1633. Ի՞նչ մագնիսական հոսք կառաջանա 0,2 Հն ինդուկտիվություն ունեցող կոճում 20 Ա հոսանքի ուժի դեպքում:

1634. Որքա՞ն ինքնամակածման էլՇՈւ կծագի 0,4 Հն ինդուկտիվություն ունեցող էլեկտրամագնիսի փաթույթում, եթե նրա մեջ 0,02 վ-ի ընթացքում հոսանքի ուժը հավասարաչափ փոխվում է 5 Ա-ով:

1635. 56-րդ նկարում պատկերված է կոճում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է ինքնամակածման էլՇՈւ-ն, եթե կոճի ինդուկտիվությունը 6 Հն է:



Նկ. 56

1636. $6\cdot10^{-3}$ Հն ինդուկտիվությամբ սոլենոիդում հոսանքը 3 վ-ի ընթացքում հավասարաչափ փոխելիս նրա մեջ ինքնա-

www.atc.am

մակածման ԷլՇՈւ-ն $8\cdot10^{-3}$ Վ է: Որքա՞ն է հոսանքի ուժի փոփոխության մոդուլը:

1637. Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը, եթե մագնիսական հոսքը 4 Վբ-ից մինչև 2 Վբ փոխվելու դեպքում մագնիսական դաշտի էներգիան փոքրանում է 3 Ջ-ով:

1638. Հաղորդիչ շրջանակում հոսանքի ուժը 0,15 Ա է: Շրջանակով սահմանափակված մակերևույթով հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի ինդուկցիայի հոսքը 0,6 Վբ է: Որքա՞ն է շրջանակի ինդուկտիվությունը:

1639. Քանի՞ անգամ կմեծանա կոնտուրում սեփական տատանումների պարբերությունը, եթե օդային հարթ կոնդենսատորի թիթեղների միջև տեղադրենք 4 դիէլեկտրական թափանցելիությամբ կարծր դիէլեկտրիկ:

1640. Քանի՞ անգամ կմեծանա կոնտուրի սեփական տատանումների պարբերությունը, եթե օդային կոնդենսատորը փոխարինվի նորով, որի շրջադիրի մակերեսը 6 անգամ մեծ է նախկինից, և շրջադիրների միջև տեղադրվի $\varepsilon = 1{,}5$ դիէլեկտրական թափանցելիությամբ կարծր դիէլեկտրիկ:

1641. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի ունակությունը $5\cdot10^{-11}$ Ֆ է, իսկ ազատ տատանումների շրջանային հաճախությունը՝ 10^{8} վ$^{-1}$: Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Պատասխանը բազմապատկել 10^{6}-ով:

1642. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը $2\cdot10^{-6}$ ՀՆ է, իսկ ազատ տատանումների շրջանային հաճախությունը՝ $5\cdot10^{5}$ վ$^{-1}$: Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{6}-ով:

1643. Տատանողական կոնտուրը բաղկացած է $4\cdot10^{-8}$ Ֆ ունակությամբ կոնդենսատորից և 0,01 ՀՆ ինդուկտիվությամբ կոճից: Լարման լայնութային արժեքը 500 Վ է: Որքա՞ն է հոսանքի ուժի տատանման լայնույթը:

www.atc.am

1644. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարումը 20 Վ-ով մեծացնելիս հոսանքի ուժի տատանման լայնույթը կոնտուրում մեծացավ 2 անգամ: Որքա՞ն է սկզբնական լարումը:

1645. Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Քանի՞ անգամ մեծացավ կոճի մագնիսական դաշտի առավելագույն էներգիան:

1646. 10^{-4} Ֆ ունակությամբ կոնդենսատորը լիցքավորեցին մինչև 400 Վ լարումը և միացրին կոճին: Դրանից հետո կոնտուրում առաջացան մարող տատանումներ: Որքա՞ն ջերմաքանակ է անջատվում կոնտուրում այն ժամանակամիջոցում, որի ընթացքում լարման լայնույթը փոքրանում է 2 անգամ:

1647. Փոփոխական հոսանքի շրջանային հաճախությունը 100π վ$^{-1}$ է: Որքա՞ն է հոսանքի հաճախությունը:

1648. 0,02 մ^2 մակերես ունեցող ուղղանկյունաձև շրջանակը պտտվում է 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ նրա մեջ մակածված ԷլՇՈւ-ի լայնութային արժեքը 10 Վ է: Ի՞նչ անկյունային արագությամբ է պտտվում շրջանակը:

1649. Փոփոխական հոսանքի շղթայի տեղամասի ծայրերում լարումը փոխվում է $u = U_o \sin \omega t$ օրենքով: Որքա՞ն է լարման լայնութային արժեքը, եթե $t = \frac{T}{12}$ պահին լարման ակնթարթային արժեքը 10 Վ է:

1650. Ի՞նչ լարման համար պետք է նախատեսել էլեկտրահաղորդման գծի մեկուսիչները, եթե լարման գործող արժեքը 430 Վ է:

1651. Տրանսֆորմատորը միացված է 120 Վ լարում ունեցող ցանցին: Առաջնային փաթույթի գալարների թիվը 300 է: Քանի՞ գալար պետք է ունենա երկրորդային փաթույթը, որպեսզի նրա ծայրերում լարումը լինի 6,4 Վ:

1652. Իդեալական տրանսֆորմատորի առաջնային փաթույթում հոսանքի ուժը 5 Ա է: Որքա՞ն է հոսանքի ուժը երկրորդային փաթույթում, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 0,6 է:

www.atc.am

1653. Տրանսֆորմատորը միացված է 110 Վ լարման ցանցին: Առաջնային փաթույթի գալարների թիվը 165 է: Որքա՞ն կլինի լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե այն ունի 12 գալար:

1654. 22 Օմ դիմադրությամբ էլեկտրաջեռուցիչը միացված է փոփոխական հոսանքի գեներատորին: Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի ջեռուցիչում 30 վ- ում, եթե հոսանքի ուժի լայնութային արժեքը 4 Ա է:

1655. Բաց տատանողական կոնտուրում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխվում է $i = 0{,}1\cos\left(6\cdot 10^5 \pi t\right)$ օրենքով: Որքա՞ն է կոնտուրի առաքած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում:

1656. Ինչ-որ միջավայրում 10^6 Հց հաճախությամբ էլեկտրամագնիսական ալիքը տարածվում է $2\cdot 10^8$ մ/վ արագությամբ: Որքա՞ն է այդ ալիքի երկարությունը:

1657. Ռադիոտեղորոշիչը վակուումում արձակում է 10 սմ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիք: Որքա՞ն է տատանումների հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-9}-ով:

1658. Տատանողական կոնտուրը համալարված է 12 մ երկարության ալիքի վրա: Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը, եթե կոնտուրի ինդուկտիվությունը $4\cdot 10^{-7}$ Հն է: Ընդունել՝ $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10^{11}-ով:

1659. Ընդունող անտենայի տատանողական կոնտուրի ունակությունը 10^{-9} Ֆ է: Ինչքան պետք է լինի կոնտուրի ինդուկտիվությունը, որպեսզի կարողանա ընդունել 300 մ երկարությամբ ռադիոալիքներ: Ընդունել՝ $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1660. Ռադիոտեղորոշիչն աշխատում է 0,15 մ երկարությամբ ալիքով, իսկ յուրաքանչյուր իմպուլսի տևողությունը $2\cdot 10^{-6}$ վ է: Քանի՞ տատանում է պարունակում յուրաքանչյուր իմպուլսը:

1661. Տատանողական կոնտուրի կոճում հոսանքի ուժը 0,4 վայրկյանում 1 Ա-ով հավասարաչափ փոքրացնելիս մակածվում է $0{,}5\cdot 10^{-7}$ Վ ԷՇՈւ: Որքա՞ն կլինի այդ կոնտուրի ճառագայթած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում, եթե կոնտուրի ունակությունը $2\cdot 10^{-8}$ Ֆ է: Ընդունել՝ $\pi = 3$:

www.atc.am

11.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1662. Էլեկտրոնը 0,02 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվում է շրջանագծով՝ ունենալով $28{,}8\cdot10^{-21}$ կգ·մ/վ իմպուլս:

1) Որքա՞ն է էլեկտրոնի վրա մագնիսական դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:
2) Որքա՞ն է էլեկտրոնի հետագծի շառավիղը:

1663. Երկու իոններ, դադարի վիճակից անցնելով նույն արագացնող պոտենցիալների տարբերությունը, մտնում են համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Իոններից առաջինը շարժվում է 5 սմ շառավղով շրջանագծով, իսկ երկրորդը՝ 2,5 սմ: Երկրորդ իոնի լիցքը երկու անգամ մեծ է առաջին իոնի լիցքից:

1) Որքա՞ն է իոնների իմպուլսների հարաբերությունը:
2) Քանի՞ անգամ է առաջին իոնի զանգվածը մեծ երկրորդ իոնի զանգվածից:

1664. U = 200 Վ պոտենցիալների տարբերությամբ արագացված լիցքավորված մասնիկը A կետում մտնում է $B = 4\cdot10^{-3}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին և շերտի եզրին ուղղահայաց (նկ. 57): Մասնիկը մագնիսական դաշտից դուրս է գալիս դաշտի եզրին ուղղահայաց՝ այդ կետից L = 1 մ հեռավորությամբ C կետից:

1) Որքա՞ն է մասնիկի արագությունը մագնիսական դաշտում: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
2) Որքա՞ն է մասնիկի տեսակարար լիցքը (q/m): Պատասխանը բազմապատկել 10^{-8}-ով:



Նկ. 57

1665. $2\cdot10^{-3}$ մ² մակերեսով և 2 Օմ դիմադրությամբ հարթ շրջանակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին: Մագնիսական դաշտը նվազում է $2\cdot10^{3}$ Տլ/վ հաստատուն արագությամբ:

1) Որքա՞ն է շրջանակում մակածված ԷլՇՈւ-ն:
2) Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի ուժը:

www.atc.am

1666. **$8\cdot10^{-2}$ մ^2 մակերեսով օղակաձև շրջանակի դիմադրությունը 4 Օմ է: Օղակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ նրա հարթությունն ուղղահայաց է ինդուկցիայի վեկտորին: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը նվազում է 50 Տլ/վ արագությամբ:**

1) Որքա՞ն է օղակում մակածված ԷլՇՈւ-ն:
2) Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի օղակում 2 վ-ում:

1667. **Տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարումը ժամանակից կախված փոխվում է $U = 50\cos(10^4\pi t)$ բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Կոնդենսատորի ունակությունը $2\cdot10^{-7}$ Ֆ է:**

1) Որքա՞ն է տատանողական կոնտուրի հաճախությունը:
2) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Ընդունել՝ $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1668. **Լիցքավորված կոնդենսատորը միացրին կոճին: Ժամանակի ինչ-որ պահի տատանողական կոնտուրում էլեկտրական դաշտի էներգիան երեք անգամ մեծ է մագնիսական դաշտի էներգիայից:**

1) Կոնդենսատորի լարումն այդ պահին լարման լայնութային արժեքի ո՞ր տոկոսն է կազմում:
2) Միացումից հետո մինչև այդ պահն անցած ժամանակամիջոցը քանի՞ անգամ է փոքր տատանման պարբերությունից:

1669. **Տատանողական կոնտուրում կոնդենսատորի ունակությունը $16\cdot10^{-4}$ Ֆ է, իսկ կոճի ինդուկտիվությունը՝ $4\cdot10^{-2}$ Հն: Կոնդենսատորը լիցքավորեցին մինչև 100 Վ լարումը:**

1) Որքա՞ն էլեկտրական էներգիա հաղորդեցին կոնդենսատորին:
2) Որքա՞ն է կոնտուրում հոսանքի առավելագույն արժեքը:

1670. **$4\cdot10^{-6}$ Ֆ ունակությամբ լիցքավորված կոնդենսատորը միացրին $9\cdot10^{-2}$ Հն ինդուկտիվությամբ կոճին:**

1) Որքա՞ն է տատանողական կոնտուրում առաջացած ազատ էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:
2) Կոճին միացնելուց հետո, նվազագույնը որքա՞ն ժամանակում կոնդենսատորի լիցքը կփոքրանա 2 անգամ: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

www.atc.am

1671. Փոփոխական հոսանքի շղթայի տեղամասի ծայրերում լարումը ժամանակից կախված փոխվում է $U = U_0 \sin(\omega t)$ օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի $t = T/12$ պահին, որտեղ T-ն պարբերություն է, լարման ակնթարթային արժեքը 15 Վ է:

1) Որքա՞ն է լարման լայնութային արժեքը:
2) Որքա՞ն է լարման գործող արժեքը:

1672. Շրջանակում մակածված ԷլՇՈւ-ի կախումը ժամանակից որոշվում է $\varepsilon_i = 100\sin(800\pi t)$ բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

1) Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ի լայնութային արժեքը:
2) Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ի տատանման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^4- ով:

1673. Տրանսֆորմատորը լարումը 100 Վ-ից մեծացնում է մինչև 560 Վ: Փաթույթներից մեկի վրա հագցված մի գալարի ծայրերին լարումը 0,4 Վ է:

1) Քանի՞ գալար ունի տրանսֆորմատորի առաջնային փաթույթը:
2) Տրանսֆորմատորի երկրորդային փաթույթը քանի՞ գալարով է գերազանցում առաջնայինին:

www.atc.am

11.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1674. 10^{-2} կգ զանգվածով և 0,2 մ երկարությամբ ուղիղ հաղորդիչը հորիզոնական դիրքով մեկուսիչ թելերով կախված է համասեռ մագնիսական դաշտում: 0,25 Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտն ուղղված է ուղղածիգ: Հաղորդիչով անցնում է 2 Ա հոսանք: Թելերի զանգվածն անտեսել:

1) Որքա՞ն է հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է հավասարակշռության դիրքում թելերի շեղման անկյունն ուղղածիգից:
3) Որքա՞ն է հավասարակշռության դիրքում յուրաքանչյուր թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1675. 140 սմ երկարությամբ հոսանքակիր հաղորդալարը ծռված է 90^0 անկյան տակ: Անկյան մի կողմի երկարությունը 60 սմ է: Հաղորդալարը տեղադրված է 0,2 Տլ համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ անկյան կողմերն ուղղահայաց են ինդուկցիայի գծերին: Հաղորդալարով անցնում 10 Ա հոսանք:

1) Որքա՞ն է անկյան երկար կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է կարճ կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է ամբողջ հաղորդալարի վրա մագնիսական դաշտի ազդող համազոր ուժը:

1676. Հաղորդալարից պատրաստված քառակուսաձև կոնտուրի զանգվածը 100 գ է, իսկ կողմի երկարությունը 1մ է: Կոնտուրը կարող է պտտվել հորիզոնական առանցքի շուրջ, որը համընկնում է կողմերից մեկի հետ: Կոնտուրը տեղադրված է ուղղածիգ ուղղված 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Կոնտուրով հոսանք բաց թողնելուց հետո, այն ուղղածիգի հետ կազմելով 45^0 անկյուն, հայտնվում է հավասարակշռության վիճակում:

1) Որքա՞ն է կոնտուրի վրա ազդող ծանրության ուժի բազուկը պտտման առանցքի նկատմամբ: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է կոնտուրի վրա ազդող ծանրության ուժի մոմենտը պտտման առանցքի նկատմամբ: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
3) Որքա՞ն է կոնտուրով անցնող հոսանքի ուժը:

www.afc.am

1677. Երկու բացասական լիցքավորված մասնիկներ մտնում են 0,2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Մասնիկներից առաջինի լիցքի մոդուլը երկու անգամ մեծ է երկրորդի լիցքի մոդուլից: Երկու մասնիկներն էլ շարժվում են շրջանագծի աղեղներով, առաջինը՝ 0,4 մ շառավղով, երկրորդը՝ 0,2 մ: Երկու մասիկներն այնուհետև մտնում են էլեկտրաստատիկ դաշտ, որտեղ, անցնելով 128 Վ պոտենցիալների տարբերություն, երկուսի արագությունները փոքրանում են 3 անգամ:

1) Մագնիսական դաշտում շարժվելիս քանի՞ անգամ է առաջին մասնիկի իմպուլսը մեծ երկրորդ մասնիկի իմպուլսից:
2) Որքա՞ն է առաջին մասնիկի վերջնական արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
3) Որքա՞ն է երկրորդ մասնիկի վերջնական արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:

1678. Էլեկտրոնը, դադարի վիճակից անցնելով 180 Վ արագացնող պոտենցիալների տարբերություն, մտնում է 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերի նկատմամբ 60° անկյան տակ:

1) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը մագնիսական դաշտ մտնելիս: Պատասխանը բազմապատկել 10^{-6}- ով:
2) Որքա՞ն է էլեկտրոնի պտտման պարբերությունը մագնիսական դաշտում: Պատասխանը բազմապատկել 10^{14}-ով:
3) Որքա՞ն է էլեկտրոնի շարժման գալարագծի քայլը: Պատասխանը բազմապատկել 10^{7}- ով:

1679. Լայնական հատույթի $2 \cdot 10^{-2}$ մ^2 մակերեսով փաթույթը, որը պարունակում է 500 գալար, տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ ինդուկցիայի վեկտորը զուգահեռ է կոճի առանցքին: Մագնիսական դաշտը 0,1 վ-ում հավասարաչափ նվազում է 0,5 Տլ-ով, որի հետևանքով կոճում անջատվում է 500 Ջ ջերմաքանակ:

1) Որքա՞ն է կոճում մակածված ԷՇՈւ-ն:
2) Որքա՞ն է կոճի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն լիցք անցավ կոճով այդ ընթացքում:

1680. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը 0,3 Հն է, իսկ հոսանքի ուժի տատանումների լայնույթը՝ $4 \cdot 10^{-2}$ Ա:

www.atc.am

1) Որքա՞ն է տատանողական կոնտուրի լրիվ էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^5- ով:
2) Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիան, երբ հոսանքի ուժի ակնթարթային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկել 10^5- ով:
3) Որքա՞ն է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան, երբ հոսանքի ուժի ակնթարթային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկել 10^5- ով:

1681. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի շրջադիրների լարումը ժամանակից կախված փոխվում է $U = 100\cos(1000\pi)$ օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Կոնդենսատորի ունակությունը 10^{-6} Ֆ է:

1) Որքա՞ն է էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:
2) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Ընդունել՝ $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը: Ընդունել՝ $\sqrt{10} = \pi = 3{,}14$: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:

1682. Բաց տատանողական կոնտուրի ունակությունը $2\cdot10^{-8}$ Ֆ է, իսկ նրա կոճում հոսանքի ուժը 0,4 վայրկյանում 1 Ա-ով հավասարաչափ նվազելիս մակածվում է $0{,}5\cdot10^{7}$ Վ ԷլՇՈւ:

1) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Պատասխանը բազմապատկել 10^8- ով:
2) Որքա՞ն է կոնտուրի շրջանային հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-7}- ով:
3) Որքա՞ն է կոնտուրի ճառագայթած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1683. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթն ունի 2200 գալար և միացված է 220 Վ լարման ցանցին: Երկրորդային փաթույթի ակտիվ դիմադրությունը 1 Օմ է: Երկրորդային փաթույթին միացված է ռաղիոլամպ, որի սեղմնակների վրա լարումը 4 Վ է, իսկ հոսանքի ուժը՝ 1 Ա:

1) Որքա՞ն է լամպի դիմադրությունը:
2) Որքա՞ն է երկրորդային փաթույթում մակածված ԷլՇՈւ-ն:
3) Որքա՞ն է երկրորդային փաթույթի գալարների թիվը:

www.atc.am

11.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1684. Հորիզոնական ռելսերի վրա դրված 100 գ զանգվածով, 50 սմ երկարությամբ հաղորդիչ ձողը տեղադրված է 0,2 Տլ ինդուկցիայով հորիզոնական ուղղությամբ ուղղված համասեռ մագնիսական դաշտում (նկ. 58): Ձողով անցնում է 5 Ա հոսանք: Ձողը ռելսերի նկատմամբ տեղաշարժելու համար, անհրաժեշտ է կիրառել հորիզոնական ուղղված 0,4 Ն փոքրագույն ուժ:



Նկ. 58

1) Որքա՞ն է ձողի վրա մագնիսական դաշտի կողմից ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ձողի վրա ազդող ռելսերի հակազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է ձողի և ռելսերի միջև շփման գործակիցը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
4) Ինչպիսի՞ փոքրագույն հորիզոնական ուժ պետք է կիրառել ձողի վրա, այն տեղից շարժելու համար, եթե մագնիսական դաշտի ինդուկցիան ունի հակառակ ուղղությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1685. $2\cdot10^{-3}$ կգ զանգված, 10^{-2} Կլ լիցք ունեցող գնդիկը կախված է 20 սմ երկարությամբ մեկուսիչ թելից՝ հորիզոնական ուղղված 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում (նկ. 59): Մագնիսական դաշտի ինդուկցիան ուղղված է դեպի դիտորդը: Թելը բեռի հետ շեղում են մինչև հորիզոնական դիրքը այն հարթության մեջ, որն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին և բաց թողնում: Օդի դիմադրությունն անտեսել:



Նկ. 59

1) Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:
2) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող Լորենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

www.atc.am

3) Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:
4) Որքա՞ն է թելի լարման ուժը, գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1686. $2\cdot10^{-4}$ կգ զանգվածով և $4\cdot10^{-3}$ Կլ լիցքով մասնիկը 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում գծում է 10 սմ շառավղով շրջանագիծ: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին զուգահեռ միացնում են 100 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտ:

1) Որքա՞ն է միայն մագնիսական դաշտի ազդեցության ընթացքում մասնիկի շարժման արագությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է մասնիկին էլեկտրական դաշտի հաղորդված արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^{3}- ով:
3) Որքա՞ն ժամանակ պետք է միացնել էլեկտրական դաշտը, որպեսզի մասնիկի կինետիկ էներգիան մեծանա երկու անգամ: Պատասխանը բազմապատկել 10^4- ով:
4) Որքա՞ն ճանապարհ կանցնի մասնիկն էլեկտրական դաշտի ուղղությամբ էլեկտրական դաշտի միացման ընթացքում: Պատասխանը բազմապատկել 10^5- ով:

www.atc.am

12. ՕՊՏԻԿԱ

12.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1687. Ինչպիսի՞ միջավայրում է լույսը տարածվում ուղղագիծ:

1) Միայն անհամասեռ միջավայրում:
2) Կամայական միջավայրում:
3) Օպտիկապես համասեռ, թափանցիկ միջավայրում:
4) Կամայական թափանցիկ միջավայրում:

1688. Լույսի ինչպիսի՞ աղբյուրի օգնությամբ կարելի է ստանալ կիսաստվեր:

1) Կետային աղբյուրի:
2) Բնական աղբյուրի:
3) Արհեստական աղբյուրի:
4) Աղբյուրի, որի չափերը շատ փոքր չեն մինչև առարկան հեռավորության համեմատությամբ:

1689. Նկարում պատկերված են լույսի գնդաձև *S* աղբյուրը, անթափանց *A* գունդը և էկրանը: Ո՞ր կետն է գտնվում ստվերում:



1) b:
2) a, c:
3) a, b, c:
4) d:

1690. Ինչպե՞ս է փոխվում ուղղաթիռի ստվերի չափը, երբ արևային եղանակին այն ուղղաձիգ բարձրանում է թռիչքահրապարակից:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Փոխվում է կամայական ձևով:

1691. Ինչպե՞ս է փոխվում ծառի ստվերի երկարությունը արևոտ օրվա ընթացքում:

1) Նույնն է ամբողջ օրվա ընթացքում:
2) Ամենակարճն է, երբ Արեգակը հորիզոնից ամենաբարձր կետում է:
3) Ամենակարճն է, երբ Արեգակը ծագում է, և ամենաերկարն է, երբ մայր է մտնում:
4) Ամենաերկարն է, երբ Արեգակը ծագում է, և ամենակարճն է, երբ մայր է մտնում:

www.atc.am

1692. Մակերևույթի անհարթությունների բնորոշ l չափի և ընկնող լույսի λ ալիքի երկարության ի՞նչ հարաբերակցության դեպքում է անդրադարձումն այդ մակերևույթից կոչվում հայելային:

1) $l << \lambda$:
2) $l >> \lambda$:
3) $l \leq \lambda$:
4) $l > \lambda$:

1693. Որքա՞ն է անդրադարձման անկյունը, եթե անկման անկյունը 60^0 է:

1) 30^0:
2) 60^0:
3) 90^0:
4) 120^0:

1694. Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը, եթե անդրադարձող ճառագայթն ընկնող ճառագայթի հետ կազմում է ուղիղ անկյուն:

1) 45^0:
2) 90^0:
3) 135^0:
4) 180^0:

1695. Ինչպե՞ս է փոխվում ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը՝ անկման անկյունը 10^0-ով մեծացնելիս:

1) Մեծանում է 5^0-ով:
2) Մեծանում է 10^0-ով:
3) Մեծանում է 20^0-ով:
4) Չի փոխվում:

1696. Ճառագայթը հարթ հայելու վրա ընկնում է 40^0 անկյան տակ: Որքա՞ն է անդրադարձած ճառագայթի և հայելու մակերևույթի կազմած անկյունը:

1) 140^0:
2) 80^0:
3) 50^0:
4) 40^0:

1697. Նկարների ո՞ր զույգն է պատկերում լույսի ճառագայթի շրջելիությունը:



1) ա և բ:
2) գ և դ:
3) ա և դ:
4) բ և գ:

1698. Ո՞րն է մատիտի ճիշտ պատկերը հարթ հայելում:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



www.aic.am

1699. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի կետային աղբյուրից հարթ հայելու վրա ընկնող ճառագայթները…

1) անդրադառնում են՝ հատվելով մի կետում:
2) անդրադառնում են՝ մնալով իրար զուգահեռ:
3) անդրադառնում են այնպես, որ դրանց շարունակությունները հատվում են մի կետում:
4) ընդհանրապես չեն անդրադառնում:



1700. Լույսի S աղբյուրը տեղադրված է հարթ հայելու առջև: Ո՞րը կետն է S աղբյուրի պատկերը հայելում:

1) Միայն ա-ն:
2) Միայն դ-ն:
3) բ-ն և գ-ն:
4) ա-ն, բ-ն և գ-ն:

1701. Առարկայի հեռավորությունը հարթ հայելուց d է: Հայելուց ի՞նչ l հեռավորությամբ է ստացվում առարկայի պատկերը:

1) $l < d$:
2) $l = d$:
3) $l > d$:
4) $l = 2d$:



1702. Ո՞ր կետում է ստացվում լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում:

1) a:
2) b:
3) c:
4) Պատկեր չի ստացվում:



1703. Ո՞ր կետում է ստացվում լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում:

1) a:
2) b:
3) c:
4) d:



1704. Տղան դեմքից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրի հարթ հայելին, որպեսզի լավ տեսնի դեմքը, եթե լավագույն տեսողության համար ընդունված չափը 40 սմ է:

1) 80 սմ:
2) 40 սմ:
3) 30 սմ:
4) 20 սմ:

1705. Մարմնի և հարթ հայելում նրա պատկերի միջև հեռավորությունը 50 սմ է: Որքա՞ն կլինի այդ հեռավորությունը, եթե մարմինը հայելուց հեռացնենք 10 սմ-ով:

1) 40 սմ:
2) 50 սմ:
3) 60 սմ:
4) 70 սմ:

www.atc.am

1706. **Հարթ հայելու վրա լույսի ճառագայթն ընկնում է 30^0 անկյան տակ: Որքա՞ն կլինի անդրադարձման անկյունը, եթե հայելին ուղղածիգ հարթության մեջ պտտենք 10^0-ով:**



1) 40^0:
2) 30^0:
3) 20^0:
4) 10^0:

1707. **Երկու հարթ հայելիներ տեղադրված են միմյանց նկատմամբ 90^0 անկյան տակ: Լույսի ճառագայթը նկարի հարթության մեջ ընկնում է առաջին հայելու վրա և, անդրադառնալով, ընկնում երկրորդ հայելու վրա: Ի՞նչ ուղղությամբ կանդրադառնա ճառագայթը երկրորդ հայելուց:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1708. **Նկարում պատկերված ո՞ր կետերն են լույսի S կետային աղբյուրի պատկերները երկու փոխուղղահայաց հարթ հայելիներում:**



1) ա կետը:
2) բ կետը:
3) գ կետը:
4) Բոլոր կետերը:

1709. **Նկարում պատկերված ո՞ր կետերում է ստացվում AB առարկայի պատկերը հարթ հայելում:**



1) 3 – 5 – 7:
2) 1 – 5 – 9:
3) 6 – 8 – 10:
4) 4 – 8 – 12:

1710. **Ինչպե՞ս պետք է տեղափոխել հայելին, որպեսզի դիտողը հայելու մեջ սլաքը տեսնի ամբողջությամբ:**



1) Մեկ վանդակ դեպի ձախ:
2) Մեկ վանդակ դեպի վերև:
3) Մեկ վանդակ դեպի ներքև:
4) Առանց տեղափոխման սլաքը կերևա ամբողջությամբ:

www.atc.am

1711. Գնդիկն ուղիղ գծով շարժվում է հորիզոնական սեղանի վրայով: Սեղանի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի գնդիկի պատկերը նրա մեջ շարժվի ուղղաձիգ ուղղությամբ:

1) 90^0:
2) 60^0:
3) 45^0:
4) 30^0:

1712. Հարթ հայելին գետնի նկատմամբ հորիզոնական ուղղությամբ շարժվում է $\vec{v}_1$ արագությամբ, իսկ լույսի S աղբյուրը՝ ուղղաձիգ ուղղությամբ $\vec{v}_2$ արագությամբ: Ի՞նչ արագությամբ կշարժվի գետնի նկատմամբ աղբյուրի պատկերը հայելում:



1) $2v_1$:
2) $v_1 + v_2$:
3) $\sqrt{v_1^2 + v_2^2}$:
4) $\sqrt{4v_1^2 + v_2^2}$:

1713. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Բեկման անկյունը...

1) բեկված և անդրադարձած ճառագայթների կազմած անկյունն է:
2) միջավայրերի բաժանման սահմանի և բեկված ճառագայթի կազմած անկյունն է:
3) ճառագայթի անկման կետում միջավայրերի բաժանման սահմանին տարված ուղղահայացի և բեկված ճառագայթի կազմած անկյունն է:
4) ընկնող և բեկված ճառագայթների կազմած անկյունն է:

1714. Ինչպե՞ս են դասավորված երկու միջավայրերի բաժանման սահմանին ընկնող, անդրադարձող և բեկվող լուսային ճառագայթները:

1) Նույն հարթության մեջ են:
2) Փոխուղղահայաց հարթությունների մեջ են:
3) Ընկնող և անդրադարձող ճառագայթները միևնույն հարթության մեջ են, իսկ բեկվող ճառագայթը՝ ոչ:
4) Ընկնող և բեկվող ճառագայթները միևնույն հարթության մեջ են, իսկ անդրադարձող ճառագայթը՝ ոչ:



1715. Ո՞րն է երկու միջավայրերի բաժանման սահմանին լույսի ճառագայթի անկման α և բեկման β անկյունների միջև ճիշտ առնչությունը:

www.atc.am

1) $\frac{\sin\alpha}{\sin\beta} = const$:

2) $\frac{\sin\alpha}{\cos\beta} = const$:

3) $\frac{\cos\alpha}{\cos\beta} = const$:

4) $\frac{tg\alpha}{tg\beta} = const$:

1716. Աշակերտը փորձով որոշում է ջրի բեկման ցուցիչը: Դրա համար նա լույսի ճառագայթը որոշակի անկյան տակ օդից գցում է ջրի մեջ և չափում բեկման անկյունը: Ինչպե՞ս են փոխվում ճառագայթի բեկման անկյունը և ջրի բեկման ցուցիչը անկման անկյունը մեծացնելիս:

1) Բեկման ցուցիչը փոքրանում է, բեկման անկյունը մեծանում:
2) Բեկման ցուցիչը չի փոխվում, բեկման անկյունը մեծանում է:
3) Բեկման ցուցիչն ու բեկման անկյունը մեծանում են:
4) Բեկման ցուցիչը մեծանում է, բեկման անկյունը փոքրանում:

1717. Նկարում պատկերված է լույսի ճառագայթի ընթացքը A միջավայրից B միջավայր անցնելիս: Միջավայրերի բեկման ցուցիչներն են n_A, n_B: Պատասխանների ո՞ր զույգն է ճշում ճիշտ առնչությունները:



1) $\frac{\sin\alpha}{\sin\beta} = \frac{n_A}{n_B}$, $n_A > n_B$:

2) $\frac{\sin\alpha}{\sin\beta} = \frac{n_A}{n_B}$, $n_A < n_B$:

3) $\frac{\sin\alpha}{\sin\beta} = \frac{n_B}{n_A}$, $n_A > n_B$:

4) $\frac{\sin\alpha}{\sin\beta} = \frac{n_B}{n_A}$, $n_A < n_B$:

1718. Երկու միջավայրի բաժանման սահմանն անցնելիս երկու ճառագայթների α_1 և α_2 անկման անկյուններին համապատասխանում են β_1 և β_2 բեկման անկյունները: Ո՞րն է այդ անկյունների միջև ճիշտ առնչությունը:

1) $\frac{\alpha_1}{\alpha_2} = \frac{\beta_1}{\beta_2}$:

2) $\frac{\alpha_1}{\beta_2} = \frac{\alpha_2}{\beta_1}$:

3) $\frac{\sin\alpha_2}{\sin\alpha_1} = \frac{\sin\beta_1}{\sin\beta_2}$:

4) $\frac{\sin\alpha_1}{\sin\beta_1} = \frac{\sin\alpha_2}{\sin\beta_2}$:

www.afc.am

1719. Լույսի ճառագայթն օդից ընկնում է ապակե կիսագնդին: Ո՞րն է ճառագայթի ճիշտ ընթացքը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1720. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի ճառագայթը զրոյից տարբեր անկման անկյան տակ օպտիկապես խիտ միջավայրից նոսր միջավայր անցնելիս ...

1) անկման անկյունը հավասար է բեկման անկյանը:
2) անկման անկյունը մեծ է բեկման անկյունից:
3) անդրադարձման անկյունը մեծ է բեկման անկյունից:
4) անկման անկյունը փոքր է բեկման անկյունից:

1721. Լույսի ճառագայթը ջրից ($n_1 = 1{,}33$) անցնում է ապակու ($n_2 = 1{,}6$) մեջ: Ինչպե՞ս է փոխվում այդ դեպքում լույսի արագությունը:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Պատասխանը կախված է անկման անկյունից:

1722. Նկարում պատկերված է լույսի ճառագայթի ընթացքը A միջավայրից B միջավայր անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերում լույսի տարածման v_A և v_B արագությունների միջև ճիշտ հարաբերակցությունը:



1) $v_A > v_B$
2) $v_A < v_B$
3) $v_A = v_B$
4) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:

www.ato.am

1723. Լույսի ճառագայթը վակուումից անցնում է ապակու մեջ: Ճառագայթի անկման անկյունն α է, իսկ բեկման անկյունը՝ β: Որքա՞ն է լույսի արագությունն ապակու մեջ, եթե վակուումում այն c է:

1) $\frac{c \cdot \sin\alpha}{\sin\beta}$:
2) $\frac{c \cdot \sin\beta}{\sin\alpha}$:
3) $\frac{c \cdot \cos\alpha}{\cos\beta}$:
4) $\frac{c \cdot \cos\beta}{\cos\alpha}$:

1724. Լույսի արագությունը վակուումում c է, իսկ միջավայրում՝ v: Որքա՞ն է այդ միջավայրի բեկման ցուցիչը:

1) $\frac{c - v}{c}$:
2) $\frac{c}{v}$:
3) $\frac{c + v}{c}$:
4) $\frac{v}{c}$:

1725. Որքա՞ն է ապակու բեկման ցուցիչը, եթե լույսը նրա մեջ տարածվում է $2 \cdot 10^8$ մ/վ արագությամբ: Լույսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8$ մ/վ:

1) 6:
2) 3:
3) 2:
4) 1,5:

1726. Լույսի ճառագայթը ջրից անցնում է ապակու մեջ: Ինչպե՞ս է այդ դեպքում փոխվում լույսի արագությունը: Ջրի բեկման ցուցիչը 1,33 է, ապակունը՝ 1,6:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Կախված է անկման անկյունից:

1727. Տղան դիտում է 1 մ խորությամբ ջրամբարի հատակին ընկած փոքր քարը: Ուղղածիգ նայելիս որքա՞ն կլինի ջրամբարի թվացյալ խորությունը:

1) 1 մ:
2) 1 մ-ից մեծ:
3) 1 մ-ից փոքր:
4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:

www.atc.am

1728. **Եթե ուղղաձիգ ուղղությամբ նայենք ջրամբարի հատակի a կետում գտնվող քարին, որտե՞ղ կտեսնենք նրա պատկերը:**



1) a կետում:
2) b կետում:
3) c կետում:
4) Չի երևա:

1729. **Նկարում պատկերված լույսի ճառագայթը ջրից դուրս կգա՞ օդ:**



1) Միշտ դուրս կգա:
2) Երբեք դուրս չի գա:
3) Պատասխանը կախված է անկման անկյունից:
4) Բոլոր պատասխանները սխալ են:

1730. **Ո՞ր բանաձևով է որոշվում լույսի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը, երբ լույսը մի միջավայրից, որտեղ նրա արագությունը v է, անցնում է վակուում: Լույսի արագությունը վակուումում c է:**

1) $sin\alpha_0 = \frac{v}{c}$:
2) $sin\alpha_0 = \frac{c}{v}$:
3) $sin\alpha_0 = \frac{1}{c}$:
4) $sin\alpha_0 = \frac{1}{v}$:

1731. **Հեղուկից օդ դուրս եկող լուսային ճառագայթի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը α_0 է: Որքա՞ն է լույսի տարածման արագությունը հեղուկում: Լույսի արագությունը վակուումում c է:**

1) $\frac{c}{\sin\alpha_0}$:
2) $c \cdot sin\alpha_0$:
3) $\frac{c}{tg\alpha_0}$:
4) $c \cdot tg\alpha_0$:

1732. **Ջրի բեկման ցուցիչը (n_1) փոքր է ապակու բեկման ցուցչից (n_2): Ո՞րն է ջրի և ապակու լրիվ անդրադարձման α_1 և α_2 սահմանային անկյունների ճիշտ հարաբերակցությունը, երբ այդ միջավայրերից լույսը դուրս է գալիս վակուում:**

1) $\alpha_1 > \alpha_2$:
2) $\alpha_1 < \alpha_2$:
3) $\alpha_1 = \alpha_2$:
4) $\alpha_1 \le \alpha_2$:

www.atc.am

1733. Ջրի համար լրիվ անդրադարձման սահմանային անկյան սինուսը 0,75 է: Ջրի խորքում տեղադրված աղբյուրից լույսի ճառագայթը ջրի մակերևույթին ընկնում է 60^0 անկյան տակ: Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Ճառագայթը ջրից դուրս չի գա օդ:
2) Ճառագայթը ջրից դուրս կգա օդ:
3) Ճառագայթի կսահի ջրի մակերևույթով:
4) Ճառագայթի ընթացքը կախված է լույսի ուժգնությունից:

1734. Ո՞ր դեպքում օդում ապակե ուղղանկյուն հավասարասրուն հատվածակողմի վրա ընկնող լույսի ճառագայթը կշեղվի 180^0-ով:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1735. Ո՞րն է օդում ապակե հատվածակողմի միջով լույսի ճառագայթի ճիշտ ընթացքը:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1736. Ո՞ր ճառագայթն է ցույց տալիս լույսի a ճառագայթի ընթացքը օդում գտնվող ապակե հարթ-զուգահեռ թիթեղն անցնելուց հետո:



1) b-ն:
2) d-ն:
3) c-ն:
4) Բոլոր ճառագայթները:

1737. Լույսի երկու զուգահեռ ճառագայթ ջրից դուրս են գալիս օդ: a ճառագայթն անմիջապես է դուրս գալիս օդ, իսկ b ճառագայթը՝ ջրի մեջ ապակե հարթ-զուգահեռ թիթեղի միջոցով անցնելուց հետո: Ի՞նչ ընթացք կունենան օդում a և b ճառագայթները:

1) Կմնան իրար զուգահեռ:
2) Կտարամիտեն:
3) Կզուգամիտեն:
4) Կախված է թիթեղի նյութի բեկման ցուցչից:



www.atc.am

1738. Ինչպե՞ս է փոխվում լույսի զուգահեռ ճառագայթների փնջի լայնությունը վակուումում տեղադրված ապակե հարթ-զուգահեռ թիթեղն անցնելիս:

1) Չի փոխվում:
2) Մեծանում է:
3) Փոքրանում է:
4) Պատասխանը կախված է ապակու բեկման ցուցչի արժեքից:

1739. Նկարում պատկերված են ապակե ոսպնյակներ: Որո՞նք են հավաքող:

1) A-ն, C-ն:
2) B-ն, C-ն:
3) A-ն, B-ն:
4) B-ն, D-ն:



1740. Ոսպնյակի ո՞ր հատկության շնորհիվ այն լայն կիրառություն ունի օպտիկական սարքերում:

1) Ոսպնյակը գործնականում լույս չի կլանում:
2) Ոսպնյակը գործնականում լույս չի անդրադարձնում:
3) Ոսպնյակը չի փոխում լույսի տարածման ուղղությունը:
4) Ոսպնյակի օգնությամբ կարելի է կառավարել լույսի ճառագայթների ընթացքը և ստանալ տարբեր պատկերներ:

1741. Ի՞նչ է ոսպնյակի կիզակետը:

1) Ոսպնյակի և նրա գլխավոր օպտիկական առանցքի հատման կետը:
2) Ոսպնյակի այն կետը, որով անցնելիս ճառագայթները չեն բեկվում:
3) Գլխավոր օպտիկական առանցքի այն կետը, որտեղ հատվում են այդ առանցքին զուգահեռ ընկնող ճառագայթները կամ դրանց շարունակությունները՝ ոսպնյակն անցնելիս:
4) Ոսպնյակի օպտիկական առանցքների հատման կետը:

1742. Ո՞րն է կոչվում ոսպնյակի կիզակետային հեռավորություն:

1) Երկու կիզակետերի հեռավորությունը:
2) Կիզակետի և ոսպնյակի օպտիկական կենտրոնի միջև հեռավորությունը:
3) Ոսպնյակի մակերևույթների միջև հեռավորությունը:
4) Ոսպնյակի մակերևույթների կորության կենտրոնների միջև հեռավորությունը:

www.atc.am

1743. Որքա՞ն է նկարում պատկերված ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե յուրաքանչյուր բաժանմանը համապատասխանում է 1 սմ:



1) 1 սմ: 3) 3 սմ:
2) 2 սմ: 4) 5 սմ:

1744. Ի՞նչ միավորով է չափվում ոսպնյակի օպտիկական ուժը միավորների ՄՀ-ի հիմնական միավորներով:

1) 1 մ: 3) 1 Ն:
2) 1 $մ^{-1}$: 4) 1 Ն/մ:

1745. Ո՞րն է ոսպնյակի D օպտիկական ուժի և F կիզակետային հեռավորության միջև ճիշտ առնչությունը:

1) $\frac{F}{D}=1$: 3) $F+D=1$:
2) $FD=1$: 4) $F-D=1$:

1746. Աշակերտը նկարեց չորս ճառագայթների ընթացքը հավաքող ոսպնյակով անցնելուց հետո: Ո՞ր ճառագայթի ընթացքն է սխալ պատկերված:



1) a: 3) c:
2) b: 4) d:

1747. Լույսի ճառագայթը, անցնելով կիզակետով, ընկնում է հավաքող ոսպնյակի վրա: Ի՞նչ ուղղություն կունենա այն ոսպնյակով անցնելուց հետո:

1) Կանցնի մյուս կիզակետով:
2) Գլխավոր օպտիկական առանցքը կհատի կրկնակի կիզակետային հեռավորությամբ:
3) Կանցնի գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ:
4) Չի փոխի իր ուղղությունը:

1748. Կառուցելով առարկայի պատկերը հավաքող ոսպնյակում՝ աշակերտը սխալվեց: Ո՞րն է նրա սխալը:



1) Սխալ է պատկերված A կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:

www.atc.am

2) Սխալ է պատկերված B կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:
3) A և B կետերից դուրս եկող ճառագայթները չեն հատվի A_1 կետում:
4) A կետի պատկերի ստացման համար օգտագործվել է տարբեր կետերից դուրս եկող ճառագայթներ:

1749. Որտե՞ղ կստացվի բարակ հավաքող ոսպնյակում S լուսատու կետի պատկերը:



1) 1 կետում:
2) 2 կետում:
3) 3 կետում:
4) Անսահման մեծ հեռավորությունում:

1750. Արևոտ եղանակին հավաքող ոսպնյակի օգնությամբ կարելի է այրել թուղթը: Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է պահել թուղթը, որպեսզի այն այրվի արագ:

1) Կիզակետային հեռավորության հեռավորությամբ:
2) Կիզակետային հեռավորության կրկնապատիկին հավասար հեռավորությամբ:
3) Կիզակետային հեռավորության կեսին հավասար հեռավորությամբ:
4) Հեռավորությունը կախված է ոսպնյակի տրամագծից:

1751. Ո՞ր կետում են հատվում նկարում պատկերված *a* և *b* ճառագայթները ոսպնյակն անցնելուց հետո:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1752. Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի իրական:

1) Կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ:
2) Կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ:
3) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի իրական:
4) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի կեղծ:

1753. Ո՞ր կետում է ստացվում նկարում պատկերված լույսի S կետային աղբյուրի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:



1) a կետում:

www.atc.am

2) b կետում:
3) c կետում:
4) Իրական պատկեր չի ստացվում:

1754. Առարկայի հեռավորությունը ոսպնյակից հավասար է նրա եռակի կիզակետային հեռավորությանը: Ինչպիսի՞ն է առարկայի պատկերը:



1) Շրջված և խոշորացած:
2) Ուղիղ և փոքրացած:
3) Ուղիղ և խոշորացած:
4) Շրջված և փոքրացած:

1755. Ինչպիսի՞ն է AB առարկայի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:



1) Իրական, մեծացված, շրջված:
2) Իրական, փոքրացված, շրջված:
3) Կեղծ, մեծացված, ուղիղ:
4) Կեղծ, փոքրացված, ուղիղ:

1756. Առարկան գտնվում է բարակ ոսպնյակից կրկնակի կիզակետային հեռավորության վրա և շարժվում է դեպի կիզակետը: Ո՞ր ուղղությամբ է շարժվում այդ դեպքում առարկայի պատկերը:



1) Մոտենում է ոսպնյակին:
2) Մոտենում է առարկային:
3) Մոտենում է կիզակետի հետևում գտնվող կիզակետին:
4) Հեռանում է ոսպնյակի մյուս կողմում գտնվող $2F$ կետից:

1757. Ի՞նչ տեղի կունենա, եթե նկարում պատկերված առարկան հեռացնենք ոսպնյակից:



1) Պատկերի չափերը կմեծանան, իսկ պատկերը կմոտենա ոսպնյակին:
2) Պատկերի չափերը կփոքրանան, իսկ պատկերը կմոտենա ոսպնյակին:
3) Պատկերի չափերը կփոքրանան, իսկ պատկերը կհեռանա ոսպնյակից:
4) Պատկերի չափերը կմեծանան, իսկ պատկերը կհեռանա ոսպնյակից:

www.atc.am

1758. Ո՞րն է բարակ ոսպնյակի Γ խոշորացման բանաձևը: d -ն առարկայի հեռավորությունն է ոսպնյակից, իսկ f -ը՝ պատկերի հեռավորությունը ոսպնյակից:

1) $\Gamma = d + f$:
2) $\Gamma = \frac{d}{f}$:
3) $\Gamma = \frac{f}{d+f}$:
4) $\Gamma = \frac{f}{d}$:

1759. F կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի պատկերի խոշորացումը 1/3 է: Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից:

1) $3F$:
2) $\frac{1}{3}F$:
3) $\frac{2}{3}F$:
4) $4F$:

1760. Նկարում պատկերված է հավաքող բարակ ոսպնյակ և ա, բ և գ առարկաների դիրքերը: Ո՞ր առարկայի պատկերը կլինի իրական, շրջված և խոշորացված:



1) Միայն ա-ի:
2) Միայն բ-ի:
3) Միայն գ-ի:
4) Բոլոր առարկաների:

1761. Կարելի՞ է արդյոք երկգոգավոր ոսպնյակով ստանալ առարկայի իրական պատկերը:

1) Ոչ:
2) Հնարավոր է, եթե առարկան տեղադրվի ոսպնյակի և կիզակետի միջև:
3) Հնարավոր է, եթե ոսպնյակը տեղադրվի թափանցիկ միջավայրում, որի բեկման ցուցիչը մեծ է ոսպնյակի նյութի բեկման ցուցչից:
4) Հնարավոր է, եթե ոսպնյակը վակուումում է:

1762. Ինչպիսի՞ն է F կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի պատկերը, եթե առարկայի հեռավորությունը ոսպնյակից $F/2$ է:

1) Իրական, խոշորացված:
3) Կեղծ, խոշորացված:

www.atc.am

2) Իրական, փոքրացված:
4) Կեղծ, փոքրացված:

1763. Ո՞րն է AB սլաքի պատկերը բարակ հավաքող ոսպնյակում:



1) a-ն:
2) b-ն:
3) c-ն:
4) d-ն:

1764. Ինչպիսի՞ն կարող է լինել առարկայի պատկերը ցրող բարակ ոսպնյակում:

1) Միայն մեծացված:
2) Միայն փոքրացված:
3) Մեծացված կամ փոքրացված:
4) Միայն փոքրացված կամ առարկայի չափին հավասար:

1765. Որքա՞ն է նկարում պատկերված ոսպնյակի օպտիկական ուժը, եթե յուրաքանչյուր բաժանմանը համապատասխանում է 2,5 սմ:



1) 10 դպտր:
2) -5 դպտր:
3) -10 դպտր:
4) -20 դպտր:

1766. Հավաքող բարակ ոսպնյակում ստացել են առարկայի իրական պատկերը: Ի՞նչ կդիտվի, եթե անթափանց մարմնով փակենք ոսպնյակի ստորին կեսը:

1) Պատկերի ստորին կեսը կանհետանա:
2) Պատկերի վերին կեսը կանհետանա:
3) Պատկերը կտեղաշարժվի դեպի վեր:
4) Պատկերը կմնա տեղում, իսկ նրա պայծառությունը կնվազի:

1767. Ի՞նչ ուղղությամբ է տարածվում նկարում պատկերված ցրող բարակ ոսպնյակի վրա՝ նրա գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ ընկնող լույսի AB ճառագայթը ոսպնյակն անցնելուց հետո:



1) a:
2) c:
3) b:
4) d:

www.atc.am

1768. Ո՞ր ոսպնյակի համար է կիրառելի $-\frac{1}{|F|}=-\frac{1}{|f|}+\frac{1}{d}$ բանաձևը:

1) Հավաքող բարակ ոսպնյակի:
2) Ցրող բարակ ոսպնյակի:
3) Կամայական բարակ ոսպնյակի:
4) Լուսանկարչական ապարատի:

1769. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Առարկայի կեղծ պատկերը ցրող ոսպնյակում երկու անգամ փոքրացված լինելու համար անհրաժեշտ է, որ նրա հեռավորությունը ոսպնյակից հավասար լինի...

1) կիզակետային հեռավորությանը:
2) կիզակետային հեռավորության 3/2-ին:
3) կրկնակի կիզակետային հեռավորությանը:
4) կիզակետային հեռավորության կեսին:

1770. Իրարից ի՞նչ a հեռավորությամբ պետք է տեղադրել F_1 և F_2 կիզակետային հեռավորություններով երկու հավաքող բարակ ոսպնյակները, որպեսզի ընկնող զուգահեռ ճառագայթների փունջը նրանցով անցնելուց հետո մնա զուգահեռ:

1) $a > F_1 + F_2$:
2) $a < F_1 + F_2$:
3) $a = F_1 + F_2$:
4) $a = 0$:



1771. Ինչպե՞ս կփոխվի բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե նրա եզրից կտրենք:

1) Կմեծանա:
2) Կփոքրանա:
3) Չի փոխվի:
4) Հավաքող ոսպնյակի դեպքում կմեծանա, իսկ ցրողի դեպքում կփոքրանա:

1772. Նկարում պատկերված են բարակ ոսպնյակի MN գլխավոր օպտիկական առանցքը, A լուսատու կետը և նրա A_1 պատկերը: Հավաքո՞ղ, թե՞ ցրող է ոսպնյակը, իրակա՞ն, թե՞ կեղծ է պատկերը:



www.atc.am

1) Ոսպնյակը հավաքող է, իսկ պատկերը՝ կեղծ:
2) Ոսպնյակը ցրող է, իսկ պատկերը՝ կեղծ:
3) Ոսպնյակը հավաքող է, իսկ պատկերը՝ իրական:
4) Ոսպնյակը ցրող է, իսկ պատկերը՝ իրական:

1773. Որքա՞ն է F կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի և նրա իրական պատկերի միչև եղած նվազագույն հեռավորությունը:

1) F:
2) $2F$:
3) $3F$:
4) $4F$:

1774. Ստորև թվարկված էլեկտրամագնիսական ճառագայթումները դասավորեք ըստ ալիքի երկարության աճի՝

1. ռենտգենյան ճառագայթում,
2. ենթակարմիր ճառագայթում,
3. ռադիոալիքներ:

1) 1, 3, 2:
2) 2, 1, 3:
3) 3, 2, 1:
4) 1, 2, 3:

1775. Նշված ո՞ր ճառագայթման հաճախությունն է ավելի մեծ:

1) Անդրմանուշակագույն ճառագայթման:
2) Ռենտգենյան ճառագայթման:
3) Տեսանելի լույսի:
4) Ենթակարմիր ճառագայթման:

1776. Լույսի ալիքի բեկման ժամանակ ո՞ր մեծությունը չի փոխվում:

1) Տարածման արագությունը:
2) Ալիքի հաճախությունը:
3) Ալիքի երկարությունը:
4) Ալիքի լայնույթը:

1777. Ո՞ր լույսի ալիքի երկարությունն է ավելի մեծ:

1) Կարմիր:
2) Կապույտ:
3) Մանուշակագույն:
4) Դեղին:

1778. Լույսի արագությունը վակուումում c է, իսկ ալիքի երկարությունը՝ λ_0: Պատասխանների ո՞ր զույգն է ճիշտ նշում լույսի v արագության և λ ալիքի երկարության ճիշտ արտահայտությունները n բեկման ցուցիչ ունեցող միջավայրում:

1) $v=\frac{c}{n}$, $\lambda = n\lambda_0$:
2) $v=\frac{c}{n}$, $\lambda = \lambda_0$:

www.atc.am

2) $v = c$, $\lambda = n\lambda_0$: 4) $v = \frac{c}{n}$, $\lambda = \frac{\lambda_0}{n}$:

1779. Ինչպե՞ս է կոչվում ապակե հատվածակողմով անցնելիս սպիտակ լույսի՝ տարբեր գույների տարրալուծման երևույթը:

1) Լույսի ինտերֆերենց: 3) Լույսի դիսպերսիա:
2) Լույսի դիֆրակցիա: 4) Լույսի անդրադարձում:

1780. Թափանցիկ ապակե հատվածակողմի վրա իրար զուգահեռ ընկնում են կարմիր և կանաչ գույնի լազերային լույսի ճառագայթներ: Ինչպիսի՞ ընթացք կունենան դրանք հատվածակողմն անցնելուց հետո:



1) Կմնան զուգահեռ:
2) Կտարամիտեն:
3) Կհատվեն:
4) Պատասխանը կախված է ապակու բեկման ցուցչից:

1781. Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից շատ շեղվում:

1) Կանաչ: 3) Մանուշակագույն:
2) Կապույտ: 4) Կարմիր:

1782. Նո՞ւյնն է արդյոք հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը կարմիր և կապույտ ճառագայթների համար:

1) Կարմիրի համար ավելի մեծ է:
2) Կապույտի համար ավելի մեծ է:
3) Նույնն է:
4) Պատասխանը կախված է ապակու տեսակից:

1783. Ո՞ր գույնի լույսին համապատասխանող ալիքն է ավելի մեծ արագությամբ տարածվում ապակու մեջ:

1) Կապույտ: 3) Կանաչ:
2) Կարմիր: 4) Մանուշակագույն:

1784. Փոխվո՞ւմ են արդյոք լույսի ալիքի երկարությունը և հաճախությունը վակուումից ջուր անցնելիս:

1) Ալիքի երկարությունը փոքրանում է, հաճախությունը՝ մեծանում:
2) Ալիքի երկարությունը մեծանում է, հաճախությունը՝ փոքրանում:
3) Ալիքի երկարությունը փոքրանում է, հաճախությունը չի փոխվում:
4) Ալիքի երկարությունը մեծանում է, հաճախությունը չի փոխվում:

www.atc.am

1785. Ինչո՞ւ է խոտը կանաչ:

1) Խոտն անդրադարձնում է միայն կանաչ գույնին համապատասխանող լույսի ալիքը:
2) Խոտը կլանում է միայն կանաչ գույնին համապատասխանող լույսի ալիքը:
3) Խոտը կլանում է բոլոր գույներին համապատասխանող լույսի ալիքը:
4) Խոտն անդարադարձնում է բոլոր գույներին համապատասխանող լույսի ալիքները:

1786. Ի՞նչ գույնի կտեսնենք առարկան, եթե նրան նայենք իրար վրա դրված կանաչ և կարմիր ապակիների միջով:

1) Կանաչ: 3) Կարմիր:
2) Սև: 4) Մոխրագույն:

1787. Կարմիր և կապույտ ապակիները տեղադրված են միմյանց վրա: Ի՞նչ գույնի ճառագայթներ կանցնեն այդ ապակիներից:

1) Կարմիր:
2) Կանաչ:
3) Նայած թե որ կողմից կնայենք:
4) Տեսանելի լույսի ճառագայթներ չեն անցնի:

1788. Ե՞րբ են լույսի ալիքները կոհերենտ:

1) Երբ հավասար են դրանց լայնույթները:
2) Երբ հավասար են միայն դրանց հաճախությունները:
3) Երբ հաստատուն է միայն դրանց սկզբնական փուլերի տարբերությունը:
4) Երբ հաստատուն է դրանց սկզբնական փուլերի տարբերությունը, և հավասար են հաճախությունները:

1789. Ո՞ր երևույթը չի կարելի բացատրել երկրաչափական օպտիկայի օրենքներով:

1) Ստվերի առաջացումը: 3) Լույսի բեկումը:
2) Լույսի անդրադարձումը: 4) Լույսի ինտերֆերենցը:

1790. Ո՞ր պայմանի դեպքում կղիտվի լույսի երկու ալիքների ինտերֆերենց:

1) Երբ լայնույթները հավասար են:
2) Երբ սկզբնական փուլերը նույնն են:
3) Երբ նույնն են լայնույթները և սկզբնական փուլերը:
4) Երբ նույնն են հաճախությունները, և հաստատուն է սկզբնական փուլերի տարբերությունը:

www.atc.am

1791. Ո՞րն է լույսի կոհերենտ ալիքների ինտերֆերենցային մաքսիմումի պայմանը: Δ-ն ալիքների ընթացքի տարբերությունն է, λ-ն՝ ալիքի երկարությունը, m-ն ամբողջ թիվ է:

1) $\Delta = m\lambda$:
2) $\Delta = \left(m + \frac{1}{2}\right)\lambda$:
3) $\Delta = \frac{1}{2}m\lambda$:
4) $\Delta = \frac{\lambda}{m}$:

1792. Լույսի երկու աղբյուրներ առաքում են միևնույն սկզբնական փուլերով $5 \cdot 10^{14}$ Հց հաճախությամբ ալիքներ: Տարածության տվյալ կետում այդ ալիքների ընթացքի ի՞նչ նվազագույն տարբերության դեպքում կդիտվի ինտերֆերենցային մաքսիմում:

1) 0,9 մկմ:
2) 0,3 մկմ:
3) 0,4 մկմ:
4) 0:

1793. Տարածության տվյալ կետում լույսի երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարբերությունը $2{,}5\lambda$ է: Ի՞նչ է դիտվում այդ կետում:

1) Ինտերֆերենցային մաքսիմում:
2) Ինտերֆերենցային մինիմում:
3) Կդիտվի ինտերֆերենցային մինիմում կամ մաքսիմում:
4) Պատասխանը կախված է λ ալիքի երկարությունից:

1794. 750 նմ ալիքի երկարությամբ կարմիր գույնի լույսի երկու կոհերենտ ալիքներ տարածության որևէ կետում հանդիպում են 25 մկմ ընթացքի տարբերությամբ: Ի՞նչ կդիտվի այդ կետում ալիքների ինտերֆերենցի հետևանքով:

1) Առավելագույն լուսավորվածություն:
2) Նվազագույն լուսավորվածություն:
3) Մոտավորապես միջին լուսավորվածություն:
4) Նույն գույնի լույսի ալիքները չեն ինտերֆերում:

1795. Ի՞նչ պայմանի դեպքում է հնարավոր դիտել տարբեր ալիքի երկարությամբ երկու լույսի ալիքի ինտերֆերենց:

1) Երբ նրանց լայնույթները հավասար են:
2) Երբ սկզբնական փուլերը նույնն են:
3) Միշտ կարելի է դիտել:
4) Ոչ մի պայմանի դեպքում:

1796. Ո՞ր երևույթն է հաստատում լույսի ալիքային բնույթը:

www.atc.am

1) Լույսի անդրադարձումը:
2) Լույսի դիֆրակցիան:
3) Լույսի բեկումը:
4) Լույսի ուղղագիծ տարածումը:

1797. Ո՞ր երևույթն է բացատրվում լույսի դիֆրակցիայով:

1) Բարակ թաղանթների գունավորումը:
2) Ստվերի և կիսաստվերի առաջացումը:
3) Լույսի ճառագայթների շեղումը դեպի երկրաչափական ստվերի տիրույթ:
4) Ապակե հատվածակողմից անցնելիս սպիտակ լույսի տարալուծումը տարբեր գույների:

1798. Ո՞ր պնդումն է սխալ:

1) Լույսի ճառագայթն ուղղահայաց է ալիքային մակերևույթին:
2) Լույսի ճառագայթը գիծ է, որի երկայնքով տարածվում է լույսի ալիքի էներգիան:
3) Անթափանց էկրանի անցքի տրամագիծը փոքրացնելիս նրանով անցնող լույսի փունջն անընդհատ նեղանում է:
4) Այն մակերևույթը, որի բոլոր կետերում ժամանակի տվյալ պահին տատանումներն ունեն նույն փուլը, կոչվում է ալիքային մակերևույթ:

1799. d պարբերությամբ դիֆրակտային ցանցը լուսավորվում է նրան ուղղահայաց ընկնող λ ալիքի երկարությամբ լույսով: Ո՞ր բանաձևով կարելի է որոշել այն α անկյունը, որի դեպքում դիտվում է 2-րդ կարգի մաքսիմումը:

1) $\sin\alpha = \frac{2\lambda}{d}$:
2) $\sin\alpha = \frac{d}{2\lambda}$:
3) $\cos\alpha = \frac{2\lambda}{d}$:
4) $\cos\alpha = \frac{d}{2\lambda}$:

1800. λ երկարությամբ լուսային ալիքը ընկնում է $d = 5\lambda$ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա: Ի՞նչ անկյան տակ կդիտվի երկրորդ կարգի մաքսիմումը:

1) $\arcsin 0{,}2$:
2) $\arcsin 0{,}4$:
3) $\arcsin 0{,}15$:
4) $\arcsin 0{,}3$:

1801. Լազերի ճառագայթը դիֆրակտային ցանցի վրա ուղղահայաց ընկնելիս ցանցի հետևում տեղադրված էկրանին դիտվում է դիֆրակտային պատկեր: Ինչպե՞ս կփոխվի պատկերը, եթե ցանցի հաստատունը փոքրացնենք:



www.atc.am

1) B կետի մաքսիմումը կմնա իր տեղում, իսկ մնացած մաքսիմումները կհեռանան նրանից:
2) B կետի մաքսիմումը կմնա իր տեղում, իսկ մնացած մաքսիմումները կմոտենան նրան:
3) B կետի մաքսիմումը կվերանա, իսկ մնացած մաքսիմումները կմնան իրենց տեղերում:
4) Պատկերը չի փոխվի:

1802. Ո՞ր լույսն է բևեռացված:

1) Արեգակի առաքած լույսը:
2) Էլեկտրական լամպի առաքած լույսը:
3) Մոմի բոցի լույսը:
4) Տուրմալինե թիթեղով անցած լույսը:

1803. Ո՞ր երևույթն է հաստատում լույսի ալիքի լայնական լինելը:

1) Լույսի ինտերֆերենցը:
2) Լույսի դիֆրակցիան:
3) Լույսի դիսպերսիան:
4) Լույսի բևեռացումը:

1804. Լույսի փունջն անցնում է նկարում պատկերված տուրմալինի երկու թիթեղներով, որոնց օպտիկական առանցքները զուգահեռ են: Ինչպե՞ս կփոխվի երկրորդ թիթեղով անցած լույսի պայծառությունը, եթե այն 90^0-ով պտտենք փնջի շուրջը:



1) Կաճի :
2) Չի փոխվի:
3) Նվազելով՝ կհավասարվի զրոյի:
4) Սկզբում կաճի, հետո՝ կնվազի:

1805. Ո՞ր պնդումն է հարաբերականության հատուկ տեսության կանխադրույթ:

ա. Մեխանիկական երևույթները հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում ընթանում են միատեսակ:

բ. Բոլոր ֆիզիկական երևույթները հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում ընթանում են միատեսակ:

1) միայն ա-ն:
2) միայն բ-ն:
3) և՛ ա-ն, և՛ բ-ն:
4) ո՛չ ա-ն, ո՛չ բ-ն:

1806. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն հարաբերականության հատուկ տեսության առաջին կանխադրույթի՝ նույն պայմաններում հաշվարկման իներցիալ համակարգերում նույն ձևով են ընթանում …

www.atc.am

1) միայն մեխանիկական երևույթները:
2) միայն էլեկտրական երևույթները:
3) միայն օպտիկական երևույթները:
4) բնության բոլոր երևույթները:

1807. Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Լույսի արագությունը կախված չէ միջավայրից:
2) Լույսի արագությունը կախված է աղբյուրի արագությունից:
3) Լույսի արագությունը վակուումում կախված է հաշվարկման համակարգից:
4) Լույսի արագությունը վակուումում կախված չէ աղբյուրի արագությունից:

1808. Լույսի ֆոտոնը տվյալ հաշվարկի համակարգում ունի c արագություն: Ո՞ր պնդումն է ճիշտը:

1) Կարելի է ընտրել այնպիսի հաշվարկի համակարգ, որտեղ ֆոտոնի արագությունը փոքր լինի վակուումում լույսի արագությունից:
2) Կարելի է ընտրել այնպիսի հաշվարկի համակարգ, որտեղ ֆոտոնի արագությունը մեծ լինի վակուումում լույսի արագությունից:
3) Բոլոր հաշվարկի համակարգերում ֆոտոնի արագությունը հավասար է վակուումում լույսի արագությանը:
4) Բոլոր պնդումները սխալ են:

1809. Դադարի վիճակում ավտոմեքենայի լուսարձակների առաքած լույսի արագությունը գետնի նկատմամբ c է: Որքա՞ն կլինի լույսի արագությունը, եթե ավտոմեքենան շարժվի v արագությամբ:

1) c:
2) $\frac{c}{2}$:
3) $c-v$:
4) $c+v$:

1810. Ո՞ր ֆիզիկական մեծությունը կախված չէ հաշվարկման համակարգի ընտրությունից:

1) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքի տարածման արագությունը:
2) Մարմնի գծային չափերը:
3) Երկու մարմինների միջև հեռավորությունը:
4) Երկու պատահարների միջև ժամանակահատվածը:

1811. Քանի՞ անգամ կփոխվի ձողի երկարությունը, եթե այն շարժվի իր երկայնքով ուղղված $0{,}6c$ արագությամբ:

www.etc.am

1) Կմեծանա 1,25 անգամ:
2) Կփոքրանա 1,25 անգամ:
3) Կմեծանա 1,6 անգամ:
4) Կփոքրանա 1,6 անգամ:

1812. **Ի՞նչ արագությամբ է շարժվում ձողը նկարում պատկերված հաշվարկման իներցիալ համակարգում, եթե այդ համակարգում ձողի երկարությունը 40 %-ով փոքր է ձողի հետ կապված հաշվարկման համակարգում նրա երկարության համեմատությամբ:**



1) $0{,}4c$:
2) $0{,}8c$:
3) $0{,}92c$:
4) $0{,}99c$:

1813. **Դադարի վիճակում մասնիկի կյանքի տևողությունը τ_0 է: Որքա՞ն կլինի այդ մասնիկի կյանքի տևողությունը հաշվարկման այն համակարգում, որի նկատմամբ մասնիկը շարժվում է v արագությամբ:**

1) $\tau = \dfrac{\tau_0}{\sqrt{1 - v^2/c^2}}$:
2) $\tau = \tau_0$:
3) $\tau = \tau_0\sqrt{1 - v^2/c^2}$:
4) $\tau = \tau_0\sqrt{1 + v^2/c^2}$:

1814. **Որքա՞ն է տարրական մասնիկի կյանքի տևողությունը արագաարարում $0{,}6c$ արագությամբ շարժվելիս, եթե մասնիկի հետ կապված հաշվարկման համակարգում նրա կյանքի տևողությունը τ_0 է:**

1) τ_0:
2) $1{,}67\tau_0$:
3) $0{,}8\tau_0$:
4) $1{,}25\tau_0$:

1815. **Ի՞նչ արագության դեպքում է էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար նրա հանգստի էներգիային:**

1) $\dfrac{c}{2}$:
2) $\dfrac{\sqrt{2}}{2}c$:
3) $\dfrac{\sqrt{3}}{2}c$:
4) 0:

1816. **Ո՞ր բանաձևով է որոշվում ռելյատիվիստական էլեկտրոնի կինետիկ էներգիան (m-ը էլեկտրոնի զանգվածն է, v-ն՝ արագությունը, c-ն՝ լույսի արագությունը վակուումում):**

www.ato.am

1) $\frac{mv^2}{2}$:

2) $\frac{mc^2}{2}$:

3) $\frac{mc^2}{\sqrt{1-v^2/c^2}} - mc^2$:

4) $mc^2 + \frac{mv^2}{2}$:

1817. Մասնիկի լրիվ էներգիան քանի՞ անգամ է մեծ նրա հանգստի էներգիայից, եթե նրա կինետիկ էներգիան երեք անգամ մեծ է հանգստի էներգիայից:

1) 2:
2) 3:
3) 4:
4) 0,5:

1818. Արեգակն անընդհատ էներգիա է ճառագայթում: Փոխվո՞ւմ է արդյոք նրա զանգվածն այդ ընթացքում:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Հնարավոր է՝ մեծանա կամ փոքրանա:

1819. Երկիրը յուրաքանչյուր վայրկյանում կլանում է Արեգակի արձակած էլեկտրամագնիսական ճառագայթման $6 \cdot 10^{16}$ Ջ էներգիա: Մոտավորապես քանի՞ կիլոգրամով է ավելանում Երկրի զանգվածը մեկ վայրկյանում: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ է:

1) $6 \cdot 10^{16}$ կգ:
2) $5{,}4 \cdot 10^{33}$ կգ:
3) $2 \cdot 10^8$ կգ:
4) 0,67 կգ:

www.atc.am

12.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1820. 4 մ բարձրությամբ սյան գագաթին ամրացված է փողոցային լուսավորության լամպը: Որքա՞ն է 1 մ բարձրությամբ ուղղաձիգ ձողի ստվերի երկարությունը, երբ նրա հեռավորությունը սյունից 3 մ է:

1821. Երբ Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից 45^0 է, շենքի ստվերի երկարությունը 30 մ է: Որքա՞ն կլինի շենքի ստվերի երկարությունը, եթե Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից 60^0 է:

1822. Լույսի կետային աղբյուրի հեռավորությունը էկրանից 80 սմ է: Նրանց միջև՝ էկրանից 30 սմ հեռավորությամբ և էկրանին զուգահեռ, տեղադրված է 12 սմ երկարությամբ քանոն: Որքա՞ն կլինի քանոնի ստվերի երկարությունը էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1823. Ի՞նչ անկյան տակ պետք է ճառագայթն ընկնի հարթ հայելու վրա, որպեսզի անդրադարձած ճառագայթն ուղղահայաց լինի ընկնող ճառագայթին:

1824. Ի՞նչ անկման անկյան դեպքում են ընկնող և անդրադարձած ճառագայթները կազմում 120^0 անկյուն:

1825. Հարթ հայելու և նրա վրա ընկնող ճառագայթի կազմած անկյունը 30^0 է (նկ. 60): Որքա՞ն է ճառագայթի անդրադարձման անկյունը:



Նկ. 60

1826. Հարթ հայելու վրա ընկնող և անդրադարձած ճառագայթների կազմած անկյան 2/3 մասը 80^0 է: Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը:

1827. Լույսի ճառագայթն ընկնում է հարթ հայելու վրա 25^0 անկյան տակ: Քանի՞ աստիճանով կփոխվի ընկնող և անդրադարձած ճառագայթների կազմած անկյունը, եթե ընկնող ճառագայթի և հայելու կազմած անկյունը մեծացնենք 10^0-ով:

1828. Հորիզոնական տեղադրված հարթ հայելու վրա լույսի ճառագայթի անկման անկյունը 30^0 է: Որքա՞ն կլինի լույսի անդրադարձման անկյունը, եթե հայելին շրջենք 10^0-ով այնպես, ինչպես ցույց է տրված 61-րդ նկարում:



Նկ. 61

www.atc.am

1829. Հորիզոնական տեղադրված հարթ հայելու վրա լույսի ճառագայթի անկման անկյունը 45^0 է: Որքա՞ն կլինի ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը, եթե հայելին շրջենք 15^0-ով այնպես, ինչպես ցույց է տրված 62-րդ նկարում:



Նկ. 62

1830. Հայելուն ընկնող ճառագայթի ի՞նչ անկման անկյան դեպքում են ընկնող և անդրադարձած ճառագայթները համընկնում:

1831. Մարդը կանգնած է հարթ հայելու դիմաց՝ նրանից 1,5 մ հեռավորությամբ: Որքա՞ն կլինի մարդու և նրա պատկերի հեռավորությունը, եթե մարդը հայելուց հեռանա ևս 2 մ-ով:

1832. Արեգակը հորիզոնից բարձր է 20^0: Հորիզոնի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի նրանից անդրադարձած ճառագայթն ուղղված լինի ուղղաձիգ դեպի վեր:

1833. Սեղանի հորիզոնական հարթության նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի սեղանի վրայով դեպի հայելի գլորվող գնդիկի պատկերը շարժվի ուղղաձիգ ուղղությամբ:

1834. Ճառագայթն ընկնում է երկու փոխուղղահայաց հայելիների համակարգի վրա: Առաջին հայելու վրա ճառագայթի անկման անկյունը՝ $\alpha = 17^0$: Անդրադառնալով առաջին հայելուց ճառագայթն ընկնում է երկրորդի վրա: Որքա՞ն է երկրորդ հայելուց ճառագայթի անդրադարձման անկյունը:

1835. Մարդը հարթ հայելուն մոտենում է 2 մ/վ արագությամբ: Ի՞նչ արագությամբ է նա մոտենում հայելում իր պատկերին:

1836. Հարթ հայելին շարժվում է հաստատուն՝ 1,5 մ/վ արագությամբ, հայելու նորմալի ուղղությամբ: Նույն հաշվարկման համակարգում ի՞նչ արագությամբ պետք է շարժվի լույսի կետային աղբյուրը, որպեսզի հայելում նրա պատկերը մնա անշարժ:

1837. 5 մ շառավղով շրջանաձև լողավազանը լիքը լցված է ջրով: Լողավազանի կենտրոնում՝ ջրի մակերևույթից 3 մ բարձրությամբ կախված է լամպը: Լողավազանի եզրից առավելագույնն ի՞նչ հեռավորությունից կտեսնի մարդը լամպի պատկերը ջրում, եթե նրա հասակը 1,8 մ է:

www.atc.am

1838. Լույսի ճառագայթն օդից ընկնում է $\sqrt{2}$ բեկման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա: Անկման անկյունը 45^0 է: Բեկման հետևանքով ի՞նչ անկյամբ է շեղվում ճառագայթն իր սկզբնական ուղղությունից:

1839. Ի՞նչ անկյան տակ պետք է լույսի ճառագայթը վակուումից ընկնի $\sqrt{3}$ բեկման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա, որպեսզի անդրադարձած ճառագայթն ուղղահայաց լինի բեկված ճառագայթին:

1840. Լույսի ճառագայթը վակուումից ընկնում է $\sqrt{3}$ բեկման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա: Որքա՞ն է բեկման անկյունը, եթե այն 30^0-ով փոքր է անկման անկյունից:

1841. Որքա՞ն է լույսի արագությունը միջավայրում, եթե միջավայրի բեկման ցուցիչը 1,25 է: Պատասխանը բազմապատկել 10^{-7}-ով:

1842. Ջրասուզակին ջրում ի՞նչ անկյան տակ է երևում մայր մտնող Արեգակը, եթե ջրի բեկման ցուցիչը $\sqrt{2}$ է:

1843. Լույսի ճառագայթը հեղուկից դուրս է գալիս օդ: Լրիվ անդրադարձման սահմանային անկյունը 30^0 է: Որքա՞ն է լույսի արագությունը հեղուկում: Պատասխանը բազմապատկել 10^{-7}-ով:

1844. Որքա՞ն ճանապարհ է անցնում լույսի ճառագայթը ջրում 1 մկվ-ի ընթացքում, եթե ջրի բեկման ցուցիչը 4/3 է:

1845. Լույսի ճառագայթը, օդից ուղղահայաց ընկնելով ապակե հավասարակողմ եռանկյուն հատվածակողմի նիստերից մեկի վրա, անդրադառնում է երկրորդ նիստից և դուրս գալիս երրորդ նիստից: Որքա՞ն է ընկնող և հատվածակողմից դուրս եկող ճառագայթների կազմած անկյունը:

1846. Լույսի կետային աղբյուրի խորությունը ջրի մեջ 1,5 մ է: Ինչքա՞ն է այն շրջանի շառավիղը ջրի մակերևույթի վրա, որի սահմաններում հնարավոր է ճառագայթի դուրս գալը օդ: Ջրի բեկման ցուցիչն ընդունել 1,25:

1847. Ոսպնյակի օպտիկական ուժը 0,5 դպտր է: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:

1848. Մոմի հեռավորությունը 10 դպտր օպտիկական ուժ ունեցող բարակ հավաքող ոսպնյակից 0,125 մ է: Ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

www.atc.am

1849. Բարակ ոսպնյակից 0,4 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի պատկերը ստացվեց իրական և 3 անգամ խոշորացված: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1850. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 4 մ է: Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից, եթե այն 4 անգամ փոքր է, քան իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից:

1851. Որքա՞ն է բարակ ոսպնյակի խոշորացումը, եթե առարկայի հեռավորությունը ոսպնյակից 4 անգամ փոքր է պատկերի՝ ոսպնյակից ունեցած հեռավորությունից:

1852. Առարկան տեղադրված է հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքին ուղղահայաց՝ ոսպնյակից նրա կիզակետային հեռավորության 1/2-ին հավասար հեռավորության վրա: Որքա՞ն է գծային խոշորացման բացարձակ արժեքը:

1853. Հավաքող բարակ ոսպնյակից 0,04 մ հեռավորությամբ դրված առարկան այդ ոսպնյակով դիտելիս ստանում են նրա կեղծ պատկերը, որը 5 անգամ մեծ է առարկայից: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:

1854. Հավաքող բարակ ոսպնյակից 0,4 մ հեռավորության վրա տեղադրված առարկայի կեղծ պատկերը ոսպնյակից հեռու է 0,5 մ: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:

1855. Լուսանկարչական ապարատի օբյեկտիվի կենտրոնից մինչև ետևի պատը եղած հեռավորությունը 0,05 մ է: Օբյեկտիվից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել նկարվող առարկան, որպեսզի նրա պատկերը ստացվի 40 անգամ փոքրացված:

1856. 2 մ բարձրությամբ առարկան 1 մ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակից հեռու է 3 մ: Որքա՞ն է առարկայի պատկերի բարձրությունը:

1857. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետից մինչև առարկան հեռավորությունը 0,1 մ է, իսկ իրական պատկերից մինչև մյուս կիզակետը՝ 2,5 մ: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:

1858. Բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 50 սմ է: Առարկան ոսպնյակից հեռու է 60 սմ: Ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի առարկայի պատկերը:

www.atc.am

1859. Որքա՞ն է ցրող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը, եթե ոսպնյակից մինչև առարկա հեռավորությունը 12 սմ է, իսկ մինչև պատկերը՝ 4 սմ: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1860. Լույսի ճառագայթների զուգահեռ փունջն ընկնում է 5 դպտր օպտիկական ուժով բարակ ոսպնյակի վրա՝ նրա գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ (նկ. 63): Ոսպնյակի տրամագիծը՝ $d_1 = 6$ սմ: Էկրանը ոսպնյակից հեռու է $L = 60$ սմ: Որքա՞ն է էկրանի վրա ոսպնյակով ստացված լուսավոր օղակի տրամագիծը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:



Նկ. 63

1861. Ցրող բարակ ոսպնյակից 6 մ հեռավորությամբ տեղադրված 0,4 մ բարձրությամբ առարկայի կեղծ պատկերի բարձրությունը 0,1 մ է: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության բացարձակ արժեքը:

1862. Սիմյանցից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել երկու հավաքող բարակ միատեսակ ոսպնյակները՝ յուրաքանչյուրը 2 դպտր օպտիկական ուժով, որպեսզի այդ համակարգի վրա ընկնող ճառագայթների զուգահեռ փունջը, դուրս գալով նրանից, մնա զուգահեռ:

1863. Օդում կալիումի գոլորշիների արձակած կարմիր գույնի լույսի ալիքի երկարությունը $7,36 \cdot 10^{-7}$ մ է: Որքա՞ն է տվյալ լույսի ալիքի երկարությունն ապակում, եթե նրա բեկման ցուցիչը 1,6 է: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1864. Լույսի ալիքի երկարությունը թափանցիկ միջավայրում քանի՞ տոկոսով է փոքր վակուումում նրա ալիքի երկարությունից: Այդ միջավայրի բեկման ցուցիչը 1,25 է:

1865. Վակուումում ի՞նչ հեռավորություն կանցնի լույսի մեներանգ ճառագայթման ալիքի ճակատն այն ժամանակամիջոցում, որի ընթացքում այդ ալիքը ջրում անցնում է 170 մ հեռավորություն: Ջրի բեկման ցուցիչը 1,3 է:

1866. Որքա՞ն մանուշակագույն լույսի ալիքներ են տեղավորվում մեկ սանտիմետրում: Օդում մանուշակագույն լույսի ալիքի երկարությունը $4 \cdot 10^{-7}$ մ է: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:

www.ate.am

1867. Երկու վերադրվող կոհերենտ լույսի ալիքների ընթացքի տարբերությունը տվյալ կետում հավասար է ալիքի երկարության 0,3 -ին: Որքա՞ն է այդ կետում տատանումների փուլերի տարբերությունն՝ արտահայտված աստիճաններով:

1868. Էկրանի ինչ-որ կետում ընթացքի $2,4\cdot10^{-6}$ մ տարբերությամբ երկու կոհերենտ ալիքների վերադրման հետևանքով դիտվում է չորրորդ կարգի մաքսիմում: Որքա՞ն է նույն ալիքի երկարությամբ երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարբերությունն այն դեպքում, երբ էկրանի վրա ստացվում է նույն կարգի մինիմում: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1869. Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը, եթե այն 1 մմ-ի վրա ունի 500 նրբագիծ: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1870. Լույսի փունջն ընկնում է դիֆրակտային ցանցի վրա՝ նրա նորմալի ուղղությամբ: Որոշել ցանցի պարբերությունը, եթե երկրորդ կարգի մաքսիմումը դիտվում է սկզբնական ուղղության նկատմամբ 30^0 անկյան տակ: Լույսի ալիքի երկարությունը $5\cdot10^{-7}$ մ է: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1871. Դիֆրակտային ցանցի պարբերությունը $3,3\cdot10^{-6}$ մ է: Որքա՞ն է կանաչ գույնի լույսի սպեկտրի մաքսիմումների առավելագույն կարգը, եթե ալիքի երկարությունը $5,5\cdot10^{-7}$ մ է:

1872. $2\cdot10^{-5}$ մ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա, նրան ուղղահայաց ուղղությամբ ընկնում է սպիտակ լույսի զուգահեռ փունջ: Ցանցից 2 մ հեռավորության էկրանի վրա դիտվում է սպեկտ: Որքա՞ն է սպեկտրի առաջին կարգի կարմիր և մանուշակագույն գույների մաքսիմումների հեռավորությունը, եթե լույսի կարմիր և մանուշակագույն ալիքների երկարությունները համապատասխանաբար $8\cdot10^{-7}$ մ և $4\cdot10^{-7}$ մ են: Ընդունել, որ փոքր անկյունների համար $\sin\varphi \approx tg\varphi$: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1873. 700 նմ ալիքի երկարությամբ լազերային ճառագայթն ուղղահայաց ընկնում 1 մմ-ի վրա 250 նրբագիծ պարունակող դիֆրակտային ցանցի վրա: 1 մմ-ի վրա քանի՞ նրբագիծ պետք է պարունակի դիֆրակտային ցանցը, որպեսզի նրա վրա 500 նմ ալիքի երկարությամբ լազերային ճառագայթ ընկնելիս դիֆրակտային պատկերը չփոխվի:

www.atc.am

1874. Դիֆրակտային ցանցի հաստատունը $2 \cdot 10^{-6}$ մ է: Ցանցի վրա նորմալի ուղղությամբ ընկնում է հարթ մեներանգ ալիք: Որքա՞ն է ընկնող ալիքի երկարությունը, եթե 4-րդ կարգի սպեկտրը դիտվում է ընկնող ճառագայթներին ուղղահայաց ուղղությամբ: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1875. Դիֆրակտային ցանցի պարբերությունը 0,01 մմ է: Առաջին դիֆրակտային մաքսիմումը կենտրոնական պատկերից հեռու է 11,8 սմ, իսկ ցանցից՝ 2 մ: Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Փոքր անկյուների համար ընդունել $\sin\alpha \approx tg\alpha$: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1876. Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի մարմինը, որպեսզի անշարժ դիտողի համար նրա երկայնական չափերը շարժման ուղղությամբ փոքրանան 2 անգամ: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1877. Երկրի նկատմամբ ի՞նչ արագությամբ պետք է շարժվի տիեզերանավը, որպեսզի նրա հետ կապված հաշվարկման համակարգում ժամանակը երկու անգամ դանդաղ ընթանա, քան Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1878. Քանի՞ տարի կանցնի Երկրի վրա, եթե Երկրի նկատմամբ $0{,}8c$ արագությամբ շարժվող հրթիռում անցնում է 6 տարի:

1879. Մարմնի հանգստի էներգիան $1{,}8 \cdot 10^{17}$ Ջ է: Որքա՞ն է մարմնի զանգվածը:

1880. Երկիրը յուրաքանչյուր վայրկյանում կլանում է Արեգակի արձակած էլեկտրամագնիսական ճառագայթման $6{,}3 \cdot 10^{16}$ Ջ էներգիա: Քանի՞ կիլոգրամով է ավելանում Երկրի զանգվածը 10 վայրկյանում:

1881. $10\,^0$C ջերմաստիճանի 2 կգ զանգվածով ջուրը տաքացնում են մինչև եռման ջերմաստիճանը ($100\,^0$C): Որքանո՞վ է փոխվում ջրի զանգվածը: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով: Գնդորշիացման հետևանքով ջրի զանգվածի փոփոխությունն անտեսել:

1882. Որքա՞ն աշխատանք է անհրաժեշտ կատարել էլեկտրոնի արագությունը $0{,}6c$-ից մինչև $0{,}8c$ արժեքը մեծացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{17}-ով:

www.atc.am

1883. Ի՞նչ արագության դեպքում m զանգվածով ռելյատիվիստական մասնիկի կինետիկ էներգիան կդառնա $\frac{mc^2}{3}$: Ընդունել $\sqrt{7} = 2,64$: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

www.atc.am

12.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1884. Փողոցային լուսավորության լամպից որոշ հեռավորությամբ ուղղաձիգ տեղադրված 1 մ երկարությամբ ձողի ստվերի երկարությունը գետնին 1 մ է: Եթե լամպի սյան և ձողի հեռավորությունը մեծացնենք 1,5 մ-ով, ապա ստվերի երկարությունը կլինի 1,5 մ:

1) Սկզբում սյունից ի՞նչ հեռավորության վրա էր ձողը:
2) Որքա՞ն է լամպի բարձրությունը գետնից:

1885. Լույսի կետային աղբյուրը տեղադրված է միմյանց զուգահեռ երկու հարթ հայելիների միջև: Հայելիների միջև հեռավորությունը 1 մ է:

1) Որքա՞ն է հայելիներում լույսի աղբյուրի առաջին պատկերների միջև հեռավորությունը:
2) Որքանո՞վ կմեծանա առաջին պատկերների հեռավորությունը, եթե հայելիների հեռավորությունը մեծացնենք 0,5 մ-ով:

1886. 64-րդ նկարում պատկերված հարթ հայելին շարժվում է $v = 2,5$ մ/վ արագությամբ, իսկ լույսի S կետային աղբյուրը՝ $u = 5$ մ/վ արագությամբ:

1) Գետնի նկատմամբ ի՞նչ արագությամբ է շարժվում աղբյուրի պատկերը:
2) Հայելու հետ ի՞նչ սուր անկյուն է կազմում պատկերի արագությունը գետնի նկատմամբ:



Նկ. 64

1887. Լույսի ճառագայթը վակուումից անցնում է թափանցիկ դիէլեկտրիկի մեջ: Ճառագայթի անկման անկյունը 45^0 է: Դիէլեկտրիկի բեկման ցուցիչը $\sqrt{2}$ է:

1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը:
2) Որքա՞ն է բեկման հետևանքով սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման անկյունը:

1888. Լույսի ճառագայթն ուղղահայաց ընկնում է 65-րդ նկարում պատկերված $\alpha = 30^0$ բեկող անկյուն ունեցող հատվածակողմի AB նիստին և դուրս գալիս նրանից այնպես, որ ելքում ճառագայթը BC նիստի հետ նույնպես կազմում է $\alpha = 30^0$ անկյուն: Հատվածակողմի BC նիստն ուղղահայաց է AC նիստին:

1) Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը BC նիստի վրա:



Նկ. 65

www.atc.am

2) Որքա՞ն է հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1889. Ապակե հատվածակողմի հատույթն ունի հավասարասրուն եռանկյան տեսք: Հավասար նիստերից մեկն արծաթապատված է, իսկ մյուսին ուղղահայաց ընկնող լույսի ճառագայթը, երկու անգամ անդրադառնալուց հետո, դուրս է գալիս հատվածակողմից՝ նրա հիմքին ուղղահայաց ուղղությամբ (նկ. 66):



Նկ. 66

1) Որքա՞ն է հատվածակողմի գագաթի α անկյունը:
2) Որքա՞ն է հատվածակողմի հիմքի β անկյունը:

1890. Լուսատու կետը F = 0,5 մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով 3 վ-ում ոսպնյակից 3F հեռավորությամբ A կետից տեղափոխվում է 1,5F հեռավորությամբ B կետը:

1) Որքա՞ն է A և B կետերի պատկերների հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է լուսատու կետի պատկերի շարժման միջին արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1891. 4 դպտր օպտիկական ուժ ունեցող բարակ ոսպնյակով պետք է ստանան առարկայի խոշորացված պատկերը:

1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա 5 անգամ խոշորացված իրական պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա 5 անգամ խոշորացված կեղծ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1892. Երբ առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 6 սմ է, նրա իրական պատկերը ստացվում է 2 անգամ խոշորացված:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքանո՞վ պետք է տեղափոխել առարկան դեպի ոսպնյակը, որպեսզի նրա իրական պատկերը լինի 10 անգամ խոշորացված: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1893. 0,6 մ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակից 0,3 մ հեռավորությամբ տեղադրված է առարկան:

www.atc.am

1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է այդ դեպքում ոսպնյակի խոշորացումը:

1894. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի իրական պատկերը ստացվում է 2 անգամ խոշորացված: Առարկայի և պատկերի հեռավորությունը 24 սմ է:

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1895. Առարկայի իրական պատկերի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 6 սմ է: Եթե հավաքող ոսպնյակը փոխարինվի մողուլով նույն կիզակատային հեռավորություն ունեցող ցրող բարակ ոսպնյակով, ապա կեղծ պատկերը ցրող ոսպնյակից հեռու կլինի 3 սմ:

1) Որքա՞ն է ոսպնյակների կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակներից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1896. Հավաքող բարակ ոսպնյակից 0,2 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի կեղծ պատկերը խոշորացված է 5 անգամ:

1) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
2) Որքա՞ն պետք է լինի առարկայի հեռավորությունը ոսպնյակից, որպեսզի ստացվի 5 անգամ խոշորացված իրական պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1897. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի 5 անգամ խոշորացված կեղծ պատկերի հեռավորությունը առարկայից 80 սմ է:

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:

1898. Լույսի երկու կետային աղբյուրների միջև հեռավորությունը 24 սմ է: Նրանց միջև, մեկից 6 սմ հեռավորության վրա հավաքող բարակ ոսպնյակը տեղադրված է այնպես, որ երկու աղբյուրների պատկերներն էլ ստացվում են գլխավոր օպտիկական առանցքի նույն կետում:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

2) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ են ստացվում պատկերները: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1899. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի կեղծ պատկերի հեռավորությունը ոսպնյակից 4 անգամ մեծ է կիզակետային հեռավորությունից:

1) Որքա՞ն է առարկայի ոսպնյակից ունեցած հեռավորության և կիզակետային հեռավորության հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը:

1900. 20 սմ կիզակետային հեռավորությամբ բարակ ոսպնյակում ստացվում է առարկայի 4 անգամ փոքրացված պատկերը: Այլ ոսպնյակով փոխարինելիս նույն տեղում ստացվում է նույն առարկայի 4 անգամ խոշորացված իրական պատկերը:

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից:
2) Որքա՞ն է երկրորդ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1901. 0,4 մ բարձրությամբ առարկան տեղադրված է 2 մ կիզակետային հեռավորություն ունեցող ցրող բարակ ոսպնյակից 6 մ հեռավորությամբ:

1) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է պատկերի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1902. $F=15$ սմ կիզակետային հեռավորությամբ ցրող բարակ ոսպնյակի վրա՝ նրա գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ ընկնում է լույսի ճառագայթների գլանաձև փունջ: Ոսպնյակի հետևում տեղադրված էկրանին ստացվում է փնջի տրամագծից 3 անգամ մեծ տրամագծով լուսավոր շրջան:

1) Որքա՞ն է էկրանի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Լուսավոր շրջանի տրամագիծը քանի՞ անգամ մեծ կլինի փնջի տրամագծից, եթե էկրանը տեղադրենք ոսպնյակից $3F$ հեռավորությամբ:

1903. O_1 և O_2 կոհերենտ աղբյուրների ճառագայթած լույսի ալիքի երկարությունը $5{,}9\cdot10^{-7}$ մ է: M կետի հեռավորությունը աղբյուրներից՝ $d_1=1$ մ և $d_2=1{,}059$ մ (նկ. 67):

www.aic.am

1) Որքա՞ն է M կետում ալիքների ընթացքների տարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Լույսի քանի՞ ալիքի երկարություն է տեղավորվում ընթացքների տարբերության վրա: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:



Նկ. 67

1904. Դիֆրակտային ցանցի նորմալի ուղղությամբ նրա վրա ընկնում է 1000 նմ ալիքի երկարությամբ ենթակարմիր լույս: Դիֆրակտային ցանցի 1 մմ-ի վրա պարունակվում է 500 նրբագիծ:

1) Ի՞նչ անկյան տակ կդիտվի առաջին կարգի մաքսիմումը՝ արտահայտված աստիճաններով:
2) Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:

1905. Մեներանգ լույսի փունջն ուղղահայաց ընկնում է դիֆրակտային ցանցի վրա, որի հաստատունը 1,5 մկմ է: Լույսի ալիքի երկարությունը՝ 0,525 մկմ:

1) Որքա՞ն է դիտվող մաքսիմումների առավելագույն կարգը:
2) Ի՞նչ անկյան տակ է ստացվում առավելագույն կարգի մաքսիմումը: Ընդունել՝ $0,7 = \sqrt{2}/2$:

1906. Վակուումում վերադրվող երկու մեներանգ լույսի ալիքների տատանման փուլերի տարբերությունը՝ $\Delta\varphi = 6\pi$, իսկ ընթացքների տարբերությունը՝ $\Delta d = 1,5$ մկմ:

1) Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:
2) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1907. Մարմնի զանգվածը 876 գ է:

1) Որքա՞ն է մարմնի հանգստի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{-13}-ով:
2) Քանի՞ տարում այդքան էներգիա կարտադրի 10^9 Վտ հզորությամբ էլեկտրակայանը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

www.atc.am

12.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1908. Լույսի ճառագայթը 60^0 անկյան տակ ընկնում է ապակե հարթ զուգահեռ թիթեղի վրա և դուրս գալիս նրանից: Ապակու բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է: Թիթեղի հաստությունը 0,3 մ է:

1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը օդ-ապակի սահմանի վրա:
2) Բեկման հետևանքով ապակու մեջ լույսի ճառագայթը քանի՞ աստիճանով է շեղվում իր սկզբնական ուղղությունից:
3) Ապակուց դուրս եկած ճառագայթը որքանո՞վ է տեղաշարժվում սկզբնական ուղղությունից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1909. 60^0 բեկող անկյուն ունեցող հավասարակողմ հատվածակողմը դրված է BC հիմքի վրա (նկ. 68): Հատվածակողմի վրա ընկնող ճառագայթը նրա ներսում տարածվում է BC հիմքին զուգահեռ: Հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է:



Նկ. 68

1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը հատվածակողմ մտնելիս:
2) Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը հատվածակողմ մտնելիս:
3) Որքա՞ն է սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման δ անկյունը:

1910. Երբ առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 0,06 մ է, նրա իրական պատկերը ստացվում է 2 անգամ խոշորացված:

1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ է ստացվում առարկայի պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
3) Այդ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա 2 անգամ խոշորացված կեղծ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1911. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 10 սմ է: 2 սմ բարձրությամբ առարկան տեղադրված է ոսպնյակից 15 սմ հեռավորությամբ՝ գլխավոր օպտիկական առանցքին ուղղահայաց:

1) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:

www.atc.am

2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը:
3) Որքա՞ն է պատկերի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1912. Ողղանկյուն կոորդինատային համակարգի X առանցքը համընկնում է բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքին: (10 ; 5) կոորդինատներով լուսատու կետի իրական պատկերը ստացվում է (40 ; -10) կոորդինատներով կետում: Կոորդինատներն արտահայտված են սանտիմետրերով:

1) Որքա՞ն է լուսատու կետի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է լուսատու կետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:

1913. Լուսատու կետը հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի շուրջը 3 սմ/վ գծային արագությամբ կատարում է 10 սմ շառավղով շրջանագծային շարժում: Լուսատու կետի պտտման հարթությունն ուղղահայաց է գլխավոր օպտիկական առանցքին և ոսպնյակից հեռու է $1{,}5F$, որտեղ $F = 10$ սմ-ը ոսպնյակի կիզակետային հեռավորությունն է:

1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորություն ունի լուսատու կետի պատկերի հետագծի հարթությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է պատկերի հետագծի շառավիղը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Ի՞նչ գծային արագությամբ է պտտվում պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1914. 4 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակը տեղադրված է անթափանց թիթեղի նույն մեծությամբ շրջանաձև անցքում: Լույսի կետային աղբյուրը տեղադրված է ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի վրա՝ ոսպնյակից 12 սմ հեռավորությամբ:

1) Ոսպնյակի մյուս կողմում՝ նրանից ի՞նչ ամենափոքր հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվող լուսավոր շրջանի տրամագիծը երկու անգամ փոքր լինի ոսպնյակի տրամագծից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Ոսպնյակի մյուս կողմում, նրանից ի՞նչ ամենամեծ հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվող լուսավոր

www.aic.am

շրջանի տրամագիծը երկու անգամ փոքր լինի ոսպնյակի տրամագծից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

3) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվի աղբյուրի կետային պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1915. Լույսի կետային աղբյուրը ցրող բարակ ոսպնյակից 1,2 մ հեռավորությամբ կետից գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով տեղափոխում են մինչև 0,6 մ հեռավորությամբ կետը: Այդ ընթացքում նրա պատկերն անցնում է 10 սմ ճանապարհ:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է աղբյուրի սկզբնական դիրքի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է աղբյուրի վերջնական դիրքի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1916. 0,12 մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակից առարկայի հեռավորությունը 0,18 մ է: Ոսպնյակի կիզակետային հարթության մեջ տեղադրված է հարթ հայելի:

1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը նշված համակարգում: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է այդ պատկերի խոշորացումը:
3) Առարկայից ի՞նչ հեռավորության վրա է ստացվում պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1917. $F_1 = |F_2| = 0,2$ մ կիզակետային հեռավորություններ ունեցող հավաքող և ցրող բարակ ոսպնյակները տեղադրված են իրարից 0,5 մ հեռավորությամբ, այնպես, որ նրանց գլխավոր օպտիկական առանցքները համընկնում են: Լույսի կետային աղբյուրը տեղադրված է հավաքող ոսպնյակի առջևում՝ նրանից 0,3 մ հեռավորությամբ, և նրա պատկերը ստացվում է ցրող ոսպնյակի հետևում:

1) Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի աղբյուրի պատկերը ցրող ոսպնյակի բացակայության դեպքում: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է այդ պատկերի հեռավորությունը ցրող ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10- ով:
3) Ցրող ոսպնյակից ի՞նչ հեռավորություն ունի աղբյուրի պատկերը ոսպնյակների համակարգում: Պատասխանը բազմապատկել 10- ով:

www.aic.am

1918. Դիֆրակտային ցանցի միջոցով, նրան ուղղահայաց ընկնող 625 նմ ալիքի երկարությամբ մեներանգ լույսի փնջով լուսավորելիս, կարելի է ստանալ առավելագույնն ութերորդ կարգի մաքսիմում:

1) Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել 10^6 – ով:
2) Քանի՞ նրբագիծ է պարունակում ցանցը 1 մմ-ի վրա:
3) Ի՞նչ աստիճանի անկյան տակ կդիտվի չորրորդ կարգի մաքսիմումն այդ ցանցում:

1919. 14 մկմ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա՝ նրան ուղղահայաց ընկնում է մեներանգ լուսային ալիք: Ցանցից 2 մ հեռավորությամբ էկրանին առաջացած սպեկտրի երկրորդ և երրորդ կարգի մաքսիմումների հեռավորությունը 8,7 սմ է: Փոքր անկյունների համար ընդունել՝ $\sin\alpha = tg\alpha$:

1) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^9- ով:
2) Որքա՞ն է գլխավոր և առաջին կարգի մաքսիմումների հեռավորությունն էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:
3) Որքա՞ն է ութերորդ և յոթերորդ կարգի մաքսիմումների հեռավորությունն էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:

www.atc.am

12.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1920. 18 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակն էկրանին տալիս է առարկայի $\Gamma_1 = 9$ խոշորացմամբ պատկերը: Մեկ այլ հավաքող բարակ ոսպնյակ առարկայի և էկրանի նույն հեռավորության դեպքում տալիս է այդ առարկայի $\Gamma_2 = 3$ խոշորացմամբ պատկերը:

1) Որքա՞ն է առարկայի և էկրանի հեռավորությունը:
2) Որքան է պատկերի հեռավորությունը երկրորդ ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը երկրորդ ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10- ով:
4) Որքա՞ն է երկրորդ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1921. Հավաքող բարակ ոսպնյակի օգնությամբ էկրանի վրա սկզբում ստանում են մոմի բոցի խոշորացված պատկերը, այնուհետև՝ փոքրացված: Խոշորացված պատկերի բարձրությունը 12 մմ է, փոքրացվածինը՝ 3 մմ: Երկու դեպքում էլ էկրանի և բոցի միջև հեռավորությունը նույնն է:

1) Որքա՞ն է բոցի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է բոցի հեռավորությունը ոսպնյակից առաջին դեպքում: Ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 12 սմ է: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է բոցի հեռավորությունը ոսպնյակից երկրորդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
4) Որքա՞ն է բոցի և էկրանի հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:

1922. $l = 8$ սմ երկարությամբ AB ճողը տեղադրված է $F = 12$ սմ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով (նկ. 69): Ճողի կենտրոնը հեռու է ոսպնյակից $a = 20$ սմ:



Նկ. 69

www.ato.am

1) Որքա՞ն է ձողի B ծայրակետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է ձողի A ծայրակետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով: (48)
3) Որքա՞ն է ձողի պատկերի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
4) Ձողի պատկերի երկարությունը քանի՞ անգամ է մեծ ձողի երկարությունից:

1923. Առարկան և ցրող բարակ ոսպնյակում նրա պատկերը համաչափ են դասավորված ոսպնյակի կիզակետի նկատմամբ: Առարկայի հեռավորությունը կիզակետից 0,05 մ է:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
3) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10^2- ով:
4) Որքա՞ն է առարկայի բարձրությունը, եթե պատկերի բարձրությունը 0,07 մ է: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1924. 20 սմ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակը չձգվող թելով կախված է A կետից (նկ. 70) այնպես, որ A կետից մինչև ոսպնյակի կենտրոն եղած հեռավորությունը 0,45 մ է: Ոսպնյակը շեղելով՝ թելը բերում են հորիզոնական դիրքի և բաց թողնում: Շարժման ընթացքում ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքը միշտ ուղղված է թելի երկայնքով: Օդի դիմադրությունն ու շփումն անտեսել:



Նկ. 70

1) Որքա՞ն է ոսպնյակի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելիս:
2) Որքա՞ն է A կետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է A կետի պատկերի արագությունը ոսպնյակը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն է A կետի պատկերի արագացումը ոսպնյակը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:

www.afc.am

1925. 50 գ զանգվածով գնդիկը 5 մ/վ արագությամբ հորիզոնական ուղղությամբ շարժվում է 40 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով: Ոսպնյակն ուղղածիգ դիրքով տեղադրված է պատվանդանի վրա, որը գտնվում է ողորկ հորիզոնական հարթության վրա: Ոսպնյակը պատվանդանի հետ միասին ունի 200 գ զանգված: Գնդիկը բացարձակ առաձգական բախումով անդրադառնում է ոսպնյակից:

1) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի կեղծ պատկերը ոսպնյակում մինչև ոսպնյակի հետ բախվելը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է գնդիկի արագությունը, ոսպնյակի հետ բացարձակ առաձգական բախումից հետո:
3) Որքա՞ն է ոսպնյակի արագությունը գնդիկի հետ բացարձակ առաձգական բախումից հետո:
4) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի կեղծ պատկերը ոսպնյակում ոսպնյակի հետ բախվելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1926. Էկրանը տեղադրված է 80 սմ կիզակետային հեռավորությամբ ոսպնյակի կիզակետային հարթության մեջ: Ոսպնյակի մյուս կիզակետից լույսի կետային աղբյուրը, շարժվելով գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով, սկսում է հեռանալ 0,2 մ/վ^2 արագացմամբ: Շարժումն սկսելուց որոշ ժամանակ անց էկրանի վրա լուսավոր շրջանի տրամագիծը փոքրացավ 9 անգամ:

1) Որքա՞ն է այդ պահին լույսի աղբյուրի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է այդ պահին կետի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է լույսի աղբյուրի անցած ճանապարհն այդ պահին: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն ժամանակում լուսավոր շրջանի տրամագիծը փոքրացավ 9 անգամ:

www.atc.am

13. ՔՎԱՆՏԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ

13.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1927. Ո՞ր մեծությանն է ուղիղ համեմատական ֆոտոնի էներգիան:

1) Ֆոտոնի արագության քառակուսուն:
2) Ֆոտոնի արագությանը:
3) Հաճախությանը:
4) Ալիքի երկարությանը:

1928. Ո՞ր ճառագայթման ֆոտոնի էներգիան է ավելի մեծ:

1) Տեսանելի լույսի:
2) Անդրմանուշակագույն ճառագայթման:
3) Ենթակարմիր ճառագայթման:
4) Ռենտգենյան ճառագայթման:

1929. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

λ ալիքի երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքի ֆոտոնի էներգիան համեմատական է...

1) $\frac{1}{\lambda^2}$:
2) λ^2:
3) λ:
4) $\frac{1}{\lambda}$:

1930. Եթե էլեկտրամագնիսական ալիքի հաճախությունը փոքրանա երկու անգամ, ապա ինչպե՞ս կփոխվի ճառագայթման ֆոտոնի էներգիան:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 4 անգամ:

1931. Ո՞րն է λ ալիքի երկարությամբ ֆոտոնի իմպուլսի ճիշտ բանաձևը:

1) $h\lambda$:
2) $\frac{h}{\lambda}$:
3) $\frac{hc}{\lambda^2}$:
4) $\frac{hc}{\lambda}$:

1932. Համեմատեք կարմիր և մանուշակագույն լույսի ֆոտոնների իմպուլսները:

1) Կարմիր լույսի ֆոտոնի իմպուլսն ավելի մեծ է:
2) Մանուշակագույն լույսի ֆոտոնի իմպուլսն ավելի մեծ է:

www.atc.am

3) Երկու դեպքում էլ ֆոտոնն ունի միևնույն իմպուլսը:
4) Ֆոտոնն իմպուլս չունի:

1933. Հայելային մակերևույթին ուղղահայաց ընկնող լույսը լրիվ անդրադառնում է: Որքա՞ն է այդ մակերևույթին մեկ ֆոտոնի հաղորդած իմպուլսը:

1) $\frac{h\nu}{2c}$:
2) $\frac{h\nu}{c}$:
3) $\frac{2h\nu}{c}$:
4) $\frac{c}{\lambda\nu}$:

1934. Հանգստի վիճակում գտնվող m զանգվածով ատոմը ճառագայթում է ν հաճախության ֆոտոն: Որքա՞ն է այդ դեպքում ատոմի ձեռք բերած իմպուլսը:

1) 0:
2) mc:
3) $\frac{h\nu}{c}$:
4) $\frac{h\nu}{mc}$:

1935. Երկու ֆոտոնների իմպուլսների հարաբերությունը՝ $p_1 / p_2 = 2$: Որքա՞ն է համապատասխան ալիքի երկարությունների λ_1 / λ_2 հարաբերությունը:

1) $\frac{1}{4}$:
2) $\frac{1}{2}$:
3) 2:
4) 4:

1936. Ապակե թիթեղով անցնելիս լույսի փնջի ուժգնությունը փոքրանում է: Ի՞նչ է տեղի ունենում այդ դեպքում:

1) Փնջում յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է:
2) Լույսի հաճախությունը փոքրանում է:
3) Ֆոտոնների թիվը փոքրանում է:
4) Ֆոտոնների թիվը և յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է:

1937. Լազերային ճառագայթման միջին հզորությունը P է, իսկ ալիքի երկարությունը՝ λ: Որքա՞ն է յուրաքանչյուր վայրկյանում ճառագայթված ֆոտոնների միջին թիվը:

www.atc.am

1) $\frac{P}{\lambda}$: 3) $\frac{Pc}{\lambda}$:

2) $\frac{P\lambda}{c}$: 4) $\frac{P\lambda}{hc}$:

1938. Ո՞ր երևույթն է կոչվում ֆոտոէֆեկտ:

1) Լույսի ազդեցությամբ նյութից էլեկտրոններ պոկվելու երևույթը:
2) Լույսի ազդեցությամբ ընթացող քիմիական ռեակցիան:
3) Ատոմի կողմից ֆոտոնի առաքման երևույթը:
4) Ատոմի կողմից ֆոտոնի կլանման երևույթը:

1939. Մեկուսացված էլեկտրաչեզոք ցինկե թիթեղը լուսավորում են անդրմանուշակագույն ճառագայթումով: Ի՞նչ նշանի լիցք է ձեռք բերում թիթեղը:

1) Դրական: 3) Չի լիցքավորվում:
2) Բացասական: 4) Կամայական նշանի լիցք:

1940. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի ազդեցությամբ մետաղից 1 վ-ում պոկված էլեկտրոնների թիվը…

1) ուղիղ համեմատական է լույսի ուժգնությանը:
2) կախված չէ լույսի ուժգնությունից:
3) հակադարձ համեմատական է լույսի ուժգնությանը:
4) կախված է միայն լույսի հաճախությունից:

1941. ν հաճախության լույսով մետաղը լուսավորելիս նրանից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան E է: Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը:

1) $E-h\nu$: 3) $h\nu-E$:
2) $E+h\nu$: 4) $h\nu$:

1942. Ֆոտոէֆեկտի ժամանակ ընկնող լույսի հաճախությունը մեծացնելիս ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը մեծանում է երեք անգամ: Ինչպե՞ս կփոխվի այդ դեպքում կասեցնող լարումը:

1) Կմեծանա 3 անգամ: 3) Կփոքրանա 3 անգամ:
2) Կմեծանա 9 անգամ: 4) Կփոքրանա 9 անգամ:

1943. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան …

1) կախված չէ ընկնող լույսի հաճախությունից:
2) կախված է ընկնող լույսի հաճախությունից գծային օրենքով:

www.atc.am

3) կախված է ընկնող լույսի ալիքի երկարությունից գծային օրենքով:
4) կախված չէ մետաղի ելքի աշխատանքից:

1944. Մետաղը հերթականությամբ լուսավորում են միևնույն հաճախությամբ լազերային երկու ճառագայթումներով, որոնց ուժգնության կախումը ժամանակից պատկերված է նկարում: Երկու դեպքում էլ դիտվում է ֆոտոէֆեկտ: Ո՞ր դեպքում ֆոտոէլեկտրոնների արագությունն ավելի մեծ կլինի:



1) ա դեպքում:
2) բ դեպքում:
3) Երկու դեպքում էլ նույնն է:
4) Պատասխանը կախված է ելքի աշխատանքի մեծությունից:

1945. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիայի կախումը ընկնող լույսի ֆոտոնի էներգիայից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1946. Ինչի՞ց կախված չէ ֆոտոէֆեկտի ժամանակ մետաղից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան:

1) Ընկնող լույսի հաճախությունից:
2) Ընկնող լույսի ուժգնությունից:
3) Էլեկտրոնների ելքի աշխատանքից:
4) Ընկնող լույսի ալիքի երկարությունից:

1947. Մետաղը լուսավորում են $\lambda = \lambda_0 / 2$ ալիքի երկարությամբ լույսով, որտեղ λ_0-ն ֆոտոէֆեկտի կարմիր սահմանն է: Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան:

www.aec.am

1) 0:

2) $\frac{hc}{2\lambda_0}$:

3) $\frac{hc}{\lambda_0}$:

4) $\frac{2hc}{\lambda_0}$:

1948. Ո՞ր մեծություններից է կախված ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան: I-ն ընկնող լույսի ուժգնությունն է, ν-ն՝ ընկնող լույսի հաճախականությունը, A-ն՝ մետաղի ելքի աշխատանքը:

1) Միայն I-ից:

2) Միայն ν-ից:

3) ν-ից և A-ից:

4) I-ից, ν-ից և A-ից:

1949. ν հաճախության ի՞նչ արժեքների դեպքում է A ելքի աշխատանք ունեցող մետաղում դիտվում ֆոտոէֆեկտի երևույթը:

1) $\nu < \frac{A}{h}$ դեպքում:

2) $\nu \geq \frac{A}{h}$ դեպքում:

3) Միայն $\nu = \frac{h}{A}$ դեպքում:

4) ν-ի կամայական արժեքի դեպքում:

1950. Նկարում պատկերված է ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիայի կախումն ընկնող լույսի հաճախությունից՝ երկու տարբեր մետաղների համար: Ո՞րն ունի ավելի մեծ ելքի աշխատանք:



1) I մետաղը:

2) II մետաղը:

3) Ելքի աշխատանքները հավասար են:

4) Պատասխանը կախված է լույսի հաճախությունից:

1951. Նկարում պատկերված է ֆոտոհոսանքի վոլտամպերային բնութագիծը: Ո՞ր կետն է համապատասխանում այն հոսանքին, որի դեպքում կաթոդից պոկված էլեկտրոնների միայն մի մասն է հասնում անոդին:



1) a:

2) b:

3) c:

4) d:

www.atc.am

1952. Նկարում պատկերված են I ֆոտոհոսանքի ուժի U լարումից կախումն արտահայտող գրաֆիկներ՝ ընկող լույսի տարբեր հաճախությունների համար: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում ֆոտոէլեկտրոնների ամենամեծ կինետիկ էներգիային:



1) ա:
2) բ:
3) գ:
3) դ:

1953. Նկարում պատկերված է լարումից ֆոտոհոսանքի ուժի կախման գրաֆիկը: Փոխվո՞ւմ են արդյոք U_0, I_0 և I_m մեծությունները լույսի ուժգնությունը փոխելիս:



1) Փոխվում են U_0-ն և I_0-ն:
2) Փոխվում են I_0-ն և I_m-ը:
3) Փոխվում են U_0-ն և I_m-ը:
4) Փոխվում է միայն I_m-ը:

1954. Նկարում պատկերված է ֆոտոհոսանքի ուժի՝ կիրառված լարումից կախումն արտահայտող գրաֆիկը: Ի՞նչ տեղի կունենա, եթե լույսի նույն ուժգնության դեպքում սկսենք փոքրացնել լույսի հաճախությունը:



1) Գրաֆիկի՝ կասեցնող լարմանը համապատասխանող մասը կտեղափոխվի դեպի աջ:
2) Գրաֆիկի՝ կասեցնող լարմանը համապատասխանող մասը կտեղափոխվի դեպի ձախ:
3) Գրաֆիկի՝ հոսանքի հագեցումը ցույց տվող մասը կտեղափոխվի դեպի վերև:
4) Գրաֆիկի՝ հոսանքի հագեցումը ցույց տվող մասը կտեղափոխվի դեպի ներքև:

1955. Լույսի ազդեցությամբ մետաղից պոկվում են էլեկտրոններ: Ի՞նչ տեղի կունենա, եթե ընկնող լույսի ուժգնությունը մեծացնենք 2 անգամ:

1) Միավոր ժամանակում մետաղից պոկված էլեկտրոնների թիվը կմե-

www.atc.am

ծանա 2 անգամ:

2) Միավոր ժամանակում մետաղից պոկված էլեկտրոնների թիվը չի փոխվի:
3) Էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան կմեծանա 2 անգամ:
4) Էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան կմեծանա 4 անգամ:

1956. Ինչպե՞ս է փոխվում ֆոտոէլեկտրոնների կինետիկ էներգիան լույսի ուժգնությունը մեծացնելիս:

1) Չի փոխվում:
2) Մեծանում է:
3) Կմեծանա կամ կփոքրանա:
4) Փոքրանում է:

1957. Ո՞ր օրենքն է արտահայտում Այնշտայնի բանաձևը ֆոտոէֆեկտի համար:

1) Իմպուլսի պահպանման:
2) Էներգիայի պահպանման:
3) Լիցքի պահպանման:
4) Լույսի անդրադարձման:

1958. ν հաճախությամբ լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար է ֆոտոնի էներգիայի կեսին: Որքա՞ն է ֆոտոէֆեկտի կարմիր սահմանն այդ մետաղի համար:

1) $0{,}5\nu$:
2) ν:
3) 2ν:
4) 3ν:

1959. Ֆոտոհոսանքի կասեցնող լարման կախումը ընկնող լույսի հաճախությունից տրված է գրաֆիկով: Ո՞ր արտահայտությունն է ճիշտ Պլանկի հաստատունի համար (e-ն էլեկտրոնի լիցքի մոդուլն է):

1) $tg\alpha = h$:
2) $tg\alpha = \frac{h}{e}$:
3) $tg\alpha = \frac{e}{h}$:
4) Այդ գրաֆիկով հնարավոր չէ որոշել պլանկի հաստատունը:



1960. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Թոմսոնի մոդելի՝ ատոմը ...

1) կազմված է դրական լիցքավորված միջուկից, որի շուրջը պտտվում են էլեկտրոններ:
2) գունդ է, որի ներսում կան պրոտոններ և էլեկտրոններ:

www.atc.am

3) էլեկտրաչեզոք գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
4) դրական լիցքավորված գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:

1961. Ի՞նչ մասնիկներով էր ռմբակոծվում ատոմը Ռեզերֆորդի փորձերում:

1) Էլեկտրոններով:
2) Պրոտոններով:
3) Նեյտրոններով:
4) α -մասնիկներով:

1962. Նկարում պատկերված α -մասնիկը շարժվում է դեպի ատոմի միջուկը: Ո՞ր հետագծով կշարժվի α -մասնիկը միջուկից ցրվելուց հետո:



1) A:
2) B:
3) C:
4) D:

1963. Ո՞ր նկարն է առավել համապատասխանում ջրածնի ատոմի մոդելին:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1964. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Ռեզերֆորդի մոդելի՝ ատոմի միջուկում կենտրոնացված են…

1) ատոմի գրեթե ամբողջ զանգվածը և ամբողջ դրական լիցքը:
2) ատոմի ամբողջ զանգվածը և բացասական լիցքը:
3) ատոմի զանգվածի չնչին մասը և ամբողջ դրական լիցքը:
4) ատոմի զանգվածի չնչին մասը և ամբողջ բացասական լիցքը:

1965. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ատոմը կլանում է…

1) միայն տեսանելի լույսի ֆոտոններ:
2) կամայական էներգիայով ֆոտոն:
3) միայն որոշակի էներգիայով ֆոտոններ:
4) միայն մեկ այլ ատոմի կողմից ճառագայթած ֆոտոն:

1966. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ատոմը ճառագայթում է …

1) գրգռված վիճակից հիմնական վիճակի անցնելիս:
2) հիմնական վիճակից գրգռված վիճակի անցնելիս:
3) ուղեծրով էլեկտրոնի հավասարաչափ շարժման ժամանակ:
4) ուղեծրով էլեկտրոնի արագացող շարժման ժամանակ:

www.atc.am

1967. Որքա՞ն է ատոմի կլանած ֆոտոնի էներգիան, եթե էլեկտրոնը հիմնական E_1 վիճակից անցնում է E_2 գրգռված վիճակի:

1) E_1:
2) E_2:
3) $E_2 - E_1$:
4) $E_1 - E_2$:

1968. Տարբեր հաճախությամբ քանի՞ ֆոտոն կարող է առաքել 4-րդ ստացիոնար էներգիական մակարդակում գտնվող ատոմը, եթե բոլոր անցումները հնարավոր են:



1) 3:
2) 4:
3) 5:
4) 6:

1969. Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ճառագայթած ֆոտոնի ալիքի երկարությունն առավելագույնը:



1) $E_2 \to E_3$:
2) $E_4 \to E_3$:
3) $E_1 \to E_3$:
4) $E_4 \to E_1$:

1970. Ատոմը E_3 էներգիական մակարդակից E_1 մակարդակն անցնելիս ճառագայթում է ν_1 հաճախության ֆոտոն, իսկ E_2-ից E_1 մակարդակն անցնելիս՝ ν_2 հաճախությամբ ֆոտոն: Ի՞նչ հաճախության ֆոտոն կճառագայթի ատոմը E_3 մակարդակից E_2 մակարդակն անցնելիս:

1) $\nu_1 + \nu_2$:
2) $\nu_1 - \nu_2$:
3) $\frac{\nu_1 + \nu_2}{2}$:
4) $\frac{\nu_1 - \nu_2}{2}$:

1971. Ջրածնի ատոմի հիմնական և առաջին գրգռված վիճակների էներգիաների մոդուլները տարբերվում են 4 անգամ, իսկ հիմնական և երկրորդ գրգռված վիճակներինը՝ 9 անգամ: Որքա՞ն է հիմնական վիճակից առաջին գրգռված վիճակն անցնելիս և հիմնական վիճակից երկրորդ գրգռված վիճակն անցնելիս կլանված ֆոտոնների հաճախությունների հարաբերությունը:

1) $\frac{4}{9}$:
3) $\frac{27}{32}$:

www.atc.am

2) $\frac{4}{5}$: 4) $\frac{5}{27}$:

1972. Ի՞նչ նշանի լիցք ունի ատոմի միջուկը:

1) Դրական: 3) Էլեկտրաչեզոք է:
2) Բացասական: 4) Կունենա տարբեր նշանի լիցքեր:

1973. Ի՞նչ ուժերով է պայմանավորված միջուկների կայունությունը:

1) Թույլ փոխազդեցության ուժերով:
2) Ուժեղ փոխազդեցության ուժերով:
3) Էլեկտրական ուժերով:
4) Մագնիսական ուժերով:

1974. Որքա՞ն է պրոտոնների Z և նեյտրոնների N թիվը ազոտի $^{14}_{7}N$ միջուկում:

1) $Z=6,\ N=14$: 3) $Z=7,\ N=7$:
2) $Z=6,\ N=8$: 4) $Z=14,\ N=6$:

1975. Պղնձի ատոմի միջուկը պարունակում է 29 պրոտոն և 35 նեյտրոն: Քանի՞ էլեկտրոն է պարունակում պղնձի Cu^{+2} իոնը:

1) 35: 3) 27:
2) 31: 4) 29:

1976. Քանի՞ էլեկտրոն է պարունակում ալյումինումի $^{27}_{13}Al$ չեզոք ատոմը:

1) 27: 3) 40:
2) 13: 4) 0:

1977. Ի՞նչ միջուկ կունենանք, եթե հելիումի $^{3}_{2}He$ իզոտոպի միջուկում բոլոր պրոտոնները փոխարինվեն նեյտրոններով, իսկ նեյտրոնները՝ պրոտոններով:

1) $^{2}_{3}He$: 3) $^{2}_{1}He$:
2) $^{3}_{1}H$: 4) $^{4}_{2}He$:

1978. Նկարում սխեմատիկորեն պատկերված են որոշ միջուկներ: Դրանցից որո՞նք են միևնույն տարրի իզոտոպներ:



1) ա-ն և բ-ն:
2) ա-ն և գ-ն:
3) բ-ն և գ-ն:

www.atc.am

4) Միևնույն տարրի իզոտոպներ չկան:

1979. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Միևնույն տարրի իզոտոպներն ունեն…

1) հավասար թվով նեյտրոններ:
2) հավասար թվով պրոտոններ:
3) հավասար թվով նուկլոններ:
4) հավասար զանգվածի թվեր:

1980. Ի՞նչ ուժեր են գործում ատոմի միջուկում պրոտոնների միջև:

1) Միայն էլեկտրամագնիսական:
2) Միայն միջուկային:
3) Միայն գրավիտացիոն և միջուկային:
4) Գրավիտացիոն, էլեկտրամագնիսական և միջուկային:

1981. Ատոմի միջուկի ո՞ր մասնիկների միջև են գործում միջուկային ուժերը.
ա. պրոտոն – պրոտոն,
բ. պրոտոն – նեյտրոն,
գ. նեյտրոն – նեյտրոն:

1) Միայն ա դեպքում:
2) Միայն բ դեպքում:
3) Միայն գ դեպքում:
4) Բոլոր դեպքերում:

1982. Ինչի՞ շնորհիվ ատոմի միջուկը չի տրոհվում առանձին նուկլոնների:

1) Նուկլոնների միջև գործող գրավիտացիոն ուժերի շնորհիվ:
2) Նուկլոնների միջև գործող թույլ փոխազդեցության ուժերի շնորհիվ:
3) Նուկլոնների միջև գործող կուլոնյան ուժերի շնորհիվ:
4) Նուկլոնների միջև գործող միջուկային ուժերի շնորհիվ:

1983. Մենդելեևի պարբերական աղյուսակում քիմիական տարրի կարգաթիվը ո՞ր մեծությանն է հավասար:

1) Միջուկում նուկլոնների թվին:
2) Միջուկում նեյտրոնների թվին:
3) Միջուկում պրոտոնների թվին:
4) Միջուկում պրոտոնների և նեյտրոնների թվին:

1984. $^{30}_{15}P$, $^{40}_{21}Sc$ **և** $^{190}_{82}Pb$ **միջուկներից ո՞րն է ավելի կայուն:**

1) $^{30}_{15}P$ միջուկը:
2) $^{40}_{21}Sc$ միջուկը:
3) $^{190}_{82}Pb$ միջուկը:
4) Բոլորն էլ միատեսակ կայուն են:

1985. Ստորև նշված միջուկային ռեակցիայում անջատվո՞ւմ է էներգիա, թե՞

www.atc.am

կլանվում (մասնիկների զանգվածները՝ արտահայտված ՄէՎ-երով):

$$^{14}_{7}N + {}^{1}_{0}n \rightarrow {}^{13}_{6}C + {}^{2}_{1}H$$

13039,97 ՄէՎ 939,57 ՄէՎ 12109,58 ՄէՎ 1875,58 ՄէՎ

1) Անջատվում է:
2) Կլանվում է:
3) Ո՛չ անջատվում է, ո՛չ կլանվում:
4) Բերված տվյալները բավարար չեն պատասխանի համար:

1986. Ի՞նչ մասնիկ է առաջանում $^{14}_{7}N+{}^{4}_{2}He\rightarrow{}^{17}_{8}O+?$ միջուկային ռեակցիայի հետևանքով:

1) Էլեկտրոն:
2) Պրոտոն:
3) Նեյտրոն:
4) α-մասնիկ:

1987. Ի՞նչ միջուկ է առաջանում $^{14}_{7}N+{}^{4}_{2}He\rightarrow ?+{}^{1}_{1}H$ ռեակցիայի հետևանքով, երբ ազոտի միջուկը ռմբակոծվում է α-մասնիկով:

1) $^{17}_{8}O$:
2) $^{16}_{8}O$:
3) $^{19}_{9}F$:
4) $^{20}_{10}Ne$:

1988. Ո՞րն է $^{9}_{4}\mathrm{Be}+\gamma\rightarrow X+{}^{1}_{0}\mathrm{n}$ միջուկային ռեակցիայի X անդամը:

1) $^{8}_{4}Be$:
2) $^{4}_{2}He$:
3) $^{9}_{4}Be$:
4) $^{11}_{5}B$:

1989. Ի՞նչ միջուկ է առաջանում $p+\alpha+\alpha=X$ ռեակցիայի հետևանքով:

1) $^{3}_{2}He$:
2) $^{9}_{5}B$:
3) $^{4}_{2}He$:
4) $^{1}_{1}H$:

1990. $^{27}_{13}Al$ և $^{12}_{6}C$ միջուկների միացման հետևանքով առաջանում են α-մասնիկ, նեյտրոն և նոր միջուկ: Որքա՞ն է նեյտրոնների թիվն այդ միջուկում:

1) 16:
2) 19:
3) 17:
4) 36:

1991. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Միջուկային ռեակցիան սկզբունքորեն հնարավոր չէ, եթե փոխվում է ...

1) պրոտոնների ընդհանուր թիվը:
2) ռեակցիայի մեջ մտնող մասնիկների ընդհանուր թիվը:

www.atc.am

3) ռեակցիայի մեջ մտնող նուկլոնների թիվը:
4) նեյտրոնների ընդհանուր թիվը:

1992. Քանի՞ նեյտրոն է անջատվում $^{92}_{42}Mo+^{2}_{1}H\rightarrow^{92}_{43}Te+x\cdot^{1}_{0}n$ ռեակցիայի հետևանքով:

1) 0: 3) 2:
2) 1: 4) 3:

1993. Ո՞ր միջուկային ռեակցիայի դեպքում է խախտվում զանգվածային թվի պահպանման օրենքը:

1) $^{232}_{90}Th+^{1}_{0}n\rightarrow^{229}_{88}Ra+^{4}_{2}He$: 3) $^{200}_{81}Tl+^{4}_{2}He\rightarrow^{112}_{44}Ru+2^{1}_{0}n$:
2) $^{102}_{40}Zr\rightarrow^{102}_{41}Nb+^{0}_{-1}e$: 4) $^{236}_{92}U+^{1}_{0}n\rightarrow^{97}_{40}Zr+^{139}_{52}Te+^{1}_{0}n$:

1994. Ո՞ր միջուկային ռեակցիան հնարավոր չէ, քանի որ խախտվում է լիցքի պահպանման օրենքը:

1) $^{232}_{90}Th+^{1}_{0}n\rightarrow^{229}_{88}Ra+^{4}_{2}He$: 3) $^{102}_{40}Zr\rightarrow^{102}_{41}Nb+^{0}_{+1}e$:
2) $^{200}_{81}Tl+^{4}_{2}He\rightarrow^{112}_{44}Ru+^{92}_{39}Y$: 4) $^{236}_{92}U+^{1}_{0}n\rightarrow^{97}_{40}Zr+^{137}_{52}Te+2^{1}_{0}n$:

1995. α-, β- և γ- ճառագայթումներից որո՞նք են շեղվում էլեկտրական և մագնիսական դաշտերում:

1) γ- ճառագայթումը: 3) α- և γ- ճառագայթումները:
2) α- և β- ճառագայթումները: 4) α, β և γ ճառագայթումները:

1996. Համասեռ մագնիսական դաշտում ճառագայթումը տրոհվում է երեք մասի՝ α-ճառագայթում, β-ճառագայթում, γ-ճառագայթում: Ո՞րն է α- ճառագայթումը:



1) a-ն:
2) b-ն:
3) c-ն:
4) Հնարավոր է լինի a-ն կամ c-ն:

1997. Ի՞նչ է α- ճառագայթումը:

1) Ջրածնի միջուկների հոսք: 3) Նեյտրոնների հոսք:
2) Հելիումի միջուկների հոսք: 4) Էլեկտրոնների հոսք:

1998. Ինչպե՞ս է փոխվում ռադիոակտիվ տարրի միջուկի կարգաթիվը, երբ այն առաքում է երկու α-մասնիկ:

1) Մեծանում է երկուսով: 3) Չի փոխվում:
2) Փոքրանում է երկուսով: 4) Փոքրանում է չորսով:

www.atc.am

1999. Թորիումի $^{234}_{90}Th$ միջուկը ենթարկվում է երեք α - տրոհման: Որոշել նեյտրոնների թիվն առաջացած միջուկում:

1) 234:
2) 228:
3) 144:
4) 138:

2000. Ի՞նչ միջուկի է փոխակերպվում ոսկու $^{179}_{79}Au$ միջուկը α - տրոհման հետևանքով:

1) $^{177}_{75}\mathrm{Re}$:
2) $^{175}_{77}Ir$:
3) $^{178}_{79}Au$:
4) $^{179}_{80}Hg$:

2001. Ի՞նչ է β -ճառագայթումը:

1) Ջրածնի միջուկների հոսք:
2) Հելիումի միջուկների հոսք:
3) Նեյտրոնների հոսք:
4) Էլեկտրոնների հոսք:

2002. Ի՞նչ միջուկի է փոխակերպվում $^{27}_{12}Mg$ -ի միջուկը մեկ β - տրոհման հետևանքով:

1) $^{23}_{10}Ne$:
2) $^{27}_{11}Na$:
3) $^{26}_{12}Mg$:
4) $^{27}_{13}Al$:

2003. Ինչպե՞ս է փոխվում պրոտոնների թիվն ատոմի միջուկում, երբ այն արձակում է երեք β -մասնիկ:

1) Մեծանում է երեքով:
2) Փոքրանում է երեքով:
3) Մեծանում է վեցով:
4) Փոքրանում է վեցով:

2004. Եթե միջուկը կազմված է 92 պրոտոնից և 144 նեյտրոնից, ապա երկու α - տրոհումից և մեկ β - տրոհումից առաջացած միջուկը քանի՞ նեյտրոն և քանի՞ պրոտոն կպարունակի:

1) 89 պրոտոն և 139 նեյտրոն:
2) 88 պրոտոն և 138 նեյտրոն:
3) 88 պրոտոն և 140 նեյտրոն:
4) 87 պրոտոն և 139 նեյտրոն:

2005. $^{238}_{92}U$ միջուկի ռադիոակտիվ տրոհման ընթացքում առաքվում են երեք α և երկու β մասնիկներ: Ի՞նչ միջուկ է առաջանում տրոհման հետևանքով:

1) $^{232}_{90}Th$:
2) $^{226}_{88}Ra$:
3) $^{224}_{87}Fr$:
4) $^{233}_{92}U$:

www.atc.am

2006. ${}^{A}_{Z}X$ **միջուկում տեղի է ունենում երկու** β **-տրոհում և առաքվում է երկու** γ **քվանտ: Ի՞նչ միջուկ է առաջանում:**

1) ${}^{A-2}_{Z}Y$:
2) ${}^{A-4}_{Z-2}Y$:
3) ${}^{A}_{Z+2}Y$:
4) ${}^{A}_{Z-2}Y$:

2007. Ո՞ր դեպքում է տեղի ունենում γ **-ճառագայթում:**

1) Երբ ատոմը գրգռված վիճակից անցնում է հիմնական վիճակի:
2) Երբ միջուկում նեյտրոնը փոխակերպվում է պրոտոնի:
3) Երբ միջուկում պրոտոնը փոխակերպվում է նեյտրոնի:
4) Երբ միջուկը գրգռված վիճակից անցնում է հիմնական վիճակի:

2008. Ինչպե՞ս է փոխվում ատոմի միջուկում նուկլոնների թիվը, երբ միջուկն առաքում է γ **քվանտ:**

1) Մեծանում է 2-ով:
2) Չի փոխվում:
3) Փոքրանում է 2-ով:
4) Փոքրանում է 4-ով:

2009. Ո՞ր ճառագայթումն ունի առավել ներթափանցման հատկություն:

1) α -ճառագայթումը:
2) β -ճառագայթումը:
3) γ -ճառագայթումը:
4) Ճառագայթման բոլոր տեսակներն էլ օժտված են ներթափանցման միատեսակ հատկությամբ:

2010. Ռադոնի կիսատրոհման պարբերությունը 3,8 օր է: Որքա՞ն ժամանակում ռադոնի զանգվածը կփոքրանա 64 անգամ:

1) 3,8 օրում:
2) 19 օրում:
3) 22,8 օրում:
4) 38 օրում:

2011. Ճառագայթաակտիվ տարրի կիսատրոհման պարբերությունը 1 րոպե է: Որքա՞ն ժամանակում կտրոհվի այդ նյութի սկզբնական միջուկների 3/4-ը:

1) 1 րոպե:
2) 2 րոպե:
3) 0,75 րոպե:
4) 0,25 րոպե:

2012. Ռադիումի կիսատրոհման պարբերությունը 1600 տարի է: Որքա՞ն ժամանակ անց չտրոհված միջուկների թիվը կկազմի սկզբնական ատոմների թվի 1/8-ը:

1) 4800 տարի անց:
2) 1600 տարի անց:
3) 1400 տարի անց:
4) 200 տարի անց:

www.atc.am

2013. Ճառագայթաակտիվ իզոտոպի կիսատրոհման պարբերությունը 10 րոպե է: Այդ իզոտոպի 10^6 միջուկներից քանի՞սը կտրոհվեն 20 րոպեում:

1) 10^6:
2) $5\cdot10^5$:
3) $7{,}5\cdot10^5$:
4) $25\cdot10^5$:

2014. Ճառագայթաակտիվ տարրերից մեկի կիսատրոհման պարբերությունը T է, իսկ մյուսինը՝ $2T$: Ժամանակի սկզբնական պահին այդ տարրերի միջուկների թիվը նույնն է: Որքա՞ն է առաջին տարրի չտրոհված միջուկների հարաբերությունը երկրորդ տարրի չտրոհված միջուկների թվին T ժամանակ անց:

1) 2:
2) $\sqrt{2}$:
3) $\frac{\sqrt{2}}{2}$:
4) $\frac{1}{2}$:

2015. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ջերմամիջուկային ռեակցիան...

1) ծանր միջուկների տրոհման ռեակցիան է:
2) միշտ ընթանում է էներգիայի կլանմամբ:
3) թեթև միջուկների սինթեզի ռեակցիան է:
4) ընթանում է միայն արհեստականորեն ստեղծված պայմաններում:

2016. Ինչպե՞ս է փոխվում դեյտերիումի երկու ^2_1H միջուկների լրիվ էներգիան, երբ դրանք միավորվելով կազմում են հելիումի ^4_2He միջուկ:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Կախված դրանց սկզբնական հեռավորությունից՝ կմեծանա կամ կփոքրանա:

2017. Ազոտի $^{14}_7N$ իզոտոպը նեյտրոններով ռմբակոծելիս առաջանում է բորի $^{11}_5B$ իզոտոպը: Ի՞նչ այլ մասնիկներ են առաջանում այդ ռեակցիայի հետևանքում:

1) 2 պրոտոն:
2) α-մասնիկ:
3) Նեյտրոն:
4) Էլեկտրոն:

2018. Հելիումի երկու ^4_2He միջուկների սինթեզի հետևանքում անջատվեց մեկ

www.atc.am

պրոտոն: Ի՞նչ տարրի միջուկ առաջացավ հետևանքում:

1) $^{8}_{3}Li$:
2) $^{7}_{3}Li$:
3) $^{7}_{4}Be$:
4) $^{6}_{4}Be$:

2019. Ինչպե՞ս է փոխվում ազատ պրոտոններից և նեյտրոններից կազմված համակարգի ընդհանուր զանգվածը, երբ դրանք, միանալով, կազմում են ատոմի միջուկ:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

2020. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Շղթայական ռեակցիայի ժամանակ ուրանի միջուկի տրոհման ժամանակ միջուկից անպայման դուրս են թռչում…

1) Նեյտրոններ:
2) Պրոտոններ:
3) α -մասնիկներ:
4) β -մասնիկներ:

2021. Ո՞ր պայմանն է անհրաժեշտ ուրանի միջուկների տրոհման շղթայական ռեակցիա իրականացնելու համար.

ա. յուրաքանչյուր տրոհման ժամանակ 2-3 նեյտրոնի անջատում,

բ. ուրանի բավարար զանգվածի առկայություն,

գ. բարձր ջերմաստիճան:

1) Միայն ա-ն:
2) Միայն բ-ն:
3) Միայն գ-ն:
4) ա-ն և բ-ն:

2022. Ո՞ր եռյակում են բոլոր մասնիկները տարրական:

1) Ատոմ, էլեկտրոն, պրոտոն:
2) Էլեկտրոն, նեյտրինո, ֆոտոն:
3) Ատոմ, պրոտոն, նեյտրոն:
4) α -մասնիկ, էլեկտրոն, պոզիտրոն:

2023. Տարրական մասնիկների ո՞ր խմբերին են պատկանում π^0 մեզոնը և μ^+ մյուոնը:

1) π^0-ն հադրոնների, μ^+-ը՝ լեպտոնների:
2) π^0-ն մեզոնների, μ^+-ը հադրոնների:
3) Երկուսն էլ մեզոնների:
4) Երկուսն էլ հադրոնների:

2024. Ի՞նչ դասերի են բաժանվում հադրոնները:

1) Լեպտոնների և մեզոնների:
2) Մեզոնների և բարիոնների:
3) Ֆոտոնների և բարիոնների:

www.atc.am

2) Լեպտոնների և նուկլոնների: 4) Մեզոնների և բարիոնների:

2025. Որքա՞ն էներգիա կանջատվի դադարի վիճակում էլեկտրոնի և պոզիտրոնի անիհիլացիայի ժամանակ: Էլեկտրոնի զանգվածը m_e է:

1) $m_e c$: 3) $2m_e c$:

2) $m_e c^2$: 4) $2m_e c^2$:

2026. Ո՞ր տարրական մասնիկն է ազատ վիճակում անկայուն, այսինքն՝ ինքնակամ փոխարկվում է այլ մասնիկների:

1) Էլեկտրոնը: 3) Նեյտրոնը:

2) Պրոտոնը: 4) Ֆոտոնը:

2027. Որքա՞ն է նեյտրոնի լիցքը:

1) $-1{,}6 \cdot 10^{-19}$ Կլ: 3) $1{,}6 \cdot 10^{-19}$ Կլ:

2) 1 Կլ: 4) 0:

2028. Ո՞ր եռյակի բոլոր մասնիկներն են լեպտոններ:

1) Նեյտրոն, պրոտոն, էլեկտրոն: 3) Էլեկտրոն, նեյտրինո, մյուոն:

2) Նեյտրոն, ֆոտոն, մյուոն: 4) Նեյտրինո, նեյտրոն, ֆոտոն:

2029. Ո՞ր մասնիկի հակամասնիկն է պոզիտրոնը:

1) Էլեկտրոնի: 3) Նեյտրոնի:

2) Պրոտոնի: 4) Նեյտրինոյի:

2030. Ի՞նչ մասնիկներից է կազմված նեյտրոնը:

1) Նեյտրոնը տարրական մասնիկ է և կազմված չէ այլ մասնիկներից:

2) Պոզիտրոնից և նեյտրինոյից:

3) Պոզիտրոնից և էլեկտրոնից:

4) Քվարկներից:

2031. Ի՞նչ լիցք ունեն քվարկները:

1) «u» քվարկը՝ $\frac{2}{3}e$, «d» քվարկը՝ $-\frac{1}{3}e$, «s» քվարկը՝ $-\frac{1}{3}e$:

2) «u» քվարկը՝ $\frac{2}{3}e$, «d» քվարկը՝ $-\frac{1}{3}e$, «s» քվարկը՝ $\frac{1}{3}e$:

3) «u» քվարկը՝ $-\frac{1}{3}e$, «d» քվարկը՝ $\frac{2}{3}e$, «s» քվարկը՝ $\frac{2}{3}e$:

4) «u» քվարկը՝ $\frac{1}{3}e$, «d» քվարկը՝ $\frac{2}{3}e$, «s» քվարկը՝ $-\frac{1}{3}e$:

www.aic.am

13.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2032. Որքա՞ն է 600 նմ ալիքի երկարությամբ լույսի ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{20}-ով:

2033. 10^{-10} մ ալիքի երկարությամբ ռենտգենյան ճառագայթման ֆոտոնի էներգիան քանի՞ անգամ է մեծ $4\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ տեսանելի լույսի ֆոտոնի էներգիայից:

2034. Որոշել այն միջավայրի բեկման ցուցիչը, որտեղ $3,3\cdot10^{-19}$ Ջ էներգիայով ֆոտոնի ալիքի երկարությունը $3\cdot10^{-7}$ մ է:

2035. Որքա՞ն է ֆոտոնի ալիքի երկարությունը, եթե նրա էներգիան հավասար է 5Վ լարմամբ արագացված էլեկտրոնի կինետիկ էներգիային: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:

2036. Որքա՞ն է ֆոտոնի հաճախությունը, եթե նրա իմպուլսը հավասար է $1,1\cdot10^{6}$ մ/վ արագությամբ շարժվող էլեկտրոնի իմպուլսին: Էլեկտրոնը համարել ոչ ռելյատիվիստական: Պատասխանը բազմապատկել 10^{-16}-ով:

2037. Որքա՞ն է $5\cdot10^{14}$ Հց հաճախությամբ ֆոտոնի իմպուլսը: Պատասխանը բազմապատկել 10^{28}-ով:

2038. 200 Վտ հզորությամբ մեներանգ լույսի աղբյուրը 1վ-ում ճառագայթում է $5\cdot10^{20}$ ֆոտոն: Որքա՞ն է ճառագայթման ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^{9}-ով:

2039. Որքա՞ն է լամպի հզորությունը, եթե այն 1վ-ում առաքում է $6,6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ 10^{20} ֆոտոն:

2040. Քանի՞ ֆոտոն է արձակում 1 վ-ում 100 Վտ հզորությամբ լամպը, եթե նրա ճառագայթած մեներանգ լույսի ալիքի երկարությունը $6\cdot10^{-7}$ մ է, և լույսի տեսքով ճառագայթվում է լամպի հզորության 3,3 % -ը: Պատասխանը բազմապատկել 10^{-18}-ով:

2041. Որքա՞ն է տեսանելի ճառագայթման ամենաերկար $\lambda = 7,5\cdot10^{-7}$ մ ալիքին (կարմիր լույս) համապատասխանող ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{21}-ով:

www.atc.am

2042. Մետաղից, որի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը $3,2\cdot10^{-19}$ Ջ է, ֆոտոնը պոկում է $3,8\cdot10^{-19}$ Ջ առավելագույն կինետիկ էներգիայով էլեկտրոն: Որքա՞ն է ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{19}-ով:

